# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 21 (1721) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆԻՍ 6, 2015
VOLUME 35, NO. 21 (1721) SATURDAY, JUNE 6, 2015

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Հայաստան Կը Շարունակէ Աջակցիլ Սուրիահայերուն

Յունիս 3-ին, ԵԱՀԿ գործող նախագահի հետ կայացած համատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին ՀՀ արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեան յայտարարեց որ, Հայաստանի իշխանութիւնները ըրած են եւ կը շարունակեն ընել ամէն բան՝ սուրիահայերուն աջակցելու համար:

Անդրադառնալով վերջերս իր՝ Սուրիա կատարած այցելութեան մասին, Նալբանդեան ըսաւ, որ այդ այցի գլխաւոր նպատակը եղած է Սուրիոյ հայերու անվտանգութեան հարցը: «Մենք ուշադիր հետեւում ենք իրադարձութիւնների զարգացմանը եւ փորձում ելք գտնել սիրիահայերի անվտանգութեան ապահովման տեսանկիւնից: Իմ այցն ուղղուած էր գործընթացներին ծանօթանալուն»,- տեղեկացուց Նալբանդեան:

Հայաստանի ԱԳ նախարարի համոզմամբ, ճգնաժամը կարելի է լուծել ռազմական գործողութիւնները անյապաղ դադրեցնելու, քաղաքական ուժերու միջեւ երկխօսութեան, փոքրամասնութիւններու, անոնց շարքին հայերու, իրաւունքները յարգելու, ահաբեկչութեան դէմ միատեղ պայքար մղելու ճանապարհով:

«Դուք գիտէք, որ Հայաստանի մէջ հազարաւոր սուրիահայեր կան: ՀՀ ղեկավարութիւնը անում եւ անելու է ամէն բան մեր սիրիահայ եղբայրներին աջակցելու համար»,- ըսաւ նախարարը՝ աւելցնելով, որ շատ կարեւոր էր հանդիպիլ տեղի հայ համայնքին հետ, քննարկել անոնց խնդիրները, կրկին ընդգծել, որ Հայաստանը կ՚աջակցի իրենց:

## Դաչիչ. «ԵԱՀԿ-ն Շահագրգռուած է Հարաւային Կովկասի Կայունութեամբ»



Սերժ Սարգսեանի եւ Իվիցա Դաչիչի միջեւ կայացած հանդիպման ընթացքին

ԵԱՀԿ-ն շահագրգռուած է Հարաւային Կովկասի տարածաշրջանէն ներս կայունութեան պահպանմամբ: Յունիսի 3-ին, ՀՀ ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանի հետ համատեղ մամուլի ասուլիս ժամանակ յայտարարեց ԵԱՀԿ գործող նախագահ, Սերպիայի ԱԳ նախարար Իվիցա Դաչիչ:

«Հայաստանը բարեկամ երկիր է Սերպիայի համար: Մենք կը փափաքինք զարգացնել երկկողմ յարաբերութիւնները»,- յայտարարած Դաչիչ: Ան աւելցուց որ, յարաբերութիւնները պէտք է զարգացնել ինչպէս քաղաքական երկխօսութեան, այնպէս ալ իրաւապայմանագրային դաշտի ընդլայնման, միջխորհրդարանական կապերու, տնտեսութեան տարբեր ուղղութիւններու տեսանկիւնէն:

Խօսելով ԵԱՀԿ գործունէութեան մասին, Իվիցա Դաչիչ յիշեցուց է, որ կազմակերպութիւնը կը միաւորէ 57 երկիրներ, եւ որոշումները կ՚ընդունուին համախմբութեամբ: «Նկատի առնելով այս պարագան, պէտք է համբերութիւն ունենալ այն հարցերով, որոնց վերաբերեալ տարաձայնութիւններ ունինք»:

Դաչիչ շեշտեց, որ ԵԱՀԿ-ն շահագրգռուած է տարածաշրջանի կայունութեան պահպանմամբ եւ տարածաշրջանային երկիրներու միջեւ վստահութեան ամրապնդմամբ: Միաժամանակ, ան իր աջակցութիւն յայտնեց ԵԱՀԿ Մինսկի Խումբին, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման միջնորդն է:

Իվիցա Դաչիչ ուրախութեամբ արձանագրեց, որ Հայաստանի եւ ԵԱՀԿ-ի միջեւ յարաբերութիւններու բարձր մակարդակը, ինչ որ շատ կարեւոր է երկրէն ներս բարեփոխումներու շարունականութեան տեսանկիւնէն:

Միւս կողմէ, Սերժ Սարգսեանի եւ Իվիցա Դաչիչի միջեւ կայացած հանդիպման ընթացքին կողմերը անդրադարձած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան եւ ԵԱՀԿ Մինսկի Խումբի միջնորդական ջանքերուն եւ մարտահրաւէրներուն:

«ՀՀ Նախագահն ընդգծել է, որ Հայաստանը շարունակելու է համագործակցութիւնը Մինսկի Խմբի հետ՝ ձգտելով հիմնախնդրի կարգաւորման՝ այն սկզբունքների ներքոյ, որոնք առաջարկել է Մինսկի Խումբը՝ միջազգային իրաւունքի սկզբունքների եւ նորմերի, ՄԱԿ-ի

Շար.ը էջ 4

## Չեխիայի ՍԴ ղեկավար. «Թուրքիան Պէտք է Հետեւի Գերմանիոյ Օրինակին»

Չեխիայի Սահմանադրական դատարանի նախագահ Պաւել Ռիխետսկիի գլխաւորած պատուիրակութիւնը Յունիսի 3-ին այցելած է Հայոց Ցեղասպանութեան զոհերու Ծիծեռնակաբերդ յուշահամալիր: Չեխական պատուիրակութիւնը եղած է նաեւ Ցեղասպանութեան Թանգարան եւ ծաղիկներ դրած է 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան անմեղ զոհերու յիշատակին:



Չեխիայի Սահմանադրական դատարանի նախագահ Պաւել Ռիխետսկի

Պատասխանելով Թուրքիոյ ժխտողական քաղաքականութեան մասին հարցին, Պաւել Ռիխետսկի ըսած է որ, Թուրքիոյ մէջ տեղի ունեցող բազմաթիւ գործընթացներ կը խախտեն ժողովրդավարութեան սկզբունքները՝ նոյնիսկ այս օրերուն եւ առանց արդար դատավարութեան մարդիկ բանտերու մէջ կը պահուին եւ լրագրողներ կը ձերբակալուին:

«Անձամբ ես չեմ հասկանար, թէ ինչու ամբողջ դարու մը ընթացքին Թուրքիան չարձագանքեր այդ իրավիճակին: Արդէն սերունդները փոխուած են, սակայն Թուրքիոյ վերաբերմունքը նոյնը մնացած է: Թուրքիան պէտք է օրինակ վերցնէ Գերմանիայէն, որ կարողացաւ Երկրորդ աշխարհամարտէն յետոյ ընդունիլ սեփական պատմութիւնը ու դասեր քաղել»,- ըսած է Չեխիային Սամանադրական Դատարանի Նախագահ Պաւել Ռիխետսկին:

Պաւել Ռիխետսկի Հայաստան ժամանած է ՀՀ Սահմանադրական Դատարաի Նախագահ Գագիկ Յարութիւնեանի հրաւէրով:


ՅՈՒՇԱՏՕՆ

Նուիրուած
Հայ Ազգի Քսան Հնչակեան Անմահներու
Նահատակութեան 100-րդ Տարելիցին

Կիրակի Յունիս 14, 2015

Կլէնտէյլի Ալէքս Թատերասրահէն ներս
216 N. Brand Blvd. Glendale, CA 91203 Կ.Ե. ժամը 5:30-ին
Ձեր տեղերը ապահովելու համար հեռաձայնել

Մուտքը Ազատ

818.391.7938

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Մինչեւ ուր կը հասնեն հայկական տանկերը

ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԵԱՆ

Բաքւում եւրոպական օլիմպ-իադայի նախօրէին Ատրպէյճանը տանկային զօրավարժութիւններ է անցկացնում: Վերջերս ռուսական քաղաքական շրջանակներում շատ է խօսւում այն մասին, որ օլիմպ-իադայից յետոյ իրավիճակը տարածաշրջանում կարող է լարուել, եւ ատրպէյճանական կողմն այս անգամ կարող է կիրառել տանկեր:

Ատրպէյճանը աստիճանաբար բարձրացնում է զէնքի «մակարդակը». Լարուածութեան նախորդ փուլում կիրառուել է հրետանի, եւ այժմ խօսւում է տանկերի մասին: Ռուս յայտնի ռազմական փորձագէտ Պաւել Ֆելգենգաուերն ասում է, որ Ռուսաստանին ձեռնտու չէ լարուածութիւնը, սակայն Մոսկուան չունի անհրաժեշտ ուժ ու ազդեցութիւն ռազմական գործողութիւնները կանխելու համար:

Արդեօք այդպէս է, եւ Ատրպէյճանի զէնքի հիմնական մատակարար Ռուսաստանն իսկապէս չի կարող կանխել ռազմական գործողութիւնները: Այդ դէպքում, ո՞ւմ են ձեռնտու դրանք:

Այս իրադարձութիւնների քաղաքական ֆոնը բաւական հետաքրքիր է: Մոսկուան եւ Բաքուն բանակցութիւնների օրակարգ են բերել Եւրասիական Տնտեսական Միութեանը Ատրպէյճանի այս կամ այն կերպ ինտեգրուելու հարցը: Ատրպէյճանը յայտարարում է, որ այդ միութիւնն իր բնական միջավայրն է եւ դէմ չէ անդամակցելուն, սակայն միայն Ղարաբաղի խնդրի լուծման դէպքում:

Միեւնոյն ժամանակ, սրուել են Ատրպէյճանի եւ Արեւմուտքի միջեւ յարաբերութիւնները: Արեւմուտքը չի աջակցում Ղարաբաղի հարցում Ատրպէյճանի պահանջներին ու յաւակնութիւններին եւ յայտարարում է Մինսկի խմբի շրջանակում հարցը կարգավորելու, այսինքն՝ ստատուս-քուօն պահպանելու օգտին:

Միւս կողմից, Ատրպէյճանը ներկայում այն վիճակում չէ, որ Մոսկուան խոշոր զիջումներ անի նրան: Եւրասիական Միութեանն անդամակցելու հարցում Մոսկուան կարող է գնալ այլ ճանապարհով, քան զիջումներն են՝ ռազմական ակտիւ գործողութիւններ, որի դէպքում Ատրպէյճանը պարտութիւն կը կրի, եթէ Մոսկուան նրան չ'օգնի: Այս սխեման ռուսներն Ատրպէյճանին «ցուցադրել են» ղարաբաղեան առաջին պատերազմի ժամանակ, որտեղ Ատրպէյճանը պարտութիւններ սկսեց կրել այն բանից յետոյ, երբ Մոսկուան դադարեց աջակցել նրան, այսինքն՝ զօրքը հանեց Ղարաբաղից: Ատրպէյճանի ռազմական յաջողութիւնները Ղարաբաղում իրականում ռուսական բանակի յաջողութիւնն էին, որը պատժիչ արշաւանքներ էր իրականացնում հայերի դէմ:

Այն ժամանակ Ատրպէյճանը փլուզումից փրկուեց միայն Մոսկուայի միջամտութիւնից յետոյ, եւ կնքուեց զինադադարի համաձայնագիրը:

Նոյն սխեման կարող է կրկնուել նաեւ ներկայում, որի արդիւնքում Ատրպէյճանը կը շարժուի Մոսկուայի պայմաններով, այդ թւում՝ Ղարաբաղում ռուսական զօրքի տեղակայումը: Սա իհարկէ տարբերակներից մէկն է, եւ չի բացառւում, որ բոլոր խօսակցութիւնները ռազմական ակտիւ գործողութիւնների մասին բխում են այս հանգամանքից:

Ի՞նչ է անում հայկական կողմը: Դատելով ռազմական ղեկավարութեան յայտարարութիւններից ու քայլերից, ակտիւօրէն պատրաստւում է հնարավոր գործողութիւններին: Հայկական բանակը սկսում է հրամանատարական զօրավարժութիւններ ոստիկանութեան եւ ԱԻՆ ուժերի հետ համատեղ: Զօրավարժութիւններին մասնակցելու են նաեւ տանկեր:

Հայաստանի պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ Դաւիթ Տոնոյեանը յայտարարել է, որ ներկայիս «անվտանգութեան գօտին» չի բաւարարում հայկական կողմին, եւ ռազմական գործողութիւնների դէպքում հնարաւոր են դիրքերի փոփոխութիւններ: Արդեօք սա նշանակում է առաջխաղացում, թէ «նահանջ»:

**Եւրասիական Միութեանն անդամակցելու հարցում Մոսկուան կարող է գնալ այլ ճանապարհով, քան զիջումներն են՝ ռազմական ակտիւ գործողութիւններ, որի դէպքում Ատրպէյճանը պարտութիւն կը կրի**

Դաւիթ Տոնոյեանն օրերս այցելել է նաեւ Իրան, որտեղ հանդիպում է ունեցել իրանական ռազմական բարձրագոյն ղեկավարութեան հետ, եւ ամենաուշագրաւը՝ այցելել է Էթկա ընկերութիւն, որը զբաղւում է թիկունքի մատակարարումներով:

Արդեօք իսկապէս Բաքուի օլիմպիադայից յետոյ հնարաւոր է ռազմական գործողութիւնների վերսկսումը: Մէկ տարի առաջ, Օգոստոսին, հայկական բանակը հետ մղեց ատրպէյճանական բանակի յարձակումները, փոփոխութիւններ չկատարելով «անվտանգութեան գօտում»:

Մէկ տարի անց իրավիճակը փոքր ինչ այլ է, քանի որ Հայաստանն արդէն ԵՏՄ անդամ է, ինչը որոշ չափով սահմանափակում է հայկական կողմի ռազմա-քաղաքական ինքնուրոյնութիւնը:

Սակայն, ստեղծուած իրավիճակում կայ մի դրական հանգամանք՝ հայկական կողմը որեւէ տեղից օգնութեան յոյս չունի: Նման դէպքերում, հայերը յաղթանակներ են տանում: Եւ եթէ ռազմական գործողութիւններն իսկապէս վերսկսուեն, հայկական բանակը պէտք է այս անգամ ինքը որոշի՝ մինչեւ ուր կը հասնեն տանկերը:

«ՀԱՅԵԼԻ»

# Գագիկ Ծառուկեանի սպիտակն ու Սերժ Սարգսեանի սեւը

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

Սերժ Սարգսեանն մասնակցել է «Հայաստան» կինոթատրոնի բացմանը: Մասնակցութիւնը երեւի թէ հասարակական ուշադրութեան չէր արժանանայ, եթէ Սարգսեանին այդ բացմանը անմիջապէս չընկերակցէր նա, ում Սերժ Սարգսեանը Փետրուարեան յայտնի ելոյթի ժամանակ, մեղմ ասած, գամել էր անարգանքի սիւնին: Խօսքը Գագիկ Ծառուկեանի մասին է, որի վերաբերեալ Սերժ Սարգսեանի կոշտ ելոյթը դեռեւս շարունակում է հասարակական յիշողութեան մէջ մնալ:

Սերժ Սարգսեանը խօսելով Ծառուկեանին քաղաքականութիւնից հեռացնելու մասին՝ յայտարարում էր, որ ինքն էր արգելել նրա մականունը յիշեցնել: Նաեւ յայտարարում էր, որ նա պէտք է հեռանայ քաղաքականութիւնից, քանի որ մենք «կրկեսի վերածելու հայրենիք չունենք»:

Այսօր Ծառուկեանն ու Սարգսեանը միասին կինոթատրոնի բացմանն են մասնակցում, զուարճանում միասին: Միայն թէ հարց է՝ Սերժ Սարգսեա՞նն է վերանայել հայրենիքի եւ կրկեսի հաշուով իր մօտեցումները, թէ՞ Գագիկ Ծառուկեանն է իր մօտեցումները վերանայել Սերժ Սարգսեանի եւ ՀՀԿ-ի մասով: Սակայն դա կարեւոր էլ չէ: Կարեւորն այն մեսիջներն են, որ այսօր ստանում է հասարակութիւնն այս երկու գործիչների գործողութիւնների, համատեղ զուարճանքների արդիւնքում: Այդ մեսիջները ուսանելի մեսիջներ են եւ հասարակութեան համար հերթական անգամ ակնառու են դարձնում այն, թէ ինչ ասել է ժամանակակից հայկական տնտեսական եւ քաղաքական «էլիտա»:

Ըստ որում, շատ խորհրդանշական է այն, որ Սարգսեանն ու Ծառուկեանը կանգնած են սեւով եւ սպիտակով, որովհետեւ շախմատային լեզուով ասած՝ հայաստանեան այդ «էլիտան» ունակ է միայն փոխատեղումների, առաւելագոյնը, որից հասարակութեան եւ պետութեան վիճակը որեւէ փոփոխութեան ենթարկուել անզօր է:

Եւ Հայաստանում արդէն երկու տասնամեակ հենց միայն փոխատեղումներ են եղել՝ իշխանութիւնից ոչ իշխանութիւն սկզբունքով, որովհետեւ հայաստանեան քաղաքական դաշտի եւ իշխանական համակարգի համար սկզբունքները եւ գաղափարները, արժէքներն ու արժանապատուութիւնն աւելորդ բեռ են: Այս պարբերական սեւի ու սպիտակի հմուտ խաղով կառավարուել է եւ կառավարւում է Հայաստանի հասարակութիւնը, ու գրեթէ ոչնչացման եզրին է հասնում Հայաստանի անկախ պետականութիւնը:

Շատ դժուար է ասել, թէ ով է ում ներել՝ Սարգսեա՞նը Ծառուկեանին, որի վրայ Փետրուարին բաց էր թողել ագրեսիւ ՀՀԿ-ականներին, թէ՞ Ծառուկեանը Սարգսեանին, որի վրայ Փետրուարին բաց էր թողել իր ագրեսիւ քարոզչամեքենան:

Միւս կողմից, ի հարկէ, ամէն ինչ չափից դուրս ազնիւ է եւ անկեղծ: Վերջիվերջոյ Սերժ Սարգսեանը Փետրուարին յայտարարում էր, որ Ծառուկեանի հետ որեւէ խնդիր չունի՝ խնդիրը նրա քաղաքականութեան մէջ լինելն է: Եւ ահա Ծառուկեանը դուրս է քաղաքականութիւնից եւ հետեւաբար իր կայուն տեղն ունի Սերժ Սարգսեանի կողքին: Այնպէս որ՝ ոչ մի զարմանալի բան չկայ: Եթէ զարմանալու բան կար, ապա այն էր, ինչ տեղի էր ունենում մինչեւ Փետրուարը: Թէեւ այն, ինչ տեղի է ունենում Փետրուարից յետոյ, առաւել եւս վերացնում է նախափետրուարեան բոլոր զարմանքները:

Այնուամենայնիւ, պէտք է նկատի առնել, որ ի տարբերութիւն «կարկառուն քաղաքական գործիչների», ինչի մասին արդէն մի քանի անգամ խօսել է Գագիկ Ծառուկեանը հեգնանքով, Սերժ Սարգսեանն ու Գագիկ Ծառուկեանն իսկապէս ինչ-որ բանից գոնէ փրկեցին Հայաստանի հասարակութեանը կամ գոնէ մի մասին՝ փրկեցին պատրանքներից:

«ԺԱՄԱՆԱԿ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին**

T: (626) 797-7680
F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Հիմնադրուեց «Քաղաքացիական Պայմանագիրը» կուսակցութիւնը

«Քաղաքացիական Պայմանագիր» միաւորումն Մայիսի 30-ին, յայտարարեց կուսակցութիւն հիմնադրելու մասին: Այս մասին «Քաղաքացիական համաձայնագրի» հիմնադիր համագումարին ասաց կառավարման խորհրդի անդամ, ԱԺ ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեանը:

«Մենք ոչ թէ միանգամից ասում ենք, որ գնում ենք իշխանափոխութեան, նախ ցանկանում ենք խորապէս հասկանալ, թէ ինչու են մինչեւ հիմա ձախողուել իշխանափոխութեան բոլոր փորձերը: Դա հասկանալուց յետոյ ենք մենք գնալու դէպի իշխանափոխութիւն: Երկրում փոփոխութիւններ անելու համար նախ եւ առաջ պէտք է ինստիտուցիոնալ ընդդիմութիւն ստեղծել: Հենց սա էլ մենք անելու ենք»,- ասաց Նիկոլ Փաշինեանը:



ԱԺ ՀԱԿ խմբակցութեան պատգամաւոր Նիկոլ Փաշինեան

Նա նշեց, որ կուսակցութիւնը պատրաստւում է մասնակցել պետական իշխանութեան, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւններին:

«Ընտրութիւններին մենք ստանալու ենք քուէների մեծամասնութիւնը եւ դառնալու երկրի նախագահը ոչ թէ աթոռի համար, այլ երկրում էական փոփոխութիւններ կատարելու, առաջիկայ քսան տարիներին բնակչութեան թիւը կրկնակի մեծացնելու, տնտեսական աճ ապահովելու համար»,- իր ելոյթում ասաց ընդդիմադիր պատգամաւորը:

Փաշինեանն ընդգծեց, որ իրենց ռազմավարական ծրագրի իրականացումը պահանջում է աննախադէպ համախմբում: Հետեւաբար, պատգամաւորը ամբողջ հայութեանը յորդորեց միանալ իրենց եւ միասին պայքարել:

«Մեր կառոյցում անձնակենտրոն որոշումներ չեն կայացւում: Այստեղ ամենակարեւոր առանձնայատկութիւններից է սուպերլիդերութեան գործօնի բացառումը, պէտք է կառավարուի կոլեգիալ սկզբունքով»,- յաւելեց նա:

## Երեւանի Կենտրոնական Փողոցներում Տասնեակ խանութներ Փակել են դռները

Վիճակագրական վարչութիւնը առաջին եռամսեակի պաշտօնական արդիւնքներով արձանագրել է տնտեսական ակտիւութեան եւ համախառն ներքին արդիւնքի աւելի քան երկու տոկոս աճ, այն դէպքում երբ կրճատուել է առեւտրաշրջանառութիւնն ու էլեկտրաէներգիայի արտադրութիւնը, պակասել են ներմուծումն ու արտահանումը, աւելացել է գործազրկութիւնը: Արձանագրուած աճը, ըստ տնտեսագէտ Վահագն Խաչատրեանի, հիմնականում հանքարդիւնաբերութեան շնորհիւ է ստացուել, այնուամենայնիւ, հրապարակուած թուերի համադրութիւնը աբսուրդային է:

«Մի տեղ գործազրկութիւն, ներդրումների նուազում, մի տեղ սպառման ծաւալների նուազում, էլեկտրաէներգիայի նուազում, միւս կողմից էլ տեսնում ենք արդիւնաբերութեան աճ, բայց դե սա երեւի հայաստանեան իրականութիւն է. տնտեսագիտօրէն ստեղծուած իրավիճակը անբացատրելի է: Կարող ենք ասել հայաստանեան ֆենոմէն կամ յայտնի աճպարար Յակոբ Յակոբեանի ձեռքերի կամ գործողութիւնների արդիւնք», - ասաց տնտեսագէտը:

Կենտրոնական փողոցներում տասնեակ խանութներ, սրճարաններ կողպել են դռները: Քաղաքացիները բիզնեսը շարունակելու մտքից հրաժարուել են, վաճառում կամ վարձով են տալիս տարածքը: Հարցազրոյց տալ նրանք հրաժարւում են: Խօսում է միայն հագուստի խանութ ունեցող Մարտինը, ով ֆինանսական խնդիրների պատճառով այժմ աւելի էժան տարածք է փնտռում: Ասում է՝ տնտեսական վատ վիճակը իրենց մաշկի վրայ են զգում. - «Կարծում եմ, նոյնիսկ մեծ առեւտրի կենտրոններում առեւտուրը քչացել է»:

Արտահանողների միութեան նախագահ, գործարար Րաֆֆի Միքայէլեանն ասում է, որ իրականութիւնը պաշտօնական վիճակագրութիւնից աւելի մռայլ է: Հիմնական պատճառներից մէկը `ոչ միայն Ռուսաստանի տնտեսութեան անկումն է, այլ նաեւ Հայաստանի ոչ հրապուրիչ պայմանները ներդրումների համար:

«Արդեօ՞ք ապահովուած է իր ներդրումը, արդեօ՞ք վաղը, միւս օրը ինչ որ մէկը չի գայ, չի ասի՝ ընկեր էս ինչ էս դրել էստեղ, սրա մի մասը իմն է: Այս է խնդիրը», - ասաց գործարարը:

Միքայէլեանի խօսքով, թէեւ սփիւռքահայ ներդրողները յաճախ պատրաստ են աչք փակել ամէն ինչի վրայ հայրենիքում գործ դնելու համար, սակայն այժմ անգամ նրանք են խուսափում գումարը Հայաստան բերել: Հիմնական պատճառը, ըստ Միքայէլեանի, անարդար մրցակցութիւնն է:

Միքայէլեանն ասում է՝ Հայաստանում կարճ ժամանակահատուածում կարելի է փոփոխութիւնների հասնել, եթէ կամք լինի. - «Մի քիչ հանգիստ թողէք մեզի աշխատենք, եթէ թողեն, բոլորն էլ կը գան բոլորն էլ կաշխատեն էս երկիրը կը շէնացնեն էս երկիրը շատ կարճ ժամանակում կարելի է սարքել դրախտ, հաւատացէք ինձ, որովհետեւ ինքը փոքր է՝ եւ տարածքով, եւ բնակչութեամբ, շատ շուտ ստեղ իրավիճակ կարող է փոխուի: Եթէ ընդամէնը ցանկութիւն լինի, մի քանի տարուայ մէջ սա կը դառնայ Սինգապուր»:

Տնտեսագէտ Վահագն Խաչատրեանը եւս լուծումը ոչ թէ տնտեսական, այլ քաղաքական դաշտում է տեսնում. - «Եթէ ուզում ենք ներդրումային դաշտում հաւասար պայմաններ ապահովենք եւ վստահութեան մթնոլորտ ստեղծենք, քաղաքական քայլեր են պէտք, որը, ցաւոք սրտի, մեր այսօրուայ իրավիճակում չկայ»:

## Սերժ Սարգսեանն Ու Գագիկ Ծառուկեանը Միասին Ներկայ Են Եղել «Հայաստան» Կինոթատրոնի Բացման




Սերժ Սարգսեան եւ Գագիկ Ծառուկեան կինոթատրոնի բացման ընթացքին

ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան Յունիսի 1-ին, ներկայ է գտնուել մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում «Հայաստան» կինոթատրոնի բացման արարողութեանը: Շրջայցի ընթացքում Հանրապետութեան նախագահը ծանօթացել է 2013 թուականից կինոթատրոնում իրականացուած վերանորոգման աշխատանքներին եւ կատարուած շուրջ 8 մլն ԱՄՆ տոլարին համարժէք դրամի ներդրումների արդիւնքում ստեղծուած ժամանակակից ընտանեկան ժամանցի կենտրոնի (կինոթատրոն, խաղասրահներ, երաժշտական ժամանցի կենտրոն) հնարաւորութիւններին:

Ընտանեկան հանգիստը կազմակերպելու համար կենտրոնում գործում են նաեւ սննդի կէտեր, սրճարաններ: Պատասխանատուների հաւաստմամբ, նախատեսւում է, որ 2-3 ամսից կը գործի կենտրոնի երաժշտական ժամանցի կենտրոնը: Կինոթատրոնի վերակառուցմանը զուգահեռ բարեկարգուել է նաեւ յարակից այգու մօտ 1 հա տարածքը, որտեղ տնկուել են շուրջ 500 տարբեր ծառատեսակներ, հիմնովին նոր տիզայնով կառուցուել է այգու եւ շէնքի լուսային ձեւաւորումը, վերանորոգուել են այգու շատրուաններ:

Կենտրոնում կիրականացուեն նաեւ բարեգործական ծրագրեր, կը կազմակերպուեն երիտասարդ կինոգործիչների, կինոյի տեխնիկական մասնագէտների ուսումնական դասընթացներ:

Կինոթատրոնն այս տարի իր դռներն է բացելու նաեւ «Ոսկէ ծիրան» միջազգայ-յին կինոփառատօնի մասնակիցների համար. ցուցադրուելու են փառատօնի մասնակից ֆիլմեր, հիւրընկալուելու են մասնակից ռեժիսորներն ու դերասանները, կազմակերպուելու են քննարկումներ, կինոդիտումներ:

## «Ո՛չ Թալանին«-ը Յոսանքի Չթանկանալու Երաշխիքներ Է Պահանջում

«Ո՛չ թալանին» նախաձեռնութիւնն յայտարարել է, որ իրեն չեն գոհացնում իշխանութիւնների հաւաստիացումները, թէ էլեկտրաէներգիայի թանկացումն անխուսափելի է:




«Մենք հարկեր ենք վճարում ոչ նրա համար, որպէսզի նրանք դեմագոգիայով զբաղուեն եւ փորձեն համոզել, որ իրենց վատ աշխատանքն այլընտրանք չունի եւ կարող է անպատիժ մնալ: «Ո՛չ թալանին» նախաձեռնութիւնը մէկ անգամ եւս յիշեցնում է «ոչ մի լումա աւել» պահանջն ու զգուշացնում է, որ երկրի ղեկավարութիւնը ստանձնած խումբը զերծ մնա ոչ պրոֆեսիոնալ աշխատաոճից եւ ամենասեղմ ժամկէտներում երաշխիքներ տրամադրի էլեկտրաէներգիայի սակագնի չթանկանալու մասին, սկսեն աշխատանքներ սակագնի իջեցման գործընթացի ուղղութեամբ, այլապէս, մենք նպատակահարմար չենք գտնում նրանց հետագայ պաշտոնավարումը», - ասուած է նախաձեռնութեան հաղորդագրութիւնում:

## Քաղաքագէտ. «Հայաստանի Քաղաքական Կեանքը Երկու Իրադարձութիւն Կարող Են Աշխուժացնել»

Հայաստանի ներքաղաքական կեանքի աշխուժացմանը կարող են նպաստել երկու իրադարձութիւն: Այս մասին Յունիսի 2-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարեց Կովկասի ինստիտուտի փոխտնօրէն, քաղաքագէտ Սերգէի Մինասեանը:

«Հաւանաբար աշնանը սահմանադրական բարեփոխումների հարցով առաւել աշխոյժ քննարկումներ կ՚ընթանան կամ կը ներկայացուի փաստաթուղթ: Եւ երկրորդ՝ խորհրդարանական ընտրութիւններն այդքան հեռու չեն»,- ասաց Մինասեանը: Այդուհանդերձ նրա կարծիքով՝ բոլորը հասկանում են, որ Հայաստանի ներքաղաքական կեանքում որեւէ լուրջ իրադարձութիւններ մօտ ժամանակներս չեն սպասւում:

Նշենք, որ Յունիսին Հայաստանում սահմանադրական բարեփոխումների հարցով երկրի քաղաքական ուժերի միջեւ խորհրդատուութիւն են կայանալու:

# ԼՈՒՐԵՐ

## Հայ Թեկնածուները Թուրքիայի Խորհրդարանական Ընտրություններում

Ներկայումս Թուրքիայում ապրում է 40-70 հազար հայ: Նրանք երկրի ամենախոշոր ազգային փոքրամասնութիւնից մէկն են: Մինչեւ 1915թ. զանգուածային ջարդերը նրանց թիւն անհամեմատ աւելի շատ էր: Դրան յաջորդած տասնամեակների ընթացքում հալածանքների քաղաքականութիւնը, հարստութեան հարկը եւ պետական ու ռազմական ոլորտներում ղեկավար պաշտօններ զբաղեցնելու փաստացի արգելքը հայ ազգի ներկայութիւնը թուրքական քաղաքականութեան մէջ գրեթէ աննկատ դարձրեց, փոխանցում է Euronews-ը:



Իրաւաբան Սելինա Օզուզուն Դողան

Սակայն իրավիճակը սկսել է փոխուել: Իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը փոփոխութիւններ է կատարել օրէնքում՝ թոյլ տալով վերադարձնել նախկինում ազգային փոքրամասնութիւններից բռնագրագրաւուած 300 միաւոր գոյքը:

Նախագահ Էրդողանի կողմնակից լրագրող Մարգար Եսայեանը յայտնուել է իշխող կուսակցութեան թեկնածուների ցուցակում: «Չեմ կարծում, որ ինձ ընտրել են որպէս թեկնածու այն պատճառով, որ ես հայ եմ: Այո, դա իմ ինքնութեան կարեւոր մասն է: Ես երջանիկ եմ, որ հայ եմ: Կարծում եմ, որ դա լաւ զուգադիպութիւն է, եւ իմ թեկնածութիւնը Թուրքիայի ժողովրդավարութեան վառ ապացոյցն է: 55-ամեայ ընդմիջումից յետոյ հայը դարձել է իշխող կուսակցութեան թեկնածու: Դա նշանակում է, որ նա կը դառնայ գործադիր իշխանութեան մաս»,- ասում է Եսայեանը:

Իր շարքերում հայ թեկնածու ունի նաեւ ընդդիմադիր «Հանրապետական ժողովրդական կուսակցութիւնը»: Իրաւաբան Սելինա Օզուզուն Դողանը ղեկավարում է Ստամբուլի ձախերի ցուցակը եւ ան յոյս ունի Յունիսի 7-ին կայանալիք ընտրութիւններից յետոյ տեղ կունենայ խորհրդարանում: «Ես ուզում եմ զբաղուել խտրականութեան խնդիրներով, պայքարել ատելութեան հողի վրայ տեղի ունեցող յանցագործութիւնների դէմ: Պաշտպանել մարդու հիմնարար իրաւունքները, խօսքի ազատութիւնը: Իհարկէ հայերը աւելի նկատելի կը դառնան, մենք կը կարողանանք խօսել այդ խնդիրների մասին: Հայերն աւելի ինքնավստահ կը դառնան: Մենք կ՚ազատուենք այն զգացողութիւններից, որ մեզ անտեսում են»:

Մէկ այլ երիտասարդ հայ քաղաքական գործիչ Գարօ Փայլանը Ստամբուլում ձախակողմեան «Ժողովուրդների Դեմոկրատական կուսակցութեան» 2-րդ համարն է: Նա Հայաստանի հետ սահմանը բացելու կոչ է անում. «Հարցն այն չէ, որ դու հայ ես, թէ ոչ: Մեր կուսակցութեան մէջ կան նաեւ քրդեր ու թուրքեր, բայց դա ոչ թէ ազգային պատկանելիութեան, այլ քաղաքական հայեացքների պատճառով է: Նոյնը հայերի դէպքում: Դա կարգաւորման գործընթաց է: Առաջ Թուրքիայում որոշ փոքրամասնութիւններ անտեսւում էին համակարգի կողմից»:

Վերջին 92 տարիների ընթացքում թուրքական խորհրդարանում ընդամէնը 5 հայ պատգամաւոր է եղել: Սակայն հիմա երկրում աւելի շատ են խօսում ազգային փոքրամասնութիւնների հետ յարաբերութիւնների կարգաւորման մասին:

## Սփիւռքին Ուղղուած Նախարարի Կոչը Իր Ազդեցութիւնը Ունեցել է

Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը լրագրողներին վստահեցրեց, որ իր կոչը՝ ուղղուած սփիւռքին, իր ազդեցութիւնն ունեցել է, բայց թէ ինչքան, նշել չի կարող:

«Ես ամէն օր բանկերում չեմ կանգնում ու հաշիւ պահանջում. դա իմ խնդիրը չէ, իմ խնդիրն է ՀՀ-ում եղած որոշակի տեղեկատուութիւնը փոխանցել Սփիւռքին: Որպէս նախարար պարտաւոր եմ Սփիւռքին տեղեկացնել, որ ՀՀ բանկերում աւանդները 6-18% են, եթէ ներդրում էք անում, դրանով շահում էք, շահում են նաեւ ՀՀ բանկերը»,- լրագրողների հետ զրոյցում նշեց նա:



Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան

Յիշեցնենք, որ նախարարը կոչ էր անում սփիւռքահայերին հազարական ամերիկեան դոլար ներդնել հայկական բանկերում:

«Իմ առաջարկը շատ տեղին է, դրա համար կարդացէք նաեւ արտասահմանեան մամուլը, որ իրենք արձագանգում են: Օրեր առաջ ընդունել էի Հայաստան հիմնադրամի տեղական մարմինների 30 հոգանոց պատուիրակութեանը, երբ հանդիպումն աւարտուեց, գանատայի ներկայացուցիչն առաջարկեց գնալ ու բանկերում գումարներ ներդնել, եւ բոլորը միայն ծափահարեցին»,-ասաց նախարարը:

Հրանուշ Յակոբեանը նոյնիսկ փաստեր ներկայացրեց. օրեր առաջ Գանատայից նամակ է ստացել մի մարդուց, ով յայտնել է, որ երեք աղջիկների հետ 1994 թ-ից յետոյ չի եղել ՀՀ-ում եւ նախարարի կոչից յետոյ պատրաստ է 3000$ ներդնել ամէն աղջկայ անունով:

Դիտարկմանը, որ շատերը կարծիք են յայտնում, որ սփիւռքը չի վստահում հայաստանեան բանկային համակարգին, Հրանուշ Յակոբեանը հակադարձեց. «Ես ամէն օր էլ դիմում եմ սփիւռքին, եթէ իրենք մեզ չվստահէին, մեր ծրագրերը չէին ընդլայնուի, համահայկական կառոյցները մեզ հետ պայմանագրեր չէին կնքի»:

Լրագրողներից մէկի դիտարկմանը, թէ Սփիւռքի նախարարը յայտնի է սփիւռքին ուղղուած իր կոչերով, արդեօք ցանկութիւն չկա՞ նոյն կոչերով դիմել կուսակից գործընկերներին, օրինակ՝ եկեղեցիներ կառուցելու փոխարէն ներդրումներ անել եւ աշխատատեղեր ստեղծել, նախարարը պատասխանեց, թէ մէկը միւսի հետ չի կարելի համադրել:

«Իւրաքանչիւր բարերար ինքն է որոշում, թէ իր աշխատած գումարները որտեղ ներդնի, հիմա եթէ գամ ձեր տուն ու ասեմ՝ էս գումարն էստեղ մի ծախսէք, էստեղ ծախսէք: Մարդն ինքն է որոշում իր անելիքը»,-ասաց նա:

Տասն օր առաջ, յիշեցնենք, «Ազատութեան» հետ զրոյցում վարչապետ Յովիկ Աբրահամեանը յայտարարեց. - «Այս տարի բոլոր խնդիրների միասին մենք արձանագրելու ենք դրական աճ: Եւ ես համոզուած եմ, որ տարածաշրջանի այդ բոլոր խնդիրների առկայութեան պայմաններում մեզ յաջողուելու է արձանագրել այն, ինչ որ մենք պլանաւորել ենք հանրապետական պիւտճէով 2015 թուականին»:

## ԵԱՀԿ-ն Շահագրգռուած է

Շարունակուած էջ 1-էն

կանոնադրութեան, Հելսինքեան եզրափակիչ ակտի հիմնադրոյթների հիման վրայ», - ըսուած է նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերու վարչութեան հաղորդագրութեան մէջ:

ԵԱՀԿ նախագահը Երեւանի մէջ հանդիպում ունեցած է նաեւ ԼՂՀ նախագահ Բակօ Սահակեանի հետ:

## Ռուս Զբօսաշրջիկները Սկսել Են Կարճատեւ Հանգստի Համար Հայաստան Այցելել

Գառնան եւ նաեւ ամռան ամիսներին մայրաքաղաքի ու մարզերի տեսարժան վայրերում ու սրճարաններում կարելի է հանդիպել ռուսաստանցի զբօսաշրջիկների հոծ խմբերի, որոնք, պարզւում է, Հայաստանն իրենց ճամբորդական քարտէսներում ներառել են ոչ միայն երկարաժամկէտ հանգստի, այլեւ՝ ուրբաթ-շաբաթ-կիրակի օրերի համար:

« 100 հազարանոց տուրեր, են գալիս են՝ «մայովկայի», ուրբաթ-շաբաթ-կիրակի օրերին մնում են, գնում»,- Tert.am-ին ասաց Երեւանի կենտրոնում գտնուող սրճարանի մատուցողը:

Քաղաքացիական աւիացիայի գործակալութեան մամուլի քարտուղար Ռուբէն Գրձելեանը տեղեկացրեց, որ Յունուարից-Ապրիլ Հայաստանի «Արմենիա» եւ «Շիրակ» օդակայանները սպասարկել են 501 հազար 822 ուղեւոր, ինչը շուրջ 2000-ով աւելի է նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ցուցանիշից:

«Անցած տարուայ համեմատ գրեթէ նոյն թիւն է, չի աւելացել: Սակայն ես սա բացատրում եմ նրանով, որ անցած տարի շատ աշխոյժ էր, այս տարի՝ ճգնաժամային երեւոյթներ կան: Իսկ անցած տարի Ռուսաստանից շատ մեծ հոսքեր ունէինք՝ կապուած տուրիզմի զարգացման հետ: Եւ այս տարի մի քիչ խեղճ է յատկապէս այդ ուղղութիւնը»,- ասաց Ռուբէն Գրձելեանը:

Քաղավիացիոն գլխաւոր վարչութիւնում այս պահին ամփոփուած են միայն Ապրիլի, ոչ Մայիսի տուեալները. մյիւս կողմից էլ՝ նա չի կարող ասել, թէ ուղեւորներից որոնք են զբօսաշրջիկներ, սակայն ինչ-ինչ անձնական դիտարկումներ արել է:

«Ուղղակի երեւում է, որ զբօսաշրջիկներ են, ռուս զբօսաշրջիկներ, նաեւ որ հետեւեք մասնագիտացուած կայքերին, նրանք գրում են, որ ռուսաստանեան տուրիստները կարճատեւ այցելութիւնների ժամանակ նախընտրում են Երեւանն ու Մինսկը»,-ասաց Ռուբէն Գրձելեանը:

Ձնայած սրան, ռուսական «Բելնովոստի» լրատուականը, ներկայացնելով, թէ հետխորհրդային տարածքի ո՞ր երկրներ են ամենաշատը այցելում ռուսաստանցիները, առաջին տեղում նշել էր Ղրիմը, որը հիմա փաստացի Ռուսաստան է: Իսկ երկրորդ տեղում առանձնացրել էր Բելառուսը՝ նշելով, որ Ադրբեջան, Ղրղզստան, Մոլդովա եւ Տաջիկստան ռուսները գրեթէ չեն այցելում:

www.massispost.com
daily news updates



## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՐՔ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ ՀԵՌԱՑՈՒԵԼ Է ԲԵԼԳԻԱՅԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

*Բելգիայի խորհրդարանում ներկայացուած Քրիստոնէադեմոկրատական կուսակցութիւնը Հայոց ցեղասպանութեան ժխտման համար իր շարքերից հեռացրել է Թուրքական ծագմամբ պատգամաւոր Մահինուր Էզդեմիրին, հաղորդում է բելգիական Knack պարբերականը:*

*«Տիկին Էզդեմիրը հրաժարւում է ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը, ինչը դէմ է մեր արժէքներին: Այստեղ խուսափողական դիրքորոշումն անհնար է. առաւելագոյն յստակութիւն է անհրաժեշտ»,- նշուած է կուսակցութեան տարածած յայտարարութիւնում, գրում է News.am-ը:*



**Թուրքական ծագմամբ պատգամաւոր Մահինուր Էզդեմիր**

*Աւելի վաղ բելգիական La Libre-ն տեղեկութիւն էր հրապարակել, որ երկրի հանրային հեռուստաընկերութեան լրագրողներն այցելել են Բրիւսելի խորհրդարան, որպէսզի հարցեր տան պատգամաւոր Մահինուր Օզդեմիրին: Կապ են հաստատել հասարակութեան հետ կապերի բաժնի պատասխանատուի հետ, որը, ըստ երեւոյթին, այդ մասին տեղեակ է պահել պատգամաւորին:*

*Վերջինս, մի քանի անգամ նայելով տեսախցիկին, արագ հեռացել է դահլիճից: Լրագրողներին յղած հաղորդագրութեան մէջ այդ քայլը բացատրել են այն հանգամանքով, որ Օզդեմիրին բժիշկը խորհուրդ է տուել շատ հանգստանալ: Այդուհանդերձ նոյն օրը երեկոյեան պատգամաւորը ներկայ է եղել համայնքային խորհրդի նիստին: RTL հեռուստատեսութիւնը փորձել է նորից նրան հարցեր տալ, սակայն ապարդիւն: Տեսնելով տեսախցիկները՝ Մահինուր Օզդեմիրն արագ հեռացել է:*

*Մայիսի 25-ին Բելգիայի խորհրդարանի Քրիստոնէադեմոկրատական կուսակցութեան նախագահ՝ Բենուա Լիւտժենը, անդրադառնալով Ցեղասպանութեան մասին պատգամաւոր Ահմեդ Էլ Հանուսայի սկանդալային յայտարարութեանը, յայտարարել էր՝ եթէ կուսակցութիւնում կայ մէկը, որը կը ժխտի Հայոց ցեղասպանութեան փաստը, նրան անմիջապէս կը վռնտեն:*

*Ինչպէս յայտնում է RTBF-ը, առաջնորդը յստակ հասկացնել է տուել, որ ժխտողականները կուսակցութեան շարքերում տեղ չունեն, քանի որ դա հակասում է կուսակցութեան էթիկային: «Եթէ մեր կուսակցութիւնում կայ մէկը, որը ժխտում է, ապա նրան կը վռնտեն: Եւ ես ձեզ կ՚ասեմ ինչու: Երբ ես նախագահ դարձայ եւ բոլոր թեկնածուներին խնդրեցի ճանաչել բոլոր ցեղասպանութիւնները, այդ թւում՝ Հայոց ցեղասպանութիւնը: Դա գրաւոր պարտաւորութիւն է, դա ամրագրուած է էթիկայի օրէնսգրքում՝ ի թիւս վարուելակարգի այլ կանոնների»,- ասել է Լիւթժենը:*

*Ոչ թուրքական ծագումով Ահմեդ Էլ Հանուսը վերջերս Facebook-ում վիճելի յայտարարութիւն էր արել Հայոց ցեղասպանութիւնը չճանաչելու վերաբերեալ, ինչը բուռն արձագանք էր առաջ բերել: Դրան ի պատասխան՝ նա նշել էր, որ իրեն սխալ են հասկացել: «Ես միշտ ճանաչել եմ Հայոց ցեղասպանութիւնը: Ես կարծում եմ, որ այդ պատմական տառապանքները առեւտրի վերածել պէտք չէ»,- ասել էր նա:*

*Մայիսի 29-ին կայացուած որոշումն առաջին օրերին Անգարայում գրեթէ աննկատ անցաւ: Այժմ սակայն, Թուրքական իշխանութիւններն ու իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը սկսեցին հանրութեան ուշադրութիւնն ակտիւօրէն սեւեռել այս խնդրի վրայ: Խորհրդարանական ընտրութիւններից օրեր առաջ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը որոշեց օգտագործել այս առիթը: Մի շարք իշխանամետ ոչ կառավարական կազմակերպութիւններ՝ նախագահ Ռեջեփ Էրդողանի դստեր՝ Սումեյայի գլխաւորութեամբ, բողոքի ցոյց կազմակերպեցին Ստամբուլում բելգիական հիւպատոսարանի շէնքի առջեւ՝ «Մենք բոլորս Մահինուր ենք» կարգախօսների ներքոյ:*

## ՊՐԱԶԻԼԻ ԾԵՐԱԿՈՅՏԸ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

*Հայաստանի արտաքին գործոց նախարար Էտուարտ Նալպանտեան հաղորդագրութեամբ մը ողջունեց Պրազիլի իշխանութիւններուն կողմէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման փաստը: Նախարարի յայտարարութեան մէջ նշուած է, որ Պրազիլի Ծերակոյտը՝ ճանչնալով Ցեղասպանութեան փաստը վերահաստատած է ցեղասպանութիւններու կրկնութեան դէմ պայքարելու իր մտադրութիւնը: Նշենք, որ Պրազիլի դաշնային Ծերակոյտը իր վերջին նիստին ընթացքին միաձայն ընդունեց Հայոց Ցեղասպանութեան փաստը: Ընդունուած յայտարարութիւնը յարգանքի տուրք մատուցեց Ցեղասպանութեան զոհերուն եւ գնահատեց Պրազիլի մէջ ապրող հայերու ներդրումը:*

*Ծերակոյտին համաձայն, նման ոճրագործութիւններ պէտք չէ կրկնուին:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

## ՍՈՒՐԻՈՅ ԸՆԴԴԻՄԱԴԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ՅՈՒՆԻՍԻ 8-9 ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

*Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան մէկ հաղորդագրութեան համաձայն Յունիսի 8ին եւ 9ին Սուրիոյ ընդդիմադիրներու եւ հայրենասիրական ուժերու ընդլայնուած համագումար մը տեղի պիտի ունենայ Գահիրէի մէջ: Արդարեւ Եգիպտոսի Արտաքին Գործերու Խորհուրդին հովանաւորութիւնը վայելող այս համագումարի կայացման որոշումն առնուած էր Յունուարի 1ին:*

*Համագումարին նպատակն է ընդդիմադիր ուժերու տարբեր խմբաւորումներու կարծիքն առնել, սուրիական տագնապին եւ արիւնահեղութեանց վերջ մը տալու մասին: Միաժամանակ պիտի քննարկուի սուրիական հողերու ամբողջականութեան, ժողովրդային միասնութեան եւ պետական կառոյցներու պահպանման հարցերը:*

*Վերոյիշեալ համագումարը նախապատրաստող Կոմիտէի անդամներէն Քասէմ Խաթիպն ըսաւ թէ «Գահիրէ 2» կոչուող այս համագումարը պիտի քննարկէ նաեւ վաւերաթուղթ մը որ պիտի կոչուի «Քաղաքական փաստաթուղթ մը գծելու ապագայ Սուրիոյ քարտէսը»: Սակայն ոչ մէկ յիշատակութիւն չկայ երկրէն ներս Ասատեան վարչակարգի պահպանման մասին:*

*Կը նախատեսուի որ սոյն համախմբումին իրենց մասնակցութիւնը բերին 180-200 հոգի եւ քաղաքական կազմակերպութիւններու չպատկանող կագ մը հայրենասէր անձնաւորութիւններ:*

## ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ 12 ԱՄՍՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ

*Արեւմտեան Ռամալլայի Իսրայէլեան զինուորական «Օֆար» ատեանը 12 ամսուան բանտարկութեան դատապարտեց Պաղեստինի Օրէնսդիր Մարմնի (Խորհրդարան) նախագահ Ազիզ Տուէյքի, միաժամանակ 6 հազար Շիգալ դրամական տուգանքի (1 տոլար հաւասարազօր է 3,86 Շիգալի) ենթարկելով զինք:*

*Այս առթիւ լոյս տեսած մամլոյ հաղորդագրութենէ մը կ՚իմանանք թէ Տուէյքի դատավարութիւնը ունեցած է 16 նիստեր: Իր դէմ եղած ամբաստանութիւններէն մին այն է որ ինք տարիներ առաջ ժողովրդային հաւաքներու ընթացքին ճառեր արտասանած է:*

*«Ազատականներ» ու կեդրոնը բուռն կերպով դատապարտեց այս վճիռը եւ պահանջեց ազատ արձակել տարբեր բանտերուն մէջ ձերբակալուած օրէնսդիր Մարմնի բոլոր անդամները, գլխաւորութեամբ Ազիզ Տուէյքի:*

## ՍԱՄԻՐ ԺԱԱԺԱ- ՄԻՇԷԼ ԱՈՒՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

*Լիբանանեան Ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր Ժաաժա այցելեց Ռապիէ եւ տեսակցեցաւ Փոփոխութիւն եւ Բարեկարգում համախմբումի նախագահ երեսփոխան Միշէլ Աունի հետ: Այս կը համարուի երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներուն միջեւ վերջին քանի մը ամիսներուն տեղի ու նեցած քննարկումներուն, բանակցութիւններուն եւ խորհրդակ ցութիւններուն արդիւնքը: Երկու ղեկավարներու ժողովէն ետք տեղի ունեցաւ նշեալ կուսակցութիւններուն միջեւ տեղի ունեցած բանակցութիւններուն արդիւնքներու հրապարակումը:*

*Աուն նախապէս յայտարարած էր, որ կառավարութիւնը կը խախտէ իր պարտականութիւնները՝ ապահովական նշանակումներ չկատարելով: Աունի համաձայն, պատճառ չկայ նշանակումներու թղթածրարը անտեսելու: «Նկատի առնելով, որ անոնք կը փորձեն ժամանակ շահիլ մինչեւ Սեպտեմբեր, մենք կը վախնանք շրջագայելու եւ Հըզպալլա կը պատրաստէ իր ապաստարանները, թող կառավարութիւնը արձակուրդ առնէ մինչեւ Սեպտեմբեր 15», ըսաւ Աուն: Անոր համաձայն, երբ Արսէլի մասին յայտարարութիւն կատարուի, ապա խօսքը կը վերաբերի աւանի բարձունքներուն:*

## ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՂՋԱՀԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՆՈՒԷՐԸ

*Լիբանանի առողջապահութեան նախարար Ուաէլ Ապու Ֆաուր անձնական պիւտճէէն խոստացաւ 16միլիոն տոլար նուիրել յատկացուելու համար երկրի տարբեր շրջաններու հիւանդանոցներուն: Նշենք նաեւ որ Լիբանանի պետական հիւանդանոցները անմիջական կարիքն ունի օժտուելու հիները փոխարինող բժշկական նոր սարքաւորումներով եւ դեղօրայքով:*

## ԵՄԷՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԷՋ

*Աւելի քան 2 ամիսէ ի վեր Եմէնի մէջ տիրող պատերազմական վիճակը պատճառ դարձած է 2000 հոգիներու մահուան: Արդարեւ Սէուտական Արաբիոյ կողմէ ղեկավարուող արաբական դաշնակից ուժերու եւ Հիւսիսային Եմէնի «Հութի» կոչուող զօրախումբի միջեւ օդային եւ ցամաքային կռիւները շարունակական ընթացքի մէջ են: Այս կապակցութեամբ հարեւան Օմանի հիւրանոցներէն մէկուն մէջ, կողմերու բանակցութիւններն սկսած են Հութինրեւ եւ ամերիկեան պաշտօնակատարնեու միջեւ: Բանակցութիւններն առ այժմ յառաջիմութեան մէջ են: Նշենք նաեւ որ Արաբական Ծոցի երկիրներուն մէջ Օմանը միակն է որ մաս չի կազմեր Եմէնի զինուորական գործողութիւններուն:*

*Արաբ դաշնակից երկիրներու կողմէ 25 միլիոն բնակիչ հաշուող Եմէնը այժմ ենթարկուած է պաշարման վիճակի: Այս իսկ պատճառով խիստ կարիքը կայ մարդասիրական օժանդակութիւններու: Ցատկպէս սնունդի, դեղօրայիք եւ վառելանիւթի:*

www.massisweekly.com

# ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈԼՈՎՈՅԹԸ

## (ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 97-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

*ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ*

1918 Մայիս 28-ին Հայաստանի անկախութեան հռչակումով, աշխարհի քարտէզին վերադարձաւ հինաւուրց պետութիւններէն մին՝ Հայաստանը:

Անդրկովկասի մէջ ծաւալած ռազմաքաղաքական սրընթաց զարգացումները, հայրենի հողին վրայ պետական միաւոր ունենալու հայոց վաղեմի երազը եւ պատմական վճռական պահուն քաղաքական կամք դրսեւորելու խիզախումը յանգեցուցին Հայաստանի հանրապետութեան գոյառման:

Ծանր պայմաններու տակ, երբ դատարկելէ ետք Արեւմտահայաստանը իր բնիկ ժողովուրդէն, Թրքական ախորժակը այս անգամ սրուած էր Արեւելահայաստանի ուղղութեամբ, մինչ պատերազմն ու անորոշութիւնը փոթորկած էին տարածաշրջանը եւ ամէն կողմ աւեր էր ու ներհակ ուժեր կ'որոնէին իրենց աւարը, հայ քաղաքական ուժերուն այլընտրանք չէր մնար՝ եթէ ոչ կառչիլ ազատութեան գաղափարականին, հիմքերը նետել պետականութեան եւ յանձնառու ըլլալ մեր նախահայրերուն կիսատ թողած ճանապարհին՝ անկախութեան:

Հայաստանի անկախութեան հռչակման նախօրէին մայիսեան հերոսամարտերը եկան աւիւն ու աւիշ հաղորդելու այն ժողովուրդին, որ կը թուէր թէ արիւնաքամ դարձած է դարձեալ չվերականգնելու յուսահատութեամբ: Հիասթափութենէն ընկճուած մեծ բանաստեղծ Վահան Տէրեան անդոհանքով պիտի հարցադրէր՝ «միթէ՞ վերջին պոէտն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի»:

Գաղթականներով, սովալլուկ բազմութիւններով եւ անօթեւան որբերով խռնուած եւ համաճարակներով վարակուած երկիր մը պիտի կարենա՞ր իր ուժերը հաւաքել վերականգնելու եւ վերապրելու համար:

Մայիս 28-ին Հայաստանի առաջին հանրապետութեան ծնունդը դաժան պատմութեան նետուած ձեռնոց մըն էր եւ անժխտելի փաստը հայութեան լինելութեան հաւատամքին ու հաւատքին:

Ի՞նչպէս ըմբռնել Մայիս 28-ի անկախութեան հռչակման կարեւորութիւնը: Ոգեշնչող բարոյականութենէն անդին՝ ի՞նչպէս ընկալել անոր անհրաժեշտութիւնն ու տարողութիւնը: Անխուսափելիօրէն պէտք է ընդգծել պետականութեան հոլովոյթին նախաքայլերը, որ սկսաւ Մայիս 28-ով՝ հասնելու համար մերօրեայ երրորդ հանրապետութեան:

Ինչ ծանրակշիռ պարտաւորութիւն կը ստանձնէր այն սերունդը, որ հարկադրուած էր ոչինչէն պետութիւն ստեղծելու նուիրական գործին նետուելու:

Դարաշրջաններ ամբողջ պետականութենէ զրկուած ժողովուրդի մը դիմաց ծառացած էին լրջագոյն մարտահրաւէրներ՝ տնտեսական-ելեւմտական հարցերէն ներքին անվտանգութեան հաստատում, արտաքին դիւանագիտութեան ոլորտէն բանակ ու պաշտպանութիւն, կրթական-մշակութային կեանքէն գիտութեան քայլերում, ենթակառոյցներու ստեղծումէն արդարադատութիւն եւ ժողովրդավարական հիմնարկներ: Լեռնակուտակ հիմնախնդիրներ յառաջացած էին պետականաստեղծ փաղանգին ընդառաջ:

Հայաստանի առաջին հանրապետութիւնը ռազմաքաղաքական ու միջազգային ցնցումներու հետեւանքով գոյատեւեց երկուքուկէս տարի միայն: Հարեւաններու հետ պատերազմները, ներքին խռովութիւնները, ընկերային ու տնտեսական տագնապալի կացութիւնը, ժողովուրդին յուսաբեկ իրավիճակը եւ վերջապէս քեմալական զօրքերուն ներխուժումը այնպիսի կացութավիճակ ստեղծեցին, որ օրուան վարիչները Հայաստանի ղեկը յանձնեցին պոլշեւիկեան երիտասարդ իշխանութեան: Պետականութեան հիմնաւորման նախափորձեր կատարող առաջին հանրապետութեան պետական այրերը բախեցան այնպիսի ալեկոծումներու, որ ի վերջոյ տեղի տուին դաժան իրականութեան:

Անոնց մտամարզանքները՝ Սեւրի դաշնագիրով շլացած՝ յօդս ցնդեցան Ալեքսանդրապոլի դաշնագիրով, երբ Քարաբէքիր փաշա Կարսի մարզը իւրացնելէ ետք՝ պատրաստ էր խոյանալու աւելի խորքը՝ Երեւանի ուղղութեամբ: Առաջին հանրապետութեան կեանքը եղաւ կարճատեւ՝ դժխեմ պայմաններու բերումով, սակայն՝ դրականը այն էր, որ սկիզբը դրուեցաւ պետականութեան հոլովոյթին:

Արդարեւ, Մայիս 28-ով ճարտարապետուած անկախութիւնը եղեռնեան գորշ մղձաւանջէն ետք

Շար.ը էջ 19

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ Բ. ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

*ՕՀԱՆ ՊՕՏՐՈՒՄԵԱՆ*

70 տարի անցաւ այն օրէն, երբ խաղաղութեան թշնամի Նացիական Գերմանիան, ի շարս այլ երկիրներու յարձակում գործեց նաեւ Խորհրդային միութեան վրայ եւ խորհրդային միւս ժողովուրդներու շարքին մեր ժողովուրդն ալ ներքաշեց երկրորդ համաշխարհային աւերիչ պատերազմին մէջ, բայց ձախողեցաւ:

Սակայն խորհրդային ժողովուրդը փայլուն քննութիւն մը տուաւ եւ անոր զինուած ուժերը պատմական-համաշխարհային յաղթանակ մը կերտեցին Ֆաշիզմի դէմ: Այդ պատերազմին մէջ բոլոր հակաֆաշիստ ժողովուրդները ուսուսի տուած՝ ոչ միայն պաշտպանեցին իրենց հայրենիքներուն պատիւն ու անկախութիւնը, այլեւ ամբողջ մարդկութիւնը փրկեցին ֆաշիստական ստրկութենէն, ինչպէս նաեւ խաղաղութիւն շնորհեցին ողջ աշխարհին:

Այս պատերազմին գործօն մասնակցութիւն բերաւ ամբողջ հայ ժողովուրդը, մասնաւորաբար հայրենի մեր եղբայրներն ու քոյրերը: Մեր փոքրիկ Հայրենիքը հաստատապէս իր մարտական արժանի տեղը գրաւեց ընդհանուր պայքարին մէջ:

«Հայ ժողովուրդը առաւել ու խորապէս զգաց մեր երկրին վրայ կախուած մահացու վտանգը, այն պատճառով, որ ան իր բազմադարեան պատմութեան մէջ քանիցս ենթարկուած է օտար բռնակալներու յարձակումներուն: Ան գիտէ, թէ ի՞նչ բան են կոտորածը, աւերը, սովը, բռնատիրութիւնները: Հայ ժողովուրդը չէ մոռցած հայերու ֆիզիքական ոչնչացումը, որ կազմակերպուած էր արիւնառուշտ Հիթլերի նախորդը՝ Վիլհեմ կայսրը՝ Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներուն» գրած է Փրաւտան իր 1941 Օգոստոսի 25ի թիւին մէջ:

Պատերազմի առաջին օրերէն, հայրենի ժողովուրդը՝ «Ամէն բան յաղթանակի համար», նշանաբանով ձեռնամուխ եղաւ պայքարի, իր մարդկային ուժերով ու նիւթական եւ թեքնիքական միջոցներով:

Թշնամին վիթխարի կորուստներ ունենալով հանդերձ, կատաղութեամբ կը յարձակէր Կովկասի եւ Ստալինկրատի վրայ: Ահա այդ օրերուն ստեղծուեցան ազգային զօրամասեր, որոնց կարգին՝ հայկական զօրախումբեր:

Այդ օրերուն հայրենի երկրին մէջ սկսան գործել երեսուն նոր գործարաններ եւ 110 արդիւնաբերական կեդրոններ: 1943 թուականին զգալիօրէն սկսաւ աճիլ Հայաստանի ռազմական արտադրութեան տեսակարար կշիռը, որ ռազմաճակատին փոխանցեց մեծ քանակութեամբ տեսակաւոր առարկաներ:

1943 թուականին նոր հիմնադրուած հայկական գիտութեանց կաճառին գիտնականները՝ մեծ նուաճումներով իրենց կարելին չզլացան այս յաղթանակին իրագործման համար:

Հայրենի ժողովուրդը չսահմանափակեց իր աշխատանքը միայն թիկունքային աշխատանքով, այլ մասնակցեցաւ կռիւներուն ռազմաճակատի ամենատաք կէտերուն վրայ: Պատերազմի սկիզբէն իսկ խիզախ անուն վաստակեցան, թշնամիին առաջին հարուածները իրենց վրայ ընդունած, արեւմտեան սահմաններու վրայ կռուող բազմաթիւ ռազմիկներ ու հրամանատարներ, գնդապետ Աշոտ Սարգսեանը զօրավար Ալավերտեանը, Խորհրդային միութեան կրկնակի հերոս, ֆաշիստական Գերմանիոյ «սարսափ»ը նկատուող օդաչու՝ Նելսոն Ստեփանեանը, հեծելագունդի հրամանատար Մուշեղ Կարապետեանը, «Պրեստի» ամրոցին անօրինակ հերոսական պաշտպանութեան մասնակիցներ Սամուէլ Մատթէոսեանը, Վահան Գրիգորեանը եւ ուրիշներ:

Հայ ժողովուրդի անվեհեր զաւակներուն մասնակցութիւնը ճակատամարտերու ընթացքին աւելի ցայտուն կերպով դրսեւորուեցաւ, երբ 1942ի Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն ռազմաճակատ մեկնեցան հայկական 89րդ, ապա 408րդ զօրախումբերը: 1943ին Կովկասի ազատագրութեան ճակատամարտերուն, յատկապէս աչքի ինկաւ 89րդ հրաձգային հայկական զօրախումբը՝ զօրավար Նուէր Սաֆարեանի հրամանատարութեամբ: Այս զօրախումբը որ կը կոչուէր նաեւ «Թամամնեան Զօրախումբ» իր մարտական գործողութիւնները աւարտեց Էլպա գետի ափին: Այս զօրախումբը արժանացաւ երեք շքանշաններու, եւ այս զօրախումբի ռազմիկներէն 7333ը պարգեւատրուեցան շքանշաններով, 9 հոգի արժանացան խորհրդային միութեան հերոսի կոչումին:

Մեծ թիւով ռազմիկներ մասնակցեցան Պերլինի գրաւումին, տարբեր միաւորումներու մէջ: Այդ

Շար.ը էջ 19

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900
Los Angeles, CA 90048

805 East Broadway
Glendale, CA 91205

300 N. Lake Ave. Suite 500
Pasadena, CA 91101

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability

- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning

- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · Kaiser Permanente

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

# «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ՌԱՊՊԻ ՇՄՈՒԼԻՆ ԵՒ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՕՊԱՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՆ ՈՐՊԷՍ «ՍՏԱԽՕՍ»

**ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ**

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկները նշանաւորուեցան աննախադէպ, իսկ երբեմն ալ անսպասելի զարգացումներով:

Նման առիթ մը հանդիսացաւ հանրայայտ եւ վիճայարոյց Ռապպի Շմուլի Պոթիչի («Համաշխարհային արժէքներ» ցանցի հիմնադիր) եւ Արեւելեան Ամերիկայի Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի յանձնաժողովի կողմէ «Նիւ Եորք Թայմս» թերթի Ապրիլ 18-ի թիւին մէջ զետեղուած ամբողջ էջ մը գրաւեցնող վճարովի յայտարարութիւնը, որ խստօրէն կը քննադատէր Նախագահ Օպաման Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ իր նախընտրական խոստումը չկատարելուն համար:

Լաւատեղեակ աղբիւր մը «Քալիֆորնիա Քուրիըր» թերթին յայտնեց, որ թերթին յայտարարութիւնը նեղացուցած է Սպիտակ տան որոշ պաշտօնեաներ: Անոր տեղադրումը համընկաւ Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի համաամերիկեան յանձնաժողովի ջանքերուն հետ՝ համոզելու վարչակազմի դժկամ պաշտօնեաները մասնակցելու Մայիս 7-9-ը Ուաշինկթընի մէջ կայանալիք ոգեկոչման ձեռնարկներուն:

Այդուհանդերձ, փոխնախագահ Պայտըն եւ ՄԱԿ-ի մէջ ԱՄՆ դեսպան Սամանթա Փաուըր մասնակցեցան Ուաշինկթընի ազգային տաճարին մէջ Մայիս 7-ին կայացած միջկրօնական աղօթքի արարողութեան, սակայն անոնք ելոյթ չունեցան եւ անոնց ներկայութիւնը չյայտարարուեցաւ: Զարմանալիօրէն, երկու պաշտօնեաներն ալ կը կրէին Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի պաշտօնական խորհրդանիշ «Անմոռուկ» կրծքանշանը: Արարողութեան ներկայ էին նաեւ ՀՀ Նախագահ՝ Սերժ Սարգսեան, Գարեգին Բ. կաթողիկոս եւ Արամ Ա. կաթողիկոս:

Վճարովի յօդուածին մէջ պատկերուած էր երեխայ մը ձեռքին պաստառ մը, որուն վրայ գրուած էր. «Նախագահ Օպամա, ինչո՞ւ կը ստէք մեզի»: Անոր կը յաջորդէր մեծ, հաստ տառերով գրուած վերնագիրը. «1.5 միլիոն հայ զոհերը կը ճչան իրենց գերեզմանէն. մինչեւ ե՞րբ պիտի ժխտէք մեր Ցեղասպանութիւնը, միայն գոհացնելու համար Թուրք բռնակալը»:

Վճարովի յօդուածը խիստ քննադատութեան ենթարկեց ինչպէս Օպաման՝ իր նախընտրական խոստումները դրժելուն, այնպէս ալ դեսպան Փաուըրը՝ Ցեղասպանութեան նկատմամբ ԱՄՆ անտարբերութիւնը իր գիրքին («Խնդիր դժոխքէն. Ամերիկան եւ Ցեղասպանութեան դարը») դատապարտելէն ետք լուռ մնալուն համար: Յայտարարութիւնը քննադատած էր նաեւ Թուրքիոյ Նախագահ Էրտողանը՝ զայն անուանելով «խուլիկան» եւ «բռնակալ, որ քանդած է Թրքական ժողովրդավարութիւնը»:

Բացի այդ, յօդուածին մէջ մէջբերում կար Սի.Էն.Էն.-ի Ուաշինկթընի գլխաւոր թղթակից՝ Ճէյք Թափըրի լուրերու թողարկումէն. «Վեցերորդ տարին անընդմէջ Նախագահ Օպաման դրժած է հայ համայնքին տուած իր խոստումը, երբ որպէս ծերակուտական եւ նախագահի թեկնածու, անոնց քուէներըստանալու համար խոստացած էր օգտագործել «Ցեղասպանութիւն» բառը՝ մէկ դար առաջ Օսմանեան կայսրութեան մէջ մօտ 1.5 միլիոն հայերու կոտորածը նկարագրելու համար: Ան այդպէս վարուեցաւ որպէս գիջում Թուրքիայի կառավարութեան»:

Յօդուածը յիշեցուց ընթեցողներուն, որ Թափըրը նկատի ունէր ծերակուտական Օպամայի 2008-ի յայտարարութիւնը. «Հայոց Ցեղասպանութիւնը մեղադրանք, անձնական կարծիք կամ տեսակէտ չէ, այլ լայնօրէն վաւերագրուած փաստ, որ կը հաստատէն վիթխարի քանակով պատմական ապացոյցներ: Փաստերը անհերքելի են. Որպէս Նախագահ ես պիտի ճանչնամ Հայոց Ցեղասպանութիւնը»:

Այնուհետեւ յօդուածին հեղինակները յայտարարեցին. «Հազուադէպ է, որ Ամերիկայի ոեւէ նախագահ այսպէս լկտիաբար սուտ խօսի բարոյական մեծ նշանակութիւն ունեցող նման հարցի մը վերաբերեալ: Նախագահ Օպամայի դիտաւորեալ բարոյական կուրութիւնը խիստ կը տարբերի Հռոմի Ֆրանսիս պապի անցեալ շաբաթուան խիզախ յայտարարութենէն, որով ան աշխարհին կոչ ուղղած էր ճանչնալու «Քսաներորդ դարու առաջին Ցեղասպանութիւնը»:

Յօդուածին մէջ Ռապպին եւ Հարիւրամեակի յանձնաժողովը հետեւեալ հարցը ուղղեցին դեսպան Փաուըրին. «Որպէս առաջնորդող ձայն ընդդէմ Ցեղասպանութեան, արդեօք դուք հաւատարիմ պիտի մնա՞ք ձեր սկզբունքներուն, թէ պիտի դառնաք հերթական անձերէն մէկը, որ պաշտօն ստանձնելով կը լռէ եւ կը դառնայ «Խնդիր դժոխքէն»-ի մէկ մասը»:

Երկրորդ յայտարարութիւնը, որ Օպամային կը յիշեցնէր Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ իր տուած խոստումը, յայտնուեցաւ «Լոս Անճելըս Թայմս» թերթի Ապրիլ 24-ի թիւին մէջ: Թերթին էջին մեծ մասը գրաւեցնող յօդուածին մէջ, որ տեղադրուած էր Քալիֆորնիոյ Օրէնճ շրջանի գործարար Էտ Մուրատեանի կողմէ, կը պնդէր. «Ժամանակն է ըլլալ այն ղեկավարը, որ դուք խոստացած էիք ըլլալ: Պարոն Նախագահ, ճիշտ ժամանակն է, որ այս 100-րդ տարելիցին կատարէք ձեր տուած խոստումը»: Մուրատեանի յօդուածին մէջ պատկերուած էր Օպամայի լուսանկարը, դեսպան Մորկենթաուի 1915-ի Յուլիս 16-ի հեռագիրը ուղղուած ԱՖ Նախարարութեան եւ 1915-ի Դեկտեմբեր 15-ի «Նիւ Եորք Թայմս» թերթի լրատուութեան վերնագիրը: Յօդուածը կ'աւարտէր՝ «Ժամանակն է ճանչնալու Հայոց Ցեղասպանութիւնը» կոչով:

Եթէ այս յօդուածներէն մէկը կամ երկուքը որոշ անհանգստութիւն պատճառած են Սպիտակ տան պաշտօնեաներուն, ապա արժէր անոնց վրայ այդքան գումար ծախսել...

Յօդուածները պէտք է ընդգրկէին նաեւ Օպամայի սեփական խօսքերը իր «Յոյսի յանդգնութիւնը» գիրքէն. «Ըսել բան մը քարոզարշաւի ընթացքին եւ ընել այլ բան պաշտօնը ստանձնելէ ետք, կը նշանակէ՝ դուն տիպար երկերեսանի քաղաքական գործիչ ես»:

Թէեւ ոգեկոչման ձեռնարկները Ուաշինկթընի մէջ կազմակերպուած էին շատ բարձր արհեստավարժ մակարդակով, սակայն լուրջ բացթողում մը կար: Երբ Մայիս 9-ին կայացած հարիւրամեակի ձեռնարկի ժամանակ յատուկ մրցանակներ շնորհուեցան նշանաւոր

Շար.ը էջ 19

Ճաշկերոյթ Պարահանդէս
կազմակերպութեամբ
Նոր Սերունդ Մշակութային Միութեան
Լաս Վեկասի Վարչութեան
Dinner Dance
Organised by
Nor Serount Cultural Association
Las Vegas Chapter
Տեղի կ'ունենայ
Ուրբաթ, Յունիս 12, 2015
երեկոյեան ժամը 7:30 էն սկսեալ
Friday, June 12, 2015
Starting at 7:30p.m.
Հայ Առաքելական Եկեղեցի
At Armenian Apostolic Church Hall
6820 Ponderosa Way Las Vegas, NV 89118 (S. Rainbow Blvd.)
Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ
Կարէն Հակոբյան և իր նուագախումբը
Performances by
Karen Hagopyan & his band
Մանրամասնութեան համար հեռաձայնել
For More Info call:
Մուտքի Նուէր Donation $ 35.00
702.686.7015 702.546.5025

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ԴԱՍԱԳԻՐՔ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

*2014 թ. վերջաւորութեան լոյս տեսաւ Երեւանի պետական համալսարանի հրատարակչութենէն դասագիրք մը, որ կուգայ լրացնելու պահանջք մը, որուն այժմէականութիւնը զգացուած էր նոյնիսկ սովետական համակարգի պայմաններու մէջ: Խօսքը «Թուրքիայի Հանրապետութեան պատմութիւն» գրքի մասին է, որ իբրեւ համալսարանի դասագիրք պիտի օգտագործուի Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի համակարգի մէջ:*




*Մինչեւ այժմ օգտագործուած դասագրքերը սովորաբար խորհրդային Թուրքագէտներու կողմէ հրատարակուած աշխատութիւններ եղած են: Բնականաբար, այս արտադրութիւնները մարքսիզմ-լենինիզմի տեսական հիմնադրոյթներու տեսանկիւնէն մեկնաբանուած են: Ընդ որում, դասակարգային պայքարի օրինաչափութիւններով քաղաքականացուած եւ իրականութիւններու աղաւաղուած բնութագրութիւններով խճողուած այս հրատարակութիւնները, մեծաւ մասամբ՝ ռուսերէնէ փոխառնուած կամ թարգմանուած, չէին լրացներ գիտական, առարկայական եւ իրական պատմութիւնը: Օրինակի համար, յիշենք այն, որ Մուստաֆա Քեմալի ղեկավարութեամբ ծաւալուած ազգայնամոլական շարժումը բնութագրուած էր որպէս Թուրք ժողովրդի ազգային-ազատագրական պայքար արեւմտեան իմպերիալիզմի եւ անոր կամակատարներու դէմ: Անոնց կողքին ներառնուած էր նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը:*

*Բնականաբար, Թուրքիայի նորագոյն շրջանի ճշգրիտ պատումը եւ դասագրքի անհրաժեշտութիւնը անյետաձգելի կերպով գիտակցուած էր նոյնիսկ խորհրդային շրջանին: Առ այդ, հայ Թրքագէտներ արդէն յաջողած էին հրապարակ գալ շարք մը հիմնական աշխատութիւններով, որոնք չէին ենթարկուեր խորհրդային գաղափարական ու քաղաքական պարտադրանքներուն: Բայց այդ պակասը լրացնելու համար դասագիրք հրատարակելը անկարելի էր, քանի որ համալսարանական դասագրքերը պիտի վաւերացուէին Մոսկուայէն:*

*Այս հրատարակուած դասագիրքը այդ բացն է որ կը գոցէ: Պատասխանատու խմբագիրը այս հատորին՝ Փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան, գրած է նախաբան մը, որմէ լայնօրէն եւ երբեմն բառացի օգտուած ենք այս գիրքը ծանօթացնելու համար, եւ իր գործընկերները՝ Դոցենտ Ռուբէն Մելքոնեան, Դոցենտ Արթուր Դումանեան, Վահրամ Տէր-Մաթեւոսեան, Յակոբ Զաքըրեան եւ Անուշ Յովհաննիսեան, կը ներկայանան պատկառելի աշխատանքով, որուն նպատակն է պատրաստել համալսարանական ուսանողները եւ զինել հիմնական գիտելիքներով, որոնք օգտակար պիտի դառնան մանաւանդ քաղաքական-դիւանագիտական ասպարէզն ընտրողներուն: Պիտի վերջապէս իմանանք, թէ ովքեր են եւ ինչ աղբիւրէն կը խմեն այսօրուայ մեր դրացի-հակառակորդ քաղաքական-դիւանագիտական գործիչները, որոնց հետ առճակատումէ աւելի երկխօսութեան պէտք ունինք: Հեղինակները մասնաւոր հոգածութեամբ հետեւած են Հայաստանի Թրքագէտներու աւանդներուն՝ օգտագործելով անոնց աշխատութիւնները, որոնց կողքին նաեւ՝ արտերկրի-սփիւռքի մէջ հրատարակուած նորագոյն աշխատութիւնները: Մասնաւոր քննադատական մօտեցումով նկատի առնուած են Թրքական պաշտօնական պատմագրութեան ներկայացուցիչներու աշխատութիւններու մէջ մեր պատմութիւնը աղաւաղող տեղեկութիւնները: Ընթերցողին հետաքրքրութիւնը գոհացնելու համար յիշենք գրքի գլխակարգումները.*

*1. Օսմանեան կայսրութեան փլուզումը եւ ազգայնամոլական շարժման յաղթանակը (1918-1922), Ռ. Սաֆրաստեան,*

*2. Քեմալական հանրապետութեան ձեւաւորումը (1923-1938), Ա. Հովհաննիսեան,*

*3. Թուրքիան Երկրորդ աշխարհամարտի շրջանում. Յետպատերազմեան զարգացումներ (1939-1950), Ռ. Մելքոնեան,*

*4. Ժողովրդավարական կուսակցութեան կառավարման տարիները (1950-1960), Ռ. Մելքոնեան,*

*5. Քաղաքական պայքարի սրումը, ռազմական յեղաշրջումներ (1960-1980), Ա. Դումանեան,*

*6. Ռազմական յեղաշրջում, բարեփոխումներ (1980-1995), Վ. Տէր-Մաթեւոսեան,*

*7. Քաղաքական համակարգի ճգնաժամը. «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան կառավարման շրջանը (1996-2011), Վ. Տէր-Մաթեւոսեան:*

*Վերոյիշեալ իւրաքանչիւր բաժնին կը հետեւի ,Գրականութիւն լրացուցիչ ընթերցանութեան համար յաւելուածը, որ ուսանողին կամ ընթերցողին առիթ կուտայ ընդլայնելու իր գիտելիքները տուեալ բաժնի մէջ արծարծուած նիւթերու շուրջ:*

*Դասագրքի վերջաւորութեան կայ ընդհանուր «Յաւելուածներ» բաժինը, ուր մասնաւոր լուսարձակին տակ կ'առնուին զանազան կուսակցութիւններ՝ թիւով եօթը, որոնք այս կամ այն առիթներով ղեկավար դիրքերու վրայ եղած են մէջընդմէջ՝ զինուորական բռնի միջամտութիւններով:*

*«Յաւելուածներու» երկրորդ մասը նուիրուած է «Ազդեցիկ քաղաքական գործիչներ» նիւթին: Այնտեղ հակիրճ, բայց գրեթէ ամբողջական բնութագրուած են Մուստաֆա Քեմալ Աթաթիւրք կոչեցեալէն սկսած մինչեւ այժմեան Ռէջէփ Թայիբ Էրտողանը իբրեւ կարեւոր եւ ազդեցիկ քաղաքական գործիչներ:*

*Երրորդ մասի մէջ կը ներկայացուի «Թուրքիայի Հանրապետութեան պատմական իրադարձութիւններէ ժամանակագրութիւնը» 1914-էն սկսեալ մինչեւ 2011 թուականները:*

*Դասագիրքը կարեւոր ներդրում մըն է մասնաւորաբար համալսարանական ուսանողներու համար եւ ընդհանրապէս հետաքրքրուած ընթերցասէր հասարակութեան համար: Գնահատանքով պէտք է նշել նաեւ, որ տպագրութիւնը իրականացած է Ժիրայր Նշանեան հիմնադրամի (ԱՄՆ) մեկենասութեամբ: Հիմնադրամը արդէն մօտ տասը տարի է, որ համալսարանական ուսանողներու (թիւով 70-էն աւելի) կրթաթոշակ տրամադրելով եւ պարբերաբար նշանակալի գրքեր հրատարակելով կը մասնակցի հայրենաշինութեան մտաւոր-հոգեւոր առաջադիմութեան սուրբ գործին:*

*Ներկայացուած գրքի տպագրութեան ու հրատարկման յաջողութեանն իրենց գործնական ներդրումը ունեցած են Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Չուլջեանը (Վանաձոր), Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդի մօտ Մայր Աթոռի ներկայացուցիչ եւ ԱՄՆ Արեւելեան թեմի պատուիրակ Գերշ. Վիգէն Արք. Այգազեանը (ք. Ուաշինգթոն, ԱՄՆ) եւ տողերս գրողը: Վերջին երկուքը նաեւ գործուն անդամներ են Նշանեան Հիմնադրամի տնօրէն կազմին:*

**Գիրքը ներկայացնող՝**
**Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Գալայճեան,**
**Պատուակալ հովիւ Ուաշինգթոնի**

## ԱՏԱՆԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԲԱԿԸ՝ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՇԻՐԻՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ, ՄԱՆԿԱԿԱՆ ԶԲՕՍԱՅԳԻ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ Է



*Ատանայի Քոզան (Սիս) գաւառին մէջ գտնուող հայկական վանական համալիրի տարածքին մանկական զբօսայգի կա ռուցուած է:*

*Ըստ Ermenihaber.am-ի՝ Թրքական demokrathaber.com-ը կը գրէ, որ նշեալ վանական համալիրը կը պատկանի այն հայկական եկեղեցական գոյքերուն շարքին, որոնց վերադարձի պահանջով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Առաջինը վերջերս դիմած է Թրքական դատարան:*

*Աղբիւրին վկայութեամբ՝ շուրջ 700 տարի շրջանի հայերու համար հոգեւոր կեդրոն ծառայած վանական համալիրի վերադարձման պահանջով դատական գործին ի պատասխան՝ Քոզանի քաղաքապետ, Թուրքիոյ ընդդիմադիր «Ազգայնական շարժում» կուսակցութեան (ԱՇԿ- MHP) ներկայացուցիչ Մուսա Օզթուրքը յայտարարած է. «Ոեւէ մէկուն անգամ մէկ թիզ հայրենիքի հող չունինք տալու», եւ վանական համալիրի բակը մանկական զբօսայգի կառուցած է:*

*«1915-ին Հայոց Ցեղասպանութեան յաջորդած շրջանին՝ 1921-ին, Ատանայի Քոզան գաւառի հայկական վանական համալիրը 48 ժամուան ընթացքին յանձնելու հրաման եկաւ, որուն հետեւանքով հայ հոգեւորականները ստիպուած եղան լքելու Ատանան:*

*Հարկադրաբար Լիբանան տեղափոխուած հայ հոգեւորականները մայրաքաղաք Պէյրութի Անթիլիաս շրջանին մէջ նորէն հիմնեցին Կիլիկիոյ հայկական կաթողիկոսարանը»,- կը գրէ Թրքական պարբերականը:*

*Հայկական երկու կարեւորագոյն հոգեւոր կեդրոններէն մէկը՝ Կիլիկիոյ հայկական կաթողիկոսարանը, Ապրիլ 27-ին դիմելով Թուրքիոյ սահմանադրական դատարան՝ պահանջած է վերադարձնել Ատանայի (Սիսի) հայկական Սուրբ Սոփիա եկեղեցին, վանքապատկան կառոյցները եւ այլ եկեղեցապատկան գոյքեր:*

*«Յայտնի է, որ լքուած եւ անհոգութեան վիճակի մէջ յայտնուած, գանձեր որոնողներու կողմէ անխնայ աւերուող Ատանայի հայկական վանական համալիրի վերաբերեալ 1950 թուականին կազմաքանդման հրաման եղած է, իսկ աւերուած եկեղեցւոյ քարերը որպէս շինանիւթ օգտագործուած են շրջակայքի տուներու կառուցման ժամանակ»,- կը գրէ աղբիւրը:*

*Ատանայի հայկական եկեղեցւոյ բակը, ուր, ի դէպ, կը գտնուին հայ հոգեւորականներու շիրիմները, մանկական զբօսայգիի կառուցումը բողոքի ալիք յառաջացուցած է եւ լայն քննարկումներու առիթ հանդիսացած է ընկերային ցանցերու մէջ՝ որակուելով որպէս 1915 թուականի շարունակութիւն՝ մշակութային ցեղասպանութիւն:*



# Massis Weekly

Volume 35, No. 21 | Saturday, June 6, 2015


## FM Nalbandian: Armenia Closely Follows the Developments in Syria

YEREVAN -- Armenia closely follows the developments in Syria and tries to find ways to ensure the security of Syrian Armenians, Foreign Minister Edward Nalbandian said at a joint press conference with visiting OSCE Chairman-in-Office, Serbian Foreign Minister Ivica Dacic.

Speaking about his recent visit to Syria, the Foreign Minister said the objective was to see the developments on the spot.

"We consider that it will be possible to solve the crisis by immediately stopping the military actions, launching dialogue between all political forces in Syria," Minister Nalbandian said.

"There are thousands of Syrian Armenians living in Armenia today. The Armenian leadership has been doing and continues to do its best to support them," the Minister added.

"It was important to meet with representatives of the Syrian Armenian community, to offer them our support and to reconfirm that Armenia stands by them," Edward Nalbandian said.

## Brazil Federal Senate Unanimously Passes Resolution on Armenian Genocide



BRAZILIA — The Federal Senate of Brazil on Friday unanimously adopted a resolution officially recognizing the Armenian Genocide. Resolution No 550/2015 was introduced by Chairman of the Committee on Foreign Affairs and National Defense of the Senate, Federal Senator Aloizio Nunez Fereira Filio and Federal Senator Jose Sera.

The Resolution adopted by the Federal Senate of Brazil reads as follows: "The Federal Senate of Brazil recognizes the Armenian nation's Genocide, whose 100th anniversary was observed on April 24, 2015. It pays homage to the Genocide victims and appreciates the contribution – made by the thousands of Brazilian-Armenian descendents of Armenian refugees – to the country's social, economic and cultural life. The Senate emphasizes that never ever should any crime of genocide be forgotten in order not to be repeated."

The Foreign Ministry of Armenia Edward Nalbandian issued a statement hailing the Brazilian top legislators' unanimous decision to recognize the Genocide.

"The irreversible process of international recognition of the Armenian Genocide continues. Armenia welcomes the adoption of a resolution on the recognition of the Armenian Genocide by the Federal Senate of the Federal Republic of Brazil.

"With the adoption of this resolution, Brazil took a significant step that will contribute to the efforts of the international community aimed at preventing future genocides and new crimes against humanity," reads the statement.

## Anti-Armenian PACE Rapporteur Gets Turkish Citizenship

ISTANBUL -- A former British lawmaker who was tasked by the Council of Europe's Parliamentary Assembly (PACE) last year with drafting a report on the Nagorno-Karabakh conflict has reportedly become a Turkish citizen.

According to the Istanbul-based daily "Sabah," Foreign Minister Mevlut Cavusoglu personally handed a Turkish ID card to the Conservative MP, Robert Walter, at the Turkish Embassy in London last week. Walter, who is married to a Turkish woman, expressed delight at the award, reported the paper. It also posted a photograph of the ceremony on its website.

Walter was named by the PACE leadership to launch a fact-finding mission to the Karabakh conflict zone and

Continued on page 4

## Azerbaijan Wants New OSCE Minsk Group Format




YEREVAN (RFE/RL) — Azerbaijan believes that the United States, Russia and France must no longer be the only countries spearheading international efforts to end the Nagorno-Karabakh conflict, the chairman-in-office of the Organization for Security and Cooperation in Europe said on Wednesday.

"Azerbaijan is proposing an increase in the number of OSCE Minsk Group co-chairs," Ivica Dacic, who is also Serbia's foreign minister, said after talks in Yerevan with his Armenian counterpart Edward Nalbandian.

Dacic, who visited Baku earlier this week, did not specify whether the Azerbaijani government has suggested that particular OSCE member states take over as additional co-chairs of the Minsk Group.

"I don't think it's a new proposal," he told a joint news conference with Nalbandian. "But in order to accept this proposal we need a decision taken by consensus by all participating countries. We may look into this issue in the future."

"But I think that the OSCE Minsk Group must continue to work. Even if one party is not happy with its work, it's the only format where different negotiations and dialogue have been going on and it must be preserved," Dacic said.

In recent years President Ilham Aliyev and other Azerbaijani officials have increasingly criticized the U.S., Russian and French mediators for not helping Baku regain control over Karabakh and surrounding territories. Some of them have accused the West and Russia of pro-Armenian bias.

Continued on page 4

## Turkish Politician Expelled from Belgium Party for Refusing to Recognize Armenian Genocide



BRUSSELS — A Turkish member of the Belgian parliament was expelled from her political party on Friday for not recognizing the Armenian Genocide.

Mahinur Ozdemir, who is the first woman with a headscarf to become member of the Belgian parliament, told Anadolu Agency that she refused to recognize the 1915 events as genocide and was later expelled by a committee from her party, the Humanist Democratic Centre (CHD).

President of the CHD, Benoit Lutgen, said last week that any member of the CHD who denied the Armenian genocide would be expelled from the party. "Should there be any genocide denier in our party, then he or she will be immediately discarded." Lutgen stated.

Ozdemir boycotted a moment of silence in the parliament to commemorate the 1915 Genocide, she said, "there is no court order that enforces one to recognize the events concerning Armenians and that the European Parliament's resolution in April for recognition of the 1915 events is not binding".

Ozdemir told Anadolu Agency that CHD President Lutgen wanted her to sign a communique recognizing the 1915 events and told her she would be expelled from the party if she refused.

## Survey: 20 Percent of Turkish People Consider Armenia as Threat

ISTANBUL -- According to the results of a recent survey on the Turkey's foreign policy by Istanbul's Kadir Has University, Turkish people consider Israel and the US as the biggest threats to their country. The survey was conducted in April among 1,000 people of the urban populations across Turkey, Today's Zaman reports.

In response to a question concerning which country they see as the biggest threat to Turkey, 42.6 percent of respondents said Israel, 35.3 percent mentioning the United States. Syria (22.1 percent) and Armenia (20.3 percent) come next in the list.

Although Turkey is officially a candidate country for European Union membership, according to 10.2 percent of respondents, EU countries pose a threat to Turkey.

8.7 percent of respondents said that no country constitutes a threat to Turkey, while 38.9 percent of the population found that "Turkey has no friends."

Among friendly countries Turkish people singled out Azerbaijan (37.5 percent), Northern Cyprus (8.9 percent) and Bosnia and Herzegovina (6 percent).

## Former House Speaker and Turkish Lobbyist Dennis Hastert Indicted on Federal Charges



CHICAGO -- Former U.S. House Speaker Dennis Hastert was charged on Thursday with lying to the F.B.I. and structuring cash withdrawals to avoid bank reporting requirements, federal authorities said.

Mr. Hastert, 73, a longtime Republican leader who now works as a lobbyist in Washington, was providing money to an unnamed person in order to "compensate for and conceal his prior misconduct" against that person, according to a federal indictment issued by the United States attorney for the Northern District of Illinois.

The indictment says that Mr. Hastert, who was once a high school teacher and wrestling coach in a small Illinois town, paid $1.7 million to the person from 2010 to 2014.

As Speaker of the U.S. House, in October of 2000, Dennis Hastert (in concert with President Bill Clinton) killed the Armenian Genocide Resolution moments before its adoption.

Hastert had announced he would support the Armenian Genocide resolution. The resolution, vehemently opposed by Turkey, had passed the Human Rights Subcommittee of the House and the International Relations Committee but Hastert, although first supporting it, withdrew the resolution on the eve of the full House vote. He explained this by saying that he had received a letter from president Bill Clinton asking him to withdraw it, because it would harm U.S. interests.

A September 2005 article in Vanity Fair revealed that during her work, former FBI translator Sibel Edmonds had heard Turkish wiretap targets boast of covert relations with Hastert. The article states, "the targets reportedly discussed giving Hastert tens of thousands of dollars in surreptitious payments in exchange for political favors and information." An official at the Turkish Consulate is said to have claimed in one recording, that was translated by Edmonds, that the price for Hastert to withdraw the Armenian Genocide resolution would have been at least $500,000.

Following his congressional career, Hastert received a $35,000 per month contract lobbying on behalf of Turkey. Hastert and former congressman Dick Gephardt's firms have split a $1.4 million annual lobbying contract from Turkey.

## IMF Forecasts Zero Growth in Armenia Economy

YEREVAN (RFE/RL) -- The International Monetary Fund has slightly improved its outlook for the Armenian economy but still thinks that it will not grow this year, the IMF's resident representative in Yerevan, Teresa Daban Sanchez, said on Tuesday.

In the most recent World Economic Outlook published in April, the IMF forecast that Armenia's Gross Domestic Product will likely shrink by 1 percent in 2015 due to knock-on effects of a recession in Russia.

According to Daban Sanchez, the fund now expects zero growth in the country. She argued that oil prices stabilized in February, somewhat shoring up the Russian ruble. This should reflect positively on the Armenian economy, she said.

"We have moved from the minus one [growth] to the zero," the IMF official said. She went on caution, though, that even this economic outlook is fraught with "huge uncertainty."

The Armenian government has publicly disagreed with such gloomy projections. Prime Minister Hovik Abrahamian last month forecast an economic growth rate of "at least 2-3 percent." He claimed that it could even reach 4 percent.

"This is not the first time we have differences with the government," Daban Sanchez told reporters. "We had them in the past. We have that in other countries. It's OK."

Daban Sanchez reaffirmed the IMF view that the government should seek to offset the fallout from the Russian economic downturn with more aggressive reforms that would significantly improve Armenia's flawed business environment. "Armenia needs a more dynamic economy," she stressed. "That means more competition, more players, better rules of the game … a justice system that is fair."

"That's what's working in other countries and what's not working in Armenia," the IMF representative went on. While the situation with the rule of law has seemingly improved over the past decade "we are still below where Armenia should be," she added.

The president of the European Bank for Reconstruction and Development, Suma Chakrabarti, also called for such reforms .

## Pro-Kurdish HDP Party to Seek Recognition of the Armenian Genocide




ISTANBUL — The pro-Kurdish People's Democratic Party (HDP) of Turkey will seek soonest normalization of Armenian-Turkish relations and recognition of the Armenian Genocide in the Ottoman Empire, in case it succeeds in the forthcoming parliamentary elections, Vice-President of the Party Nazmi Gur told RIA Novosti.

Twenty parties are running for Parliament in the June 7 elections, four of them having a real chance to clear the 10 percent threshold. Survey results suggest that 41% are going to vote for the ruling Justice and Development Party.

The Republican People's Party can count for 29 percent of the votes. The Nationalist Movement Party and the pro-Kurdish People's Democratic Party are likely to receive 14 and 11 percent respectively.

"We stand for implementation of the protocols on the normalization of relations of Armenia and the opening of the shared border. The Turkish-Armenian relations should not be linked to the settlement of the Karabakh conflict. It's a question of the Armenian and Azerbaijani nations, which should be solved through negotiations. We also stand for the recognition of the genocide of Armenians in the Ottoman Empire," Gur said.

## Russia's Gazprom to Buy Iran-Armenia Pipeline

YEREVAN -- A senior Armenian official on Wednesday revealed the planned sale of a key section of a pipeline transporting natural gas from Iran to Armenia's national gas distribution network owned by Russia's Gazprom giant.

The 41-kilometer section runs from the Iranian border to the southeastern Armenian town of Kajaran. The rest of the pipeline completed in 2008 is already owned by the Gazprom-Armenia operator.

Deputy Energy Minister Ara Simonian told RFE/RL's Armenian service (Azatutyun.am) that the Armenian government and Gazprom have already signed a "tentative agreement" on the sale of the Meghri-Kajaran section. He refused to disclose its financial terms or specify when a final deal could be signed.

A spokeswoman for Gazprom-Armenia, Shushan Sardarian, confirmed this information. Sardarian revealed that the tentative accord was finalized in 2007 with a $30 million "prepayment" made by the company at the time. She said that Gazprom-Armenia will likely pay another $9 million to complete the takeover.

Simonian argued that such a takeover will make an economic sense because the Gazprom subsidiary already owns Armenia's practically entire gas infrastructure. "We believe that private companies are much better than the state at managing such energy facilities," he said.

The Iran-Armenia pipeline was constructed with the aim of easing Armenia's heavy dependence on Russia for energy resources. Critics have long said that Gazprom could exploit its control over the Armenian gas infrastructure to minimize the importance of that alternative source of gas supplies.

Armenia imports roughly 2 cubic meters of Russian gas each year, compared with only 500 million cubic meters supplied by Iran. The Iranian gas is mainly delivered to a thermal-power plant in Yerevan which pays for it with electricity supplies to the Islamic Republic.

Armenia currently pays Gazprom $165 per thousand cubic meters of Russian gas. The Russian giant charges European countries more than $300 per thousand cubic meters.

# Sotheby's Withdraws Sale of Aivazovsky Painting after Russia Alleged it was Stolen



LONDON -- The international auction house Sotheby's withdrew from auction on Tuesday a painting by Ivan Aivazovsky that Russia's Interior Ministry said last week had been stolen in 1997 from a private collection in Moscow, Reuters reports.

The auction house said "Evening in Cairo" by Russian artist of Armenian descent Ivan Aivazovsky, had been withdrawn from sale at the request of the consignor, or seller.

Russia's Interior Ministry had asked that British police block the auction.

Sotheby's said last week it had found no record of the painting in the databases of stolen art and would proceed with the sale on June 2, with the agreement of the consignor and the family which said it had been stolen.

In an emailed statement on Tuesday, Sotheby's said: "Ivan Aivazovsky's Evening in Cairo, Lot 23, in Sotheby's 2 June 2015 Sale of Russian Pictures has been withdrawn at the request of the consignor."

It said there was "no further information available".

Russia's Interior Ministry declined immediate comment, saying it would make its position clear later on Tuesday.

The Interior Ministry did not name the complainant but Sotheby's earlier identified them as the Nosenko family, which Russian media said had purchased the painting in the 1940s.

Praised for his technique to capture sunsets and moonlight, Aivazovsky created his "Evening in Cairo" in 1870. He visited Egypt during the opening of Suez Canal a year earlier. The sought-after painting was due to be sold in London on June 2nd, with a pre-sale price estimate of 1.5-2 million pounds ($2-$3 million).

The Sotheby's website had listed the work's provenance as being in the collection of N.I. Dedov.

Sotheby's kept the identity of the seller confidential but said that it had acquired the painting in good faith in 2000.

# Kiss the Ground – A New Armenia: Exhibition Opens in Boston

"Kiss the Ground — A New Armenia (Part 3)," the culmination of a series of exhibitions marking the centennial of the Armenian Genocide, delineates the aftermath of trauma. The first two (solo shows) were at the Armenian Library and Museum of America, in Watertown; this group show is at the Cambridge School of Weston's Thompson Gallery, the Boston Globe reports.

That's twofold trauma: the massacre of 1.5 million Armenians by forces of the Ottoman Empire between 1915 and 1922, and the Turkish government's continued refusal to acknowledge that a genocide occurred.

The exhibition, curated by gallery director Todd Bartel, is sometimes furious, sometimes thoughtful and tender, sometimes clumsy. In all its colors, it reflects the experience of surviving trauma.

Some of John Avakian's monoprints — searing images built in part on historic photos — are almost too hard to look at. Political cartoons in an accompanying show by Lucine Kasbarian skewer Turkish officials and diplomatic responses pandering to their denial.

Satire has its place, but the best works in "Kiss the Ground" are less reactive. They question and explore the impact of the genocide. Art helps us to look at pain. Ideally, it makes space to help us comprehend and integrate even the most terrible losses.

Jessica Sperandio's "Blue Smoke," a wall-mounted cut acrylic work, describes a supine man under a knotty, spiky cloud. A genocide survivor inspired it: He came to the United States, worked at General Electric, and suffered a terrible head injury, after which he lay on the floor all day smoking. This is his desolate haze.

"Tattoo Trails I," Adrienne Der Marderosian's installation of prints, depicts hunched figures in long coats. She collages them with maps and cityscapes; figures repeat and disappear. They are disenfranchised; the sheer numbers make them an army of the lost.

# Children's Park Built on Territory of Sis Catholicosate



ADANA -- A children's park was built on the territory of the Armenian historic Catholicosate of Sis (currently Kozan, Adana province), Ermenihaber.am reports.

Catholicos Aram I of the Great House of Cilicia had filed a lawsuit to reclaim Sis Catholicosate from Turkey on April 28.

In response to the lawsuit claiming the return of the monastic complex that has served as a religious centre for the local Armenians for 700 years, the mayor of Kozan, Turkish Nationalist Movement Party member Musa Öztürk declared that "not even an iota of land is to be handed over to anyone" and built a children's park on the territory of the complex, according to Turkish Democrat Haber.

"In the period following the Armenian Genocide of 1915, precisely in 1921, an order came urging to hand over the monastic complex of Kozan within 48 hours, forcing the Armenian clergymen to leave Adana.

Once forcibly transferred to Lebanon, the Armenian priests founded the Armenian Catholicosate of Cilicia again in Antelias, Beirut.

It is well known that a demolition order was issued on the Armenian monastic complex of Adana in 1950 that was abandoned and neglected, ruthlessly demolished by treasure hunters, while the stones of the destroyed church were used as building material during the construction of the surrounding houses," the Turkish source says.

The construction of the children's park in the Armenian Church yard in Adana, where Armenian clergymen are resting, caused a storm of protest and an extensive debate in social networks and is being characterized as the continuation of 1915, a cultural genocide.

# 'With You, Armenia' Pianist Evgeny Kissin Honors Memory of Genocide Victims



This month Carnegie Hall had to set up five rows of stage seats to meet the demand for the Russian pianist Evgeny Kissin's much-anticipated solo recital on May 26. This was an unusual and intensely meaningful occasion.

Kissin took part in "With You, Armenia: A Concert to Commemorate the Centennial of the Armenian Genocide." Sponsored by the Yerevan Perspectives International Music Festival, the event was part of an international tour featuring the impressive Hover State Chamber Choir, founded by Sona Hovhannisyan, who conducted the impressive 25-voice ensemble in the rewarding first half of the program. There were arrangements of Armenian folk songs and liturgical works, several contemporary selections, a Britten carol and the world premiere of a choral setting of Psalm 3 by the Polish composer Krzysztof Penderecki composed in remembrance of the Genocide, the New York Times reports.

After intermission, Kissin played four substantive Chopin works, including the Fantasy in F minor and Scherzo No. 2.

The chorus began with folk songs arranged by the Armenian priest and composer Komitas (1869-1935), a choir director and pioneer of Armenian national music who spent time in a prison camp during the Genocide. Several singers held chiming metal pieces that provided delicate tones and rhythmic figures during these selections. "Lusnake los i, Babo" ("The Moon Is Bright, Grandpa"), the first offering, was a lovely song with wistful lyrical turns and melting harmonies supported by earthy, steady bass drones.

"Hoy, Im Nazani Yare" ("Hoy, My Graceful Sweetheart"), another Komitas arrangement, was fleet and jaunty with shouted rhythmic accents, though tinged with sadness. Penderecki's Psalm 3 ("O Lord, how many are my foes!") had a musical language stepped in the modal idiom of Armenian folk music yet charged with piercing contemporary chords.

The ovation was tumultuous, even more so after Kissin, for an encore, played a mournful Armenian song. He ended the evening with a heroic account of Chopin's famous Polonaise in A flat, and this time the music danced defiantly.

## New Publications: "Remembering the Armenian Genocide" 1915 by Patrick Thomas

"Remembering the Armenian Genocide" 1915, a book by Patrick Thomas, is dedicated with respect and friendship to the Armenians of Wales and Ireland, in memory of the members of their families who perished in the Genocide of Armenians in Ottoman Turkey during the First World War.




Author Patrick Thomas was born in Welshpool in 1952, and educated at schools in England. He is a graduate of Cambridge and Leeds Universities, and gained his doctorate from the University of Wales.

After ordination to the priesthood of the Church in Wales in 1980, he has served his entire ministry in bilingual parishes in West Wales. A member of the Welsh Language Board from 1994 to 2000, he broadcasts regularly in both Welsh and English. He has a deep interest in Armenian history, culture and spirituality, and is a member of the Anglican-Oriental Orthodox International Commission and honorary pastor to Armenians in Wales.

In his book – "Remembering the Genocide" 1915 Patrick Thomas shows why it remains profoundly important to acknowledge and remember the first major genocide of the 20th century, by drawing on eye-witness material from wide variety of sources.

Recent events in the Middle East have underlined the threat of violent annihilation that still faces many vulnerable minorities there. The fate of the Armenians a century ago provides a timely warning to us today, one that should never be forgotten.

## "Komitas, The Artist and The Martyr" by Serge Momjian

There have been several publications about the life of Soghomon Soghomonian (1869-1935). Musicologist, composer and an ordained priest, the man history remembers as "Komitas" is among the seminal figures of Armenian national music. "Komitas, The Artist and The Martyr," Serge Momjian's historical/biographical fiction may be the only novel to use dialogue to address Komitas' life.




Komitas is the skilful artist-priest who tours the remote villages in his homeland, collecting and transcribing folk songs. His long, scrupulous research work as an ethnomusicologist enables him to trace the pre-Christian roots of Armenian sacred music, and bring its folk music to a high standard. He lectures on these topics at the International Musical Society, to which he is admitted as the first non-European member.

He plays there a crucial role in introducing the unique musical heritage of Eastern cultures to the West. Although he is a celebrity musician and his lectures and songs are widely acclaimed, his secular performances of sacred music in his homeland and abroad put him on a collision course with the conservative clergy of his church, opening the gates of hell upon him.

On the night of 24 April 1915 – known as Red Sunday – Komitas is arrested along with 200 Armenian intellectuals and community leaders and deported far inland by the Ottoman government as a prelude to a premeditated plan to annihilate the Armenian population of Anatolia. Though he is among the few who are reprieved, the terrible nightmare he has experienced, from which he never mentally recovers, takes him into asylums, where he spends the last twenty years of his life in seclusion, his complex inner world governed by the ineradicable images of his past.

This compelling book, based on concrete facts and events and written in commemoration of the centenary of the Armenian Genocide, serves to make past periods and people come alive in an entertaining dialogue.

### Save the Date

NOV. 7, 2015-Saturday, St. Peter Church Ladies Society 57th Annual Fashion Show and Luncheon, One Hundred Years and Flourishing, at Four Seasons, Westlake Village, CA

## Ararat Home Board of Trustees Elects its Executive Committee for 2015-2016



**Ararat Home Board of Trustees Executive Committee: Nazar Ashjian (past chairman), Debbie Avedian, Armen Hampar (past chairman), Ron Nazeley, Joseph Kanimian, Michael Surmeian, Nadya Verabian, Vahe Vartan; Nora Hampar (not pictured)**

MISSION HILLS – The Ararat Home Board of Trustees elected its Executive Committee on April 16, 2015. The officers who are entrusted with guiding the organization through another successful year of growth include: Joseph Kanimian, Esq. (Chairman), Ron Nazeley (1st Vice Chair), Nora Hampar (2nd Vice Chair), Michael Surmeian, CPA (Treasurer), Vahe Vartanian (Assistant Treasurer), Nadya Verabian (Secretary), and Debbie Avedian (Assistant Secretary).

On March 1st, Ararat Home held its Annual Membership Meeting, when members and supporters came together to receive updates on the Home's past accomplishments and future goals as well as to elect members to the Board of Trustees for three-year terms. Trustees, administrators and the Chief Operating Officer reported on the state of the organization; and, supporting bodies presented an overview of their activities as well as their yearly contributions to the Home. Chairman Kanimian expressed his heartfelt congratulations to the Executive Committee and newly re-elected trustees: Raffi Balian, M.D., Peter Darakjian, Armen Hampar, Richard Jebejian, Rafi Mardirosian, Roy Martinian, D.D.S., Harout Mesrobian, M.D., Berj Shahbazian, and Nadya Verabian. And, acknowledging the remaining trustees who are continuing their terms – Nazar Ashjian, CPA, Vatche Bardakjian, M.D., Shahe Boyadjian, Gary Kaloostian, Maggie Mangassarian-Goschin, Edvin Minassian, Esq., Joseph Ouzounian, M.D., Kohar Pelter, MSN, Sinan Sinanian, and Arthur Zabounian, – he noted: "At Ararat Home, we are committed to our elders' welfare and will do our utmost to maintain the Home as a premier facility of its kind. On behalf of the Board of Trustees, I extend my gratitude to all our supporters, members, volunteers and auxiliary groups for their dedication and commitment to the objective of our beloved Home."

Ararat Home of Los Angeles has continuously been recognized for the exemplary service and care it provides to over 350 residents. The Assisted Living Facility has received zero-deficiency ratings for eight consecutive years from the California Department of Social Services for meeting all standards and having no violations. Similarly, Ararat Skilled Nursing Facility and Ararat Convalescent Hospital in Eagle Rock continue to hold five-star ratings from the U.S. Department of Health and Human Services' Centers for Medicare and Medicaid Services, which is the highest rating given to such facilities.

## Azerbaijan Wants New OSCE Format

**Continued from page 1**

"In the last 20 years the three countries co-chairing the OSCE Minsk Group have not taken a single step to settle the Nagorno-Karabakh conflict," Azerbaijan's Deputy Prime Minister Ali Hasanov charged last month.

Armenian leaders have repeatedly rejected this criticism, saying that the three mediating powers deserve praise for their joint efforts. Yerevan is therefore extremely unlikely to agree to any change in the negotiating format.

"Armenia believes that the Minsk Group is a fairly effective framework within which it is possible to achieve a settlement," Tigran Balayan, the Armenian Foreign Ministry spokesman, told RFE/RL's Armenian service (Azatutyun.am), commenting on Dacic's statement.

## Anti-Armenian PACE Rapporteur

**Continued from page 1**

prepare the report titled "Escalation of Violence in Nagorno-Karabakh and Other Occupied Territories of Azerbaijan."

This wording prompted vehement protests from Armenian members of the Strasbourg-based assembly and the government in Yerevan. They said that it predetermines Walter's findings and runs counter to statements made by U.S., Russian and French mediators trying to broker a Karabakh settlement.

The Armenian side has also accused Walter of having close ties with Azerbaijan's government, saying that the British parliamentarian has repeatedly defended Baku's dismal human rights record criticized by Western human rights groups.

Walter led a team of PACE members that observed Azerbaijan's last presidential election held in 2013. Unlike other Western observers who reported widespread fraud, the PACE mission concluded that the vote met democratic standards.

Walter, 67, did not run for reelection in Britain's recent general elections.

# ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓԻՒՌՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԻ «ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԵՐԸ» ԵՌՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ



*Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնի կազմակերպած «Սուրիոյ Հայերը» գիտաժողովը յաջողութեամբ աւարտեց իր աշխատանքները:*

*Արդարեւ, Կիրակի՝ 24 Մայիս 2015-ի երեկոյեան պաշտօնական բացման հանդիսութիւնը եւ յաջորդող երաժշտական խտասալիկի շնորհահանդէսը, Երկուշաբթի՝ 25 Մայիսէն Չորեքշաբթի՝ 27 Մայիս երկարող գիտաժողովի նիստերը, կլոր սեղանը, գիրքի շնորհահանդէսը եւ կից ցուցահանդէսը՝ Հայկազեան Համալսարանին կողմէ հրամցուած գիտական-մշակութային տօնահանդէսի վերածուեցան:*

*Կիրակի, 24 Մայիս 2015-ի երեկոյեան պաշտօնական բացման հանդիսութեան, կեդրոնի տնօրէն Դոկտ. Անդրանիկ Տագէսեան անդրադարձաւ կեդրոնին առաքելութեան եւ գիտաժողովին նշանակութեան: Պոսթընի Համալսարանէն, փրոֆեսոր Սիմոն Փայասլեան ներկայացուց սուրիահայութեան աւանդը: Ան հակիրճ ձեւով անդրադարձաւ Ցեղասպանութենէն ետք գաղութին վերակազմաւորման, մշակութային վերելքին՝ մինչեւ Բ. Համաշխարհային Պատերազմ: Փրոֆ. Փայասլեան ընդգծեց տասնամեակներու ընթացքին տեղի ունեցած եղափոխութիւնը՝ հայապահպանման հրամայականներուն հասկացութիւններուն:*

*Պաշտօնական բացման հանդիսութեան ընթերցուեցաւ Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան Հայկական Համայնքներու Բաժնի Տնօրէն Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի ողջոյնի գիրը:*

*Բացման հանդիսութիւնը աւարտեցաւ Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեանի փակման խօսքով:*

*Պաշտօնական բացման հանդիսութեան յաջորդեց տաղանդաւոր յօրինող հալէպահայ Շողակ Աբարդեան-Սելիմեանի երաժշտական խտասալիկին շնորհահանդէսը: Հեղինակուհին երաժշտախումբի ընկերակցութեամբ, հրապարակային կատարումով, հանրութեան հրամցուց իր այս երկրորդ խտասալիկին երգերէն փունջ մը:*

*Երկուշաբթի, 25 Մայիսի առաւօտեան ժամը 8.30-ին սկիզբ առին գիտաժողովի նիստերը: Եռօրեայ նիստերու ընթացքին կայացան ութ նիստեր, որոնց ընթացքին կարդացուեցան 33 զեկոյցներ՝ փորձագէտներէ ու մասնագէտներէ, որոնք եկած էին Ճափոնէն, Մ. Նահանգներէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն, Հայաստանի Հանրապետութենէն, Հալէպէն, Քեսապէն, եւ Պէյրութէն: Զեկոյցները խմբաւորուած էին ըստ բնագաւառներու 1) Պատմութիւն եւ Պետութիւն, 2) Հալէպ, 3) Մշակոյթ, 4) Ցեղասպանութեան Հետեւանքները, եւ 5) Սուրիահայութիւնը Սուրիոյ Ներկայ Տագնապին Դէմ Յանդիման:*

*Կարելի եղաւ սքայփով կապուիլ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութենէն Դոկտ. Ֆիրդուս Զաքարեանին, որ ի ներկայութեան Նախարարութեան աշխատակից ներու խումբին, ներկայացուց Նախարարութեան վերջերս տարած աշխատանքները՝ ՀՀ հաստատուած սուրիահայերու աջակցութեան առումով:*

*Գիտաժողովին մասնակիցները՝ փորձագէտներ թէ մասնագէտներ լաւապէս կը տիրապետէին իրենց արծարծած նիւթերուն: Զեկոյցները կը զանազանուէին թէ՛ նիւթի բնոյթով, թէ՛ մեթոտոլոժիով եւ թէ՛ յառաջացման եղանակով: Անոնցմէ ոմանք դաշտային հետազօտութեան, ուրիշներ բանասիրական ուսումնասիրութեան, ուրիշներ արխիւային պեղումներու, իսկ ուրիշներ՝ փաստաթուղթերու վերլուծութեան վրայ հիմնուած էին:*

*Ազատ, անմիջական, երկար եւ խորունկ քննարկումներու եւ վերլուծումներու ընդմէջէն լուսարձակի տակ առնուեցան սփիւռքահայութեան կեանքին մէջ սուրիահայութեան խաղացած պատմական դերն եւ ունեցած տեղը: Ընդհանրական արժեւորում կատարուեցաւ սուրիահայութեան նշանակութեան՝ հայ իրականութեան մէջ առհասարակ եւ հայրենիքի դերակատարութեան:*

*Գիտաժողովի ընթացքին անդրադարձ եղաւ հաստատութենական թէ անձնական արխիւներու առնչութեամբ անհրաժեշտ աշխատանքներ տանելու հարցին, նիւթերը՝ արագ գիտական միտքին հասանելի դարձնելուն, սուրիահայ կեանքի այլ երեսակներուն եւն.:*

*Գիտաժողովի ամբողջ տեւողութեան զեկուցաբերներուն կողքին ներկայ եղան Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշն. Շահան Արք. Սարգիսեան, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան եւ Դամասկոսի Հայոց Առաքելական Թեմի Առաջնորդ Գերշն. Արմաշ Եպս. Նալպանտեան: Ներկայ եղան նաեւ մեծաթիւ ունկնդիրներ, ինչ որ կ՛արտացոլացնէ նման գիտաժողովներու հանդէպ յառաջացած հետաքրքրութիւնը, որ սկսած է գիտական հետաքրքրութեան վերածուիլ մանաւանդ երիտասարդ համալսարանականներու եւ համալսարանաւարտներու մօտ: Ակնկալելի է, որ յառաջիկային լիբանահայ համալսարանաւարտներ զեկոյցներ ներկայացնեն, խտացնելով շարքերը Միջին Արեւելքի մէջ հայկական նիւթերով հետաքրքրուող եւ ուսումնասիրող արհեստավարժ մասնագէտներու եւ սիրողական փորձագէտներու:*

*Գիտաժողովը նաեւ մէկտեղում մը եղաւ սուրիաբնակ, նախկին սուրիահայ եւ ընդհանրապէս սուրիահայութեամբ եւ Սփիւռքի ուսումնասիրութեամբ զբաղող փորձագէտներու, հետազօտողներու, մտաւորականներու եւ հետաքրքրուողներու, ուր շաղախուեցան նոր մտածումներ, հաստատուեցան նոր ծանօթութիւններ եւ յարաբերութիւններ, որոնք վստահ ենք պիտի ծառայեն սփիւռքագիտութեան կայացման:*

*Լիբանահայութենէն ետք, սուրիահայութեան եւ յառաջիկային Յորդանանի ու Իրաքի հայութեան վրայ բեւեռուող այս լուսարձակները անուղղակիօրէն կը մղեն*



*առնչուող հայութիւնը, որ պատմութիւնը, դէպքերն ու զարգացումները շրջանի համապատկերով, Միջին Արեւելքի անդրսահմանային ելակէտերէ դիտէ եւ ընկալէ:*

*Ճիշդ է որ այս գիտաժողովը չէր միտեր վերլուծել Սուրիոյ եւ սուրիահայութեան ներկայ տագնապը, այդուհանդերձ -սուրիահայ անցեալի վերլուծումներու լոյսին տակ յառաջացած յստակատեսութեամբ - ներկաներէն իւրաքանչիւրը անձամբ՝ բնական մղումով եւ ինքնաբերաբար, խորաչափեց սուրիահայութեան ներկան եւ կատարեց մտորումներ՝ ապագային առնչութեամբ:*

*Բարերար Տիար Երջօ Սամուէլեանի նուիրատուութեամբ կեանքի կոչուած Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնը շնորհակալ է Գալուստ Կիւլպէնկեան Հաստատութեան Հայկական Համայնքներու Բաժնին, որ նիւթական կարեւոր աջակցութեամբ մը գնահատեց գիտաժողովը: Կեդրոնը շնորհակալութեան խօսք ունի նաեւ Տէյւիտ եւ Թինա Սիկըլ ամոլին՝ իրենց նիւթական օժանդակութեան համար: Կեդրոնը շնորհակալ է բոլոր մասնակիցներուն՝ զեկուցողներուն, որոնք իրենց մասնակցութեամբ հարստացուցին գիտաժողովը, ինչպէս նաեւ՝ ունկնդիր հասարակութեան, որ յատուկ մթնոլորտ յառաջացուց եւ աւելի ծաւալուն դարձուց գիտաժողովին անմիջական արդիւնքները:*

*Յառաջիկայ տարուան՝ կեդրոնի գիտաժողովի նիւթ որոշուած է «Յորդանանի Հայերը» նիւթը: Այդ գիտաժողովը կը ծրագրուի կայացնել 2016 Մայիսին: Ծրագրային նախապատրաստական աշխատանքները արդէն իսկ ընթացքի մէջ են այս առնչութեամբ:*

*Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոն:*

*Երկուշաբթի, 25 Մայիս 2015-ի երեկոյեան ժամը 7.30-ին, գիտաժողովի առաջին օրուան չորրորդ նիստին փակումէն պահ մը ետք, տեղի ունեցաւ «Սուրիոյ Տագնապը Եւ Սուրիահայութիւնը» նիւթով կլոր սեղան: Մասնակցութեամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշն. Շահան Արք. Սարգիսեանի, Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի պետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի եւ Դամասկոսի Հայոց Առաքելական Թեմի Առաջնորդ Գերշն. Արմաշ Եպս. Նալպանտեանի կայացած այս հանդիպումը յատուկ ուշադրութեան առարկան դարձաւ Լիբանան հաստատուած սուրիահայերու, սրտցաւ լիբանահայերու եւ պատկան պատասխանատուներու:*

*Ջրուցավարութեամբ Հայկազեան Համալսարանի Նախագահ Վեր.-Դոկտ. Փօլ Հայտօսթեանի, այս հանդիպումը եղաւ բացառիկ՝ իր անմիջականութեամբ, թափանցիկութեամբ, մարդկային երեսակներու եւ ապրումներու իր դրսեւորումներով, արծարծուած նիւթերու խտութեամբ, անկեղծութեամբ: Հարցադրումները եղան սուր եւ խորաչափուած, իսկ պատասխանները եկան տարիներէ իվեր սուրիահայ կրօնական հօտերուն նախանձախնդրօրէն հոգածու եւ սրտցաւ, անոնց հետ նոյն տագնապները ապրող հոգեւոր առաջնորդներէն: Քննարկումները չանդրադարձան քաղաքական երեսակին, այլ լուսարձակի տակ առին մարդկային յարաբերութիւնները, ընկերային, առողջապահական, ապահովական տագնապները, կրթական մարզը, քանդումները, տեղափոխումները, սփիւռքահայ եւ հայրենի աջակցութիւնը,*

*Շար.ը էջ 15*

# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ-ՀՈԳԵՃԱՇ
## ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ ԵՒ ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 95 ԱՄԵԱԿԻՆ



*ՍԱՐԳԻՍ ՊԱԼՄԱՆՈՒԿԵԱՆ*

Ապրիլ ամիսը հայերուս համար յատկանշական ամիս մըն է, մանաւանդ՝ Ապրիլ 24ը. այդ օրը ամէն տարի, ազգովին կը սգանք մեր նահատակները եւ կ՚ոգեկոչենք անոնց անմար յիշատակը, իսկ այս տարի 100 ամեակն է այդ մեծ եղեռնին: Ապրիլ ամսուն առաջին օրը, 95 տարի առաջ, սկսած է Այնթապցիներու հերոսական ինքնապաշտպանութիւնը: Այս ծիրէն ներս, Լոս Անճելոսի Այնթապցիներու Մշակութային Միութիւնը կազմակերպեց հոգեհանգիստ եւ հոգեճաշ, միատեղ ոգեկոչելու Մեծ Եղեռնի 100 ամեակը եւ հերոսամարտի 95 ամեակը:

Հոգեհանգիստի արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի Ապրիլ 12ին, Ս. Ղեւոնդեանց Մայր Տաճարի մէջ: Թեմի բարեջան առաջնորդ Յովնան Արքպ. Տէրտէրեան իր քարոզին մէջ խօսեցաւ հայ ժողովուրդի նահատակութեան մասին, շեշտելով՝ որ նահատակութիւնը Քրիստոնէական հաւատքի անբաժան մէկ մասը եղած է: Այս հաւատքի համար դարերու ընթացքին զոհ գացած են բիւր նահատակներ: Խօսեցաւ նաեւ հայ ժողովուրդի մղած ինքնապաշտպանական կռիւներուն մասին շեշտը դնելով՝ Այնթապի հերոսամարտին վրայ: Իր յարգանքը յայտնեց անոր հերոսներուն եւ նահատակներուն յիշատակին:

Յաւարտ պատարագի, Մայր տաճարի կից Գալայճեան սրահին մէջ տեղի ունեցաւ հոգեճաշ-հանդիսութիւն: Ա.Մ. Միութեան ատենապետ՝ Պրն. Աւետիս Տեմիրճեան բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, շնորհակալութիւն յայտնեց, որ իրենց ներկայութեամբ յարգանքի տուրքը կը մատուցեն մեր նահատակներուն: Ապա ներկաներուն ծանօթացուց օրուան հանդիսավարուհին՝ գաղութիս հանրածանօթ դէմքերէն, «Մայրենի Դեսպան» կոչումին արժանացած՝ տիկին Թագուհի Արզումանեանին: Հանդիսութիւնը սկսաւ Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի օրհներգերով կատարողութեամբ շնորհալի երգչուհի՝ միջազգային երգի մրցոյթի երկու դափնեկիր՝ Անահիտ Ներսիսեանի: Ներկաները յոտնկայս լռութեամբ յարգեցին մեր նահատակներուն յիշատակը:

Բացման խօսքով հանդէս եկաւ օրուայ հանդիսավարուհին՝ Տիկին Թագուհի Արզումանեանը, յայտնեց որ եկած են յարգելու մեր նահատակներու սուրբ յիշատակը, խօսեցաւ 100 տարի առաջ Թուրքերու կողմէ ծրագրուած եւ գործադրուած հայերու ցեղասպանութեան մասին որ սկսաւ հայ մտաւորականներուն գլխատումով, ապա խօսեցաւ Այնթապի հերոսամարտի մասին (1920 թ.), որը համաժողովրդական ինքնաբուխ պոռթկում մըն էր ցեղասպան Թուրքի բռնութեան դէմ, եւ հիանալի օրինակ մը հայ ժողովուրդի միասնականութեան: Ան իր յարգանքը մատուցեց Այնթապցիներու Մշակութային Միութեան նախկին նախագահ, մանկավարժ հոգեբան՝ հանգուցեալ Երուանդ Պապայեանի յիշատակին, ըսելով որ ան միշտ կ՚ապրի մեզի հետ: Ապա հրաւիրեց Թեմիս Առաջնորդ՝ Յովնան Սրբազանը որ իր սրտի խօսքը ուղղէ եւ կատարէ սեղանօրհնէքը:

Տեղի ունեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Լարք երաժշտանոցի «Տաւիղ» պարի համոյթը (ղեկավար՝ վաստակաւոր պարուսոյց Սօնա Աւետեանի) իրենց հայկական տարազներով կատարեցին հայկական պարեր՝ Կոմիտասեան եղանակներու ընկերակցութեամբ:

Երգչուհի Անահիտ Ներսիսեան իր դիւթիչ ձայնով, հանդիսութեան ընթացքին հանդէս եկաւ քանի մը ազգային-հայրենասիրական երգերով, մեծապէս խանդավառելով ներկաները, յատկապէս բոլորիս սիրելի «Կիլիկիա» երգով:

Թագուհի Արզումանեան իրեն բնորոշ ոգեւորութեամբ ասմունքեց հայութեան նուիրուած իր գրութիւնը՝ «Ով եմ ես», ներկայացնելով հայոց պատմութեան տարբեր ժամանակաշրջաններու հայ հերոսները, մեծութիւնները, որոնք իրենց զոհողութիւններով, հերոսական ճիգերով պահպանեցին իրենց ազգը, մայրենի լեզուն եւ մշակոյթը:

Պատանի Միքայէլ Ենիլեան, մեծ եռանդով ասմունքեց՝ Գէորգ Էմինի «Մենք» ծանօթ արձակ բանաստեղծութիւնը, արժանանալով ներկաներուն բարձր գնահատանքին: (Միքայէլը, անցեալ տարի Շուշիի մէջ տեղի ունեցած համահայկական ասմունքի մրցոյթին՝ երրորդ տեղը գրաւած էր):

Տիկին Արզումանեան հանդիսականներուն ներկայացուց օրուայ գլխաւոր հիւր բանախօսին՝ Դոկտ. փրոֆ. Գէորգ Պարտագճեանի ամփոփ կենսագրականը, թուելով անոր ստացած բարձրագոյն վկայականները: (Երեւանի Պետական համալսարանէն, ապա տօքթորականը՝ Անգլիոյ Օքսֆորտ համալսարանէն 1974 թ.): Ան հայ գրականութիւն, հայ մատենագրութիւն եւ հայ մշակոյթ դասաւանդած է Հարվըրտ Համալսարանի հայագիտական ամպիոնէն ներս (1974-1987) ապա 1987էն ի վեր կը դասաւանդէ Միչիկընի Համալսարանէն ներս: Հեղինակ է բազմաթիւ յօդուածներու եւ քանի մը գիրքերու: Յիշատակի արժանի է իր «Արդի հայ գրականութեան տարեգրութեան (1500-1920)» նուիրուած կոթողային գիրքը (անգլերէնով): Դասախօսութիւններով հանդէս եկած է տարբեր երկիրներու մէջ, մասնակցած է հայ գրականութեան ինչպէս նաեւ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած գիտաժողովներու: Փրոֆ. Պարտագճեան կազմակերպած է նաեւ գիտաժողովներ՝ վերոյիշեալ նիւթերու շուրջ:

Իր հայ գրականութեան մատուցած ծառայութեան համար փրոֆ. Պարտագճեան արժանացած է բազմաթիւ կոչումներու՝ տարբեր համալսարաններէ, գիտական հաստատութիւններէ: Ան 2011 թ. սփիւռքահայ անդամ ընտրուած է Հայաստանի Ազգային Ակադեմիայէն ներս: Փրոֆ. Պարտագճեան իր ելոյթին մէջ խօսեցաւ իր Այնթապցի արմատներուն՝ յատկապէս իր այնթապցի հօր՝ Տէր Պարգեւ Աւագ Քահանայի մասին: Անդրադարձաւ Հալէպի Կրթասիրաց վարժարանէն ներս իր ստացած նախակրթարանի ուսման մասին, (Կրթասիրաց վարժարանը 1924ին հիմնուած է այնթապցիներու կողմէ, որու աշակերտութեան զգալի մասը այնթապցի ծնողներու զաւակներ էին): Մեծ երախտագիտութեամբ յիշեց իր ուսուցիչները, յատկապէս, վաստակաշատ տնօրէն՝ Գրիգոր Պօղարեանը, որ խոր տպաւորութիւն թողած էր իր վրայ:

Ան շեշտեց որ Կրթասիրաց վարժարանէն աշակերտները իր դաստիարակուէին առողջ հայրենասիրութեամբ, ուր տիրական էր միասնականութեան ոգին: Յայտնեց որ Այնթապի հերոսամարտը մեծապէս ներշնչած է զինք:

Փրոֆ. Պարտագճեան իր ելոյթին մէջ խօսեցաւ հայութեան գոյատեւման սպառնացող վտանգներուն մասին եւ պահանջ դրաւ որ սփիւռքը պէտք է բազմապատկէ իր ջանքերը յաղթահարելու զանոնք: Առաջարկեց որ նիւթական միջոցներ ապահովել հայ կամ օտար հայագէտներուն, որ շարունակեն ուսումնասիրել հայ ժողովուրդի մշակութային ժառանգը: Անդրադարձաւ Այնթապցիներու կատարած աշխատանքներուն, իրենց ծննդավայրին յիշատակը վառ պահելու համար, օրինակ տալով վերջերս Երեւանի մէջ լոյս տեսած Այնթապցի ասեղնագործութեան նուիրուած երկու հատորները:

Յարգելի բանախօսը իր ելոյթին մէջ անդրադարձաւ նաեւ հայ-թուրք յարաբերութիւններու մասին, յայտնեց ինչպէս թուրք յաջորդական իշխանութիւններ՝ խեղաթիւրած են պատմութիւնը, սահմանափակումներ դրած են հայկական դպրոցներէ ներս հայերէն լեզու դասաւանդման, եւ թրքերէն դասագիրքերու մէջ անհանդուրժողութիւն կը տարածեն հայերու դէմ, նոյնիսկ ատելութիւն: Ելոյթին վերջաւորութեան առաջարկեց որ երիտասարդներ պէտք է ներգրաւել մեր միութիւններէն ներս որ գոյատեւէ հայ կեանքը:

Բեմ հրաւիրուեցաւ հանդիսութեան հիւրաբար ներկայ գտնուող Տիկ. Հիլտա Սապունճեան-Զօպոյեանը, որ Հալէպ ծնած է այնթապցի ծնողներու յարկէն ներս, երկրորդական ուսումը Հալէպի մէջ ստանալէ ետք, 60ական թուականներու սկիզբը Ֆրանսա մեկնած է, ուր երկար տարիներ ձեռնհասօրէն ղեկավարած է Եւրոպայի հայ դատի գրասենեակը: Ան ուրախութիւն յայտնեց որ այնթապցիները իրենց միութիւնը ունին Լոս Անճելոսի մէջ, ցաւ յայտնեց որ Եւրոպայի մէջ այսպիսի միութիւն գոյութիւն չունի: Ան փոքր տարիքէն լսած է Ամերիկայի Այնթապցիներու Միութեան մասին, ան ինքզինք այնթապցիներու ժառանգորդներէն մէկը կը նկատէ:

Ան շեշտեց որ հայրենակցական միութիւնները կատարելիք մեծ աշխատանք ունին, որ պաշտպանեն հայ ժողովուրդի արդար իրաւունքը միջազգային դատարաններէն ներս: Խօսեցաւ իր ղեկավարութեան շրջանին Հայ Դատի գրասենեակին կատարած աշխատանքներու մասին: Յոյս յայտնեց որ Ցեղասպանութեան զոհերու ժառանգները մօտ ապագային պիտի կրնան իրենց իրաւունքները պաշտպանել միջազգային դատարաններէ ներս, ցոյց տալով սեփականութեան անհրաժեշտ փաստաթուղթեր, յայտնեց որ Ցեղասպանութեան ճանաչումը միջազգային հասարակութեան կողմէ հսկայ յառաջդիմութիւն արձանագրած է, վկայակոչելով՝ նոյն օրը Վատիկանի մէջ, Հռոմի Պապը իր քարոզին մէջ հանգամանօրէն անդրադարձած էր 20րդ դարու առաջին Ցեղասպանութեան:

Հանդիսութեան առաւել հետաքրքրական մասը եղաւ, երբ ներկաները ծանօթացան Տիկին Ենիկէ Սալիպեանին որ 101 տարի առաջ Այնթապ ծնած է բազմանդամ ընտանիքի մը մէջ, եւ այն սակաւաթիւ վերապրողներէն է, որ իր պատանեկութեան ականատես եղած է Այնթապի հերոսամարտին: Ան կենդանի վկան է մեր անցեալին եւ կապը մեր հարազատ ծննդավայրին:

Տիկին Սալիպեան՝ իր տարիքին համեմատ անսովոր եռանդով պատմեց Այնթապէն տեղահանութեան ընթացքին պատահած դէպքի մը մասին, ուր ան հրաշքով փրկուած էր: Յաճախ Աստուծոյ փառք տալով որ իրեն կեանք շնորհած է: Յետագային ան ամուսնացած է պատուելի Վահրամ Սալիպեանի հետ եւ 6 զաւակի մայր եղած է (զաւակներէն մէկը կորսնցուցած է 1960 թ. ինքնաշարժի արկածին ուր իր զաւկին հետ զոհ գացին բազմաթիւ աշակերտներ՝ Պէյրութի Հայ Աւետարանական Բարձրագոյն Վարժարանէն): Յետագային Սալիպեան ընտանիքը բախտաւորուած է 12 թոռներով եւ 28 ծոռով:

Ապրելով իր ժողովուրդի գողգոթան, յետագային Տիկ. Սալիպեանի կեանքը եղաւ համակ նուիրում իր ազգակիցներուն: Ան պատմելիք շատ նիւթ ունէր սակայն սահմանափակ ժամանակ: Ա.Մ. Միութեան ատենապետ՝ Պրն. Աւետիս Տեմիրճեան յատուկ յուշատախտակով մը պատուեց զինք որպէս վերապրող: Հանդիսութեան աւարտին, օրուայ հանդիսավարուհին շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս յոբելենական հանդիսութեան: Յատուկ շնորհակալութիւն յայտնեց Տիկին Ֆրանսիս Տեմիրճեանին որ անձնուիրաբար պատրաստած էր սեղաններու զարդը հանդիսացող գեղեցիկ ծաղկեփունջերը: Տէր Սիփան Քհնյ. Մխսեան «Պահպանիչ»ով փակումը կատարեց այս հանդիսութեան: Հուսկ, ներկաները յոտնկայս երգեցին աւանդութիւն դարձած Այնթապի հերոսամարտի քայլերգը:

# ԼԻԲԱՆԱՆ

## ՀԱՄԵՐԳ՝ «ՄԹՆՇԱՂԷՆ ԴԷՊԻ ԱՐՇԱԼՈՅՍ»
## «ՈՒԺԵՂ ԵՆՔ ԵՒ ՄԵԶ ՅԱՂԹԵԼ ՀՆԱՐԱՒՈՐ ՉԷ»



«Արմիս» երգչախումբը՝ խմբավարութեամբ՝ վեր. Ներսէս Պալապանեանի

Հայ աւետարանական Առաջին եկեղեցւոյ մէջ երաժշտական համերգ էր. եկեղեցին մարդաշատ էր, իսկ բեմի վրայ էր վաստակաւոր երգչուհի մեցօ սոփրանօ՝ Աննա Մայիլեանը, որ իր երաժշտական բարձր կատարումներով յաջողեցաւ լիբանանահայ հանդիսատեսը տանիլ հայ երաժշտութեան անդաստան եւ հաղորդակից դարձնել բազմազան երաժշտական գործերու:

«Մթնշաղէն դէպի արշալոյս» համերգը տեղի ունեցաւ չորեքշաբթի, 26 մայիս 2015, երեկոյեան ժամը 8:30-ին, Մերձաւոր Արեւելքի Հայ աւետարանական եկեղեցիներու միութեան Հայ աւետարանական «Արմիս» մշակութային յանձնախումբի կազմակերպութեամբ, Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի Կեդրոնական մարմինի հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ ուժանիւթի նախարար Արթիւր Նազարեանի:

Բացման խօսքով հանդէս եկաւ դոկտ. Հրայր Ճէպէճեան: Ան յայտնեց, որ մթնշաղը Հայոց ցեղասպանութիւնն է, արշալոյսը՝ հայու վերապրումը, որ կը պահանջենք, իսկ մթնշաղի եւ արշալոյսի հասարակաց գիծը հայուն արժանապատուութիւնն է: Ապա աւելցուց՝ ըսելով, որ այսօր կը յիշենք ու կը պահանջենք հայուն արժանապատիւ կեանքը, որ կրնար բազմանալ ու ապրիլ, որ կրնար ստեղծագործել ու մշակել: Կը պահանջենք



Դոկտ. Հրայր Ճէպէճեան

հայուն արժանապատիւ հողը, պապենական տունը, որ կրնար բարգաւաճիլ... Այսօր հայը նոյնպէս հպարտ է Հայաստան հայրենիքով եւ սփիւռքի բոլոր հատուածներով, որոնք ամուր տէր կանգնած են Հայ դատին ու պահանջատիրութեան: Խօսքը աւարտեց՝ ըսելով, որ համերգը կու գայ ամուր կապելու հայը իր մշակոյթին, հայրենի արժէքներուն ու մանաւանդ հողի կապուածութեան: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ իրենց նպաստը բերած են համերգի յաջողութեան:

Խօսք առաւ նաեւ վաստակաւոր երգչուհի Աննա Մայիլեան: Ան ողջունեց բոլորը ներկաները եւ ըսաւ, որ ա՛լ ժամանակն է ըլլալու



Երգչուհի Աննա Մայիլեան

ամուր ու միասնական որպէս ժողովուրդ: Մեր մշակոյթի ու արուեստի գործերուն հանդէպ քաջալերական կեցուածքով ու ծափահարութիւններով փաստենք, որ կ՛ապրինք, «ուժեղ ենք եւ մեզի յաղթել հնարաւոր չէ»:

Համերգի առաջին բաժինով Աննա Մայիլեան եւ դաշնակահար Էլէն Կիրակոսեան ներկայացուցին Կոմիտասի, Դանիէլ Երաժիշտի, Ռոմանոս Մելիքեանի, Համբարձում Պէրպէրեանի, Շահան Պէրպէրեանի, Համբարձում Գրիգորեանի, Գէորգի Սարաճեանի, Նիկոլ Գալէնտերեանի գործերը, որոնցմէ էն՝ «Առաւօտեան քաղցր եւ անուշ հովերն» եւ «Ամէն առաւօտ եւ լոյս», «Արի, արի Ջնկլիկ», «Անոր», «Արեւին ոսկի», «Պապար», «Հով լինեմ», ուշագրաւ էր Կոմիտասի «Ջինար ես», «Ջուլօ» եւ «Ալ ձին» երգերու կատարումները, շատ գեղեցիկ էին նաեւ «Գարուն բացուաւ», «Արագին», «Իմ ուղին» երգերը, որոնք խորապէս յուզեցին ներկաները:

Առաջին բաժինով Էլէն Կիրակոսեան դաշնամուրի մենանուագով հնչեցուց «Հաբրբան» եւ «Կաքաւիկ» գործերը: Յայտագիրի երկրորդ բաժինը սկսաւ Սերօ Քելուկեան, որ ապրումով արտասանեց Ժագ Ս. Յակոբեանի «Տէր Զօր» կտորը՝ տուտուկի նուագակցութեամբ՝ Յակոբ Քելուկեանի:

Ելոյթ ունեցաւ Հայ աւետարանական «Արմիս» երգչախումբը՝ խմբավարութեամբ՝ վեր. Ներսէս Պալապանեանի եւ դաշնամուրի ընկերակցութեամբ Սեւան Պալապանեանի: Երգչախումբը ներկայացուց «Ջան Հայաստան», «Ամենապերճ Յիսուս» եւ «Ուռենի» երգերը: Աննա Մայիլեան ներկայացուց նաեւ «Վարդը», «Արարատ», «Հայրենիքիս կանչը», իսկ «Օրօր» երգին միացաւ երգչախումբը: Երգչախումբի «Բարի է իմ հոգւոյս», «Հայաստան» երգերու կատարումներուն միացաւ Աննա Մայիլեան: Պէտք է նշել, որ կարգ մը երգերու սրինգով միացաւ Լոռի Պիլալեան, սաքսոֆոնով՝ Արեգ Գարակէօզեան եւ փողով՝ Րաֆֆի Էլմաճեան: Համերգի ամբողջ տեւողութեան ծափահարութիւնները չդադրեցան: Համերգը վերջ գտաւ Տէրունական աղօթքի երգեցողութեամբ, ապա՝ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի օրհնութեան աղօթքով:

# ԵՐԳԱՀԱՆ, ԽՄԲԱՎԱՐ ԺՈՌԱ ՄԻՆԱՍԵԱՆ

Ապրիլի 8ին կեանքից հեռացաւ իրանահայ երաժիշտ, խմբավար եւ երգահան Ժոռա Մինասեանը: Տաղանդաւոր արուեստագէտը ծնուել էր 1926 թուին Գրոզնի քաղաքում:

Ընտանեօք փոխադրուելով Իրան, հաստատուել էր Թաւրիզ, որտեղ շատ փոքր տարիքից նուիրուել էր երաժշտական արուեստին, աշակերտելով ժամանակի մեծ երաժիշտներ՝ Շաւարշ Բաղդասարեանին եւ Լեւոն Գրիգորեանին:

Երկրորդ Աշխարհամարտին, Թաւրիզի հայոց «Սասունցի Դաւիթ» մարմնամարզական միութեան կից «Մելիք Թանգեան» երգչախումբը հիմնելով,ստանձնել էր խմբավարի պաշտօնը:

Թաւրիզում կազմակերպել էր համերգներ եւ մասնակցել ազգային ձեռնարկներին: Ապա հրաւիրուել էր հայաշատ Աբադան, որպէս հայոց դպրոցի երաժշտութեան ուսուցիչ: Աբադանում տարիներ ղեկավարել էր դպրոցի եւ «Գուսան» երգչախմբերը եւ կազմակերպել էր բազում համերգներ:

Հանգստի կոչուելով, վերադարձել էր Թեհրան եւ ստանձնել Ջհարմահալ Ուսումնասիրաց Միութեան «Ուրարտու» երգչախումբի խմբավարի պաշտօնը, ու շարունակել իր երաժշտական աշխատանքները շուրջ 20 տարի:

Ժոռա Մինասեանը ձայնագրել էր մի քանի հարիւր երգեր, մեծ մասամբ իրանահայ բանաստեղծների գործերի վրայ, որոնք մեծ ժողովրդականութիւն են ձեռք բերել, տարածուել եւ երգւում են Իրանում, Հայաստանում եւ Միացեալ Նահանգներում:



Ժոռա Մինասեանը մեծ ներդրում ունեցաւ իրանահայ երաժշտական ասպարէզում, եւ իր ստեղծագործութիւններով աւելի հարստացրեց հայ երաժշտութեան գանձարանը:

Տարիների ընթացքում դաստիարակեց մի խումբ երգիչ-երգչուհիներ եւ խմբավարներ, որոնք այսօր փայլում են մեր բեմերում:

Ժոռա Մինասեանի մեծարման երեկոներ են կազմակերպուել Թաւրիզում, Թեհրանում եւ այստեղ՝ Միացեալ Նահանգներում, անցնող 2014 թուին, «Ջան Թաւրիզ»ի կողմից:

Ժոռա Մինասեանի անունը որպէս կրթական գործիչ, երգահան եւ խմբավար, կայ եւ կը մնայ, մասնաւորաբար իրանահայ պատմութեան մէջ:

Յարգա՜նք իր վաստակին եւ յիշատակին:

# «ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅԵՐԸ» ԵՌՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 13-էն

բարոյական զօրակցութիւնը: Հոգեւոր առաջնորդներուն մօտ զգալի էին հոգեկան խռովքի, նախկին փորձերէն օգտուելու, աջակցութեան, թիկունք կանգնելու, պատասխանատուութիւններու հարցերը:

Գիտաժողովի նիստեու երկրորդ օրուան աւարտէն ետք, երեկոյեան ժամը 6.30-ին տեղի ունեցաւ նախկին հալէպահայ Կիրակոս Գույումճեանի գիրքերուն շնորհահանդէսը: Գույումճեան ծանօթ է վերջին տասնհինգ տարիներուն արաբական, տեղական եւ միջազգային մամուլին մէջ հայկական առնչութիւններով լուրջ յօդուածներու հրատարակմամբ: Շնորհահանդէսին խօսք առին Դոկտ. Պարոյր Աղպաշեան եւ Նահար թերթի աշխատակից Պրն. Ժոզէֆ Պասիլ: Բանախօսները լուսարձակի տակ առին Գույումճեանի մամլոյ աշխատակցութիւնը եւ շեշտեցին հայկական նիւթերու անհրաժեշտութեան՝ արաբական մամուլին մէջ եւ անոնց խաղացած դերին՝ հայ-արաբ մերձեցման եւ ժողովուրդներու փոխճանաչման առումով:

Նիստերու երրորդ եւ վերջին օրուան աւարտի երեկոյեան, Հայ Աւետարանական «Արմիս» երգչախումբը հրամցուց «Մթնշաղէն Դէպի Արշալոյսէ երաժշտական համերգը, մասնակցութեամբ մեցօ սոփրանօ Աննա Մայիլեանի (դաշնակի ընկ.՝ Էլէն Կիրակոսեան), խմբավարութեամբ Վեր. Ներսէս Պալապան եանի (դաշնակի ընկ.՝ Սեւան Պալապանեան):

Գիտաժողովի ամբողջ տեւողութեան ցուցադրուած մնացին Սուրիա տպուած, Սուրիոյ եւ հայութեան վերաբերեալ եւ հայ գրականութենէն թարգմանուած շուրջ 30 գիրքեր, որոնք ճաշակ մը կու տային սուրիահայ թարգմանական ճիգին: Ցուցադրուած էին նաեւ լուսանկարիչ Վարդան Տէրունեանի Հալէպի գաղթակայանին վերաբերող 1920-1930-ականներու նկարներ, ինչպէս եւ Հալէպի եւ Այնթապի հայ պղնձագործներու պղնձեայ ստեղծագործութիւններէն նմուշներ:

Հայկազեան Համալսարանի
Հայկական Սփիւռքի
Ուսումնասիրութեան Կեդրոն

# ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (8)
## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ
## ՄԵՐ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՒՈՐՆԵՐԸ

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*

Որեւէ ուխտագնացութեան կամ շրջապտոյտի մը յաջողութեան մէկ կարեւոր մասը կախեալ է ուխտագնացներու խումբի բաղդրութենէն: Եթէ սնտուկին մէջ միայն մէկ աւրուած խնձոր ըլլայ, շատ չ՛անցած սնտուկին բոլոր խնձորները կ՛աւրուին: Շատ բախտաւոր էինք որ մեր խումբի բոլոր անդամներն ալ շատ համերաշխ էին իրարու հետ, կատակասէր, զարգացած, բոլորն ալ համալսարանաւարտ, «խելքը գլուխը» մարդիկ:

Մեր խումբին կազմակերպիչն ու առաջնորդը Մաշտոց Գոլէճի հիմնադիր, տէրն ու տնօրէնը, Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանն էր: Նկատի ունենալով որ Դոկտ. Տէր Եղիայեանը հանրածանօթ անձնաւորութիւն մըն է ոչ միայն Լոս Անճելըսի, այլ եւ Հայաստանի եւ ի սփիւռս աշխարհի, հարկ չեմ տեսներ ներկայացնել զինք: Ըսեմ միայն որ ուխտագնացութիւնը շատ լաւ կազմակերպուած էր, գրեթէ անթերի: 15 օրերու մէջ խտացուած այս շրջագայութիւնը ոչ միայն շատ ուսանելի էր, այլ նաեւ յուզիչ, զգացախառն ապրումներով տոգորուն, հպարտառիթ երեւոյթներով առլեցուն, ազգային զգացումներդ զարթնեցնող եւ վրէժի զօրաւոր ապրումներդ քրքրող: Դոկտ. Կարպիսը առտուները առաջին արթնցողն էր, իսկ երեկոյեան՝ ամենաուշ պառկողը: Ան միշտ մեզի հետ էր ամէն տեղ եւ պատրաստ մեր բոլոր հարցումներուն պատասխանելու եւ հարցերը լուծելու: Պատմական իր հմտութիւնն ու գիտելիքները հանրագիտական պարփակ ունէին: Իր ծանօթութիւնները վայրին այլ եւ նաեւ տեղացի պատասխանատուներուն հետ չափազանց ընդարձակ էին: Իր հայրենասիրութիւնը ոչ թէ չափ չէր ճանչնար, այլ շատ վարակիչ էր: Ան պատրաստ էր ամէն վայրկեան օգտակար ըլլալու խումբի ուեւէ անդամի: Ինչպէս ըսած էի, Ատանայէն Այնթէպ մեր ճամբան շեղեց (իր հաշւոյն) որպէսզի Տէօրթ Եոլ այցելէինք: Ուրիշ անգամ մը Տօքթ. Պերճ Ղորղորեանին հետ «թաքսի» վարձելով զինք տարաւ մօտակայ քաղաք մը, Զարա, անոր մէկ հայրենակից - բարեկամին քով, դարձեալ իր ծախքով, եւ քանի մը ժամ ետք միացան մեզի յաջորդ քաղաքի ճամբուն վրայ: Տօքթ. Կարպիսը միշտ ուշադիր էր, որ ամէն բան կատարեալ ըլլար, մեր բոլոր կարիքները հոգացուած եւ ամէնքս միշտ ուրախ եւ գոհ:

Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սիլվա Յակոբեանները ամէն տեղ էին, ամէնուն օգնելու, ամէնուն հասնելու պատրաստ: Պրն. Գէորգ Յակոբեանը (այս յօդուածաշարքին սրբագրիչը, յուշարարս, խորհրդատուս), Մելգոնեան Կրթական Հաստատութենէն եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանէն շրջանաւարտ, վերջին յիսուն տարիներուն գիտական նիւթերու եւ ուսողութեան շատ հմուտ, մասնագէտ, սիրուած եւ յարգուած ուսուցիչ եղած է Մելգոնեան Կրթական Հաստատութեան (Կիպրոս), Ալէք Փիլիպոս եւ Մանուկեան-Տէմիրճեան (Լոս Անճելըս) վարժարաններէն ներս: Արտադպրոցական (G.C.E. O Level, A Level - University of London, Advanced Placement Tests, USA) քննութիւններուն մէջ իր աշակերտներուն յաջողութիւնները կը տարուբերուէին 90-100 տոկոսներուն միջեւ: Համեստութեան եւ ազնուութեան տիպարն է Պրն. Գէորգ Յակոբեանը: Միշտ ժպտուն, միշտ պատրաստ իր տեղը ուրիշին տալու, լուսանկարչական գործիքը ձեռքը՝ միշտ խումբին միւս անդամները նկարելու «պարտականութեան» մէջ... Հայոց Պատմութեան իր լայն ծանօթութիւններով միշտ բացատրելիք բան մը ունէր շուրջիններուն: Ըսեմ որ Պրն. Գէորգ Յակոբեանը տարիներով վարչական եւ ատենապետ եղած է Քալիֆորնիոյ «Մելգոնեան Սանուց Միութեան», անդամ էր Լոս Անճելոսի «Գուսան» երգչախումբին, իսկ 2013-ի Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսէն արժանացաւ « Սբ. Սահակ Սբ. Մեսրոպ» շքանշանին եւ Կաթողիկոսական Սրբատառ Կոնդակին: Տիկին Սիլվա Յակոբեանին համար միայն ըսեմ որ համեստութեան եւ ուրիշին օգնելու տիպար անձ մըն էր: Կարծես իր ամբողջ էութիւնը խոշոր սիրտ մըն էր, որ կը բաբախէր ուրիշներու բարիք բաշխելու: Մելգոնեանէն եւ "Beirut College for Women"-էն շրջանաւարտ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ ուսողութեան ուսուցչուհի էր, իսկ Լոս Անճելոսի մէջ՝ « County of Los Angeles, Social Services"-ի պաշտօնեայ: Տիկին Սիլվան մօտ 20 տարի ծառայած է «Մելգոնեան Կրթական Հաստատութեան Սանուց Միութեան» վարչութեան մէջ, Լոս Անճելոս: Այժմ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սիլվա Յակոբեանները հանգստեան կոչուած են եւ կը զբաղին իրենց երկու սիրասուն թոռնիկներուն հոգ տանելով:

Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Քէթի Ղորղորեանները խումբին ոգին էին: Տիգրանը, Մելգոնեան Կրթական Հաստատութենէն 1982- ի շրջանաւարտ, Հայաստանի մէջ 1988-ին աւարտած էր Երեւանի Համալսարանի Ճարտարապետական եւ Շինարարական Ինստիտուտը եւ այժմ "Global Engineering" ընկերութեան ընդհանուր տնօրէնն է: Այս՝ "Mega International" ինքնաշարժի մասեր պատրաստող արեւմտեան աշխարհի ամենամեծ ընկերութիւնն է, որ աշխարհի ամէն կողմ ինքնաշարժի մասեր կը մատակարարէ: Տիգրանը Հայաստանի մէջ քանի մը ընկերներով «Անուշ Նուագախումբ»-ը հիմնած էր եւ գիւղերը երթալով Կոմիտասի նման ազգագրական երգերը կը հաւաքէր: «Անուշ Նուագախումբ»ը ելոյթ ունեցած է Երեւանի «Երիտասարդական Համալիր»ի մէջ, Կարէն Տէմիրճեանի ներկայութեան: Ազգային կեանքի մէջ Տիգրան Ղորղորեանը Թորոնթոյի «Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան» Ատենապետն է, Թորոնթոյի Հայ Կեդրոնին վարչական եղած է, պատանիներու պասքէթպոլի խումբերը մարզած եւ այժմ փայտի վրայ թռչնագրերով «ԱԲԳ»-ը կը փորագրէ:

Տօքթ. Քէթի Ղորղորեանը (Հալէպի Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանէն եւ Հայաստանի Բժշկական □ Դեղագործութեան Հաստատութենէն շրջանաւարտ), խումբին բժշկուհին - հիւանդապահուհին, եւ դեղերու մատակարարիչն էր: Առաւօտեան ժամը 2-ին պանդոկի իր սենեակին դուռը կը թակէին եւ «Քէթի, գլուխս կը ցաւի, ի՞նչ ընեմ...»-ով կ՛արթնցնէին զինք: «Թայլնոլ մը առ եւ պառկէ՛»... եւ հիւանդին գլխու ցաւը կ՛անցնէր: Ուխտագնացներէն ոմանք ինչ-ինչ պատճառներով բժշկական խնամքի, դեղերու եւ սրսկումներու պէտք ունեցան: Տօքթ. Քէթին ամենայն մասնագիտութեամբ օգնեց բոլորին:

Ազգային կեանքին մէջ, Տօքթ. Քէթի Ղորղորեանը Հալէպի մէջ Հ.Ե.Ը.-ի վարչական եղած է եւ իր ծառայութիւնները բերած է Հ.Ե.Ը.-ի գրական, թատերական եւ մարզական յանձնախումբերուն մէջ եւ եղած է արենուշական խումբի խմբապետ: Պասին մէջ Ղորղորեանները միշտ կը ղեկավարէին «բազմաձայն» խմբերգները, եւ յաճախ Տօքթ. Քէթին հայրենասիրական ասմունքներով կը յուզէր մեզ բոլորս: Շատ զգացական էր, միշտ կը բողոքէր եւ կ՛ընդվզէր ի տես մեր ահաւոր կորուստներուն, եւ կու լար: Ղորղորեանները բախտաւորուած են երկու աղջիկներով (երկուքն ալ դեղագործ), որոնք ազգային կեանքին մէջ կը հետեւին իրենց ծնողաց բարի օրինակին: Տօքթ. Քէթի Ղորղորեանի դեղարանը «Medicine Shoppe Pharmacy"-ն աւելի «հայկական բարեսիրական ակումբ» է քան...

Ուրիշ Մելգոնեանցի մըն էր Ատամնաբոյժ Պերճ Ղորղորեանը: Ժպտուն եւ լուռ տղայ մը, որ յուզումի հետ միշտ կ՛ընդվզէր մեր ժողովուրդին դէմ գործադրուած ահաւոր անարդարութեան դէմ: Տօքտ. Պերճը երկու տարին անգամ մը, մէկ ամիսով Քենեա (Կեդր. Ափրիկէ) կ՛երթայ հոն «էյտզ»է վարակուած որբ պզտիկներուն ակռաները դարմանելու: «Տէտէս որբ էր եւ անծանօթ մարդիկ օգնած են իրեն, ես ալ, որպէս որբի թոռնիկ, ուզեցի այդ խեղճ որբերուն օգտակար ըլլալ, այսպէսով թերեւս մեծ հօրս պարտքը մասամբ վճարած կ՛ըլլամ մարդկութեան».-կ՛ըսէր այս Մելգոնեանցի սքանչելի երիտասարդը: Թորոնթոյի մէջ ալ այս բժիշկը շատ օգտակարութիւն ունեցած է եւ տակաւին կ՛ունենայ անտուններուն (homeless): «Կ՛ուզեմ նորէն գալ, քանի մը օր Անի մնալ եւ ապա Արարատ լեռը մագլցիլ».- ըսող այս տղան, Սպիտակի երկրաշարժի զոհերուն առաջին հասնողներէն էր իր հայրենակիցներուն օգնելու:

Ուխտագնացներուն մէջ կային հանգստեան կոչուած ուսուցիչներ, ինչպէս Հերմինէ Տէմիրալը (Տիգրանակերտի եւ ապա Կ. Պոլսոյ մէջ տասնամեակներով ուսուցչուհի...), Ճէնիս Գասպարեանը (Ուտլէնտ Հիլզէն, Քալիֆ.) իր ամուսնոյն՝ Ճոն-Մայքըլէնի հետ: Ճէնիսը, Արարատ Ծերանոցին ( կամ Երէցներու Տան...) տարիներով կամաւոր կերպով օգտակար եղող ազնուագոյ տիկիններէն մէկն է: Դոկտ. Արամ Ղուկասեանը՝ Հայաստանի մէջ քիմիագիտութեան դասախօս, Վանի ինքնապաշտպանութեան ժամանակ «հիւանդանոց»ի պատասխանատու Բժիշկ Արամ Ղուկասեանի թոռը (լուռ եւ բարի մարդ մը): Դոկտ. Արամ Ղուկասեան զաւակն է Րաֆֆիի քրոջ թոռ՝ գրող Յովհաննէս Ղուկասեանի: Խումբին մաս կը կազմէին նաեւ Տէր եւ Տիկ. Սուրէն եւ Աստղիկ Ղազարեանները (սքանչելի, համեստ եւ ընկերասէր զոյգ մը), Ֆաուլըրէն Ճէյն Սուզան Ղազարեանը (միշտ ժպտուն եւ միշտ պատրաստ քահ-քահ խնդալու), կինս, Ալիս Գուրուեանը, դարձեալ Մելգոնեանցի, որ Հայկազեան Համալսարանը աւարտելէն ետք, քառասուն երկու (42) տարի ուսուցչութիւն ըրած է «Նիկոսիա Գոլէճ»ի, Մելգոնեան Կրթական Հաստատութեան եւ Լոս Անճելոսի Արշակ Տիգրանեան Վարժարանէն ներս: Բազմաթիւ ծնողներէ եւ աշակերտներէ իմացած եմ, որ Ալիս Գուրուեանը շատ կարող, համեստ, համբերատար եւ սքանչելի ուսուցչուհի մը եղած է: Ան 25 տարի վարչական անդամ եղած է Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի մասնաճիւղին ինչպէս նաեւ մօտ 20 տարի՝ «Մելգոնեան Կրթական Հաստատութեան Սանուց Միութեան» Լոս Անճելըսի վարչութեան: Իր մասին կ՛ըսեն նաեւ որ ան միշտ ժպտուն, օգնող, հիւրասէր, ազնիւ եւ բարի կին մըն է: Անոնք որոնք իր պատրաստած համեղ ճաշերը ճաշակած են ճոխ սեղաններու շուրջ, չեն դադրած իր գովքը հիւսելէն...: Ուխտագնացութեան ժամանակ Ալիսը ամէն տեղ էր, ամէնուն օգնելու դիրքին վրայ, ասոր-անոր նկարելու քաղցր պարտականութեամբ եւ մասամբ նորին:

Թէրէզա Տիմիճեանը, Փասատէնայէն, շատ հպարտ էր իր մանկամսուրով:

Փրոֆ. Ալին Գարամանուկեան Քրիստինսինը (Առեւտրական Նիւթերու դասախօս San Diego State University-ի մէջ) ազգական ելաւ հանրածանօթ Քէշիշեաններուն: Շատ բարձր խօսեցանք Դոկտ. Օննիկ եւ Փրոֆ. Օշին Քէշիշեաններուն մասին, որոնք իրենց ամբողջ կեանքը նուիրած են հայ ազգին, կրթական, մամուլի եւ միութենական ոլորտներուն մէջ անձնուիրաբար ծառայելով:

Երէցկին Սանտրա Առաքելեանը, Ֆաուլըրէն, Դոկտ. Կարպիսին հետ միշտ մզկիթի վերածուած եկեղեցիներուն մէջ աղօթքները սկսողն էր: Շատ անուշ ձայնով, համեստ եւ ազնուական տիկին մը:

Կեսարացի Տիկ. Արփի Աւագեանը, Ուոթըրթաունէն, շատ համակրելի տիկին մըն էր: Ինք եւ Տիկ. Տէմէրալը հաւանաբար 5,000 նկարներ նկարեցին: Երբ որ տեսնէին որ ուեւէ մէկը տեղ մը կը նկարէ, անմիջապէս կը վազէին եւ իրենք ալ կը նկարէին եւ յետոյ «ինչու՞ այստեղը կը նկարէք... ընտիր է, ես ալ պէտք է որ նկարեմ» կ՛ըսէին: Այս երկու տիկինները, հակառակ իրենց յառաջացած տարիքին եւ ֆիզիքական ծանրութեան, ոչ միայն Կարսի բերդը բարձրացան, այլ երբ Կապատովկիա էինք, առտու կանուխ, ժամը 4:00-ին « Air Baloon»ով շրջագայութեան մասնակցեցան...

Տէր եւ Տիկ. Ճէյմս Նովոսէլ եւ Սէլիա Քարեանները ճարտարապետներ էին, Պըրքլիէն: Համեստ եւ լուռ զոյգ մը: Տօքթ. եւ Տիկ. Պէրնարտ եւ Մարիոն Քարեաններու մասին արդէն իսկ խօսած եմ: Տօքթ. Պէրնարտ Քարեանը ընտրուած « Oral and Maxillofacial Surgeon» է, Ֆրէզնոյէն: Շատ համեստ զոյգ մըն էին, լուռ, բարի եւ միշտ ժպտուն:

Մէրիլէնտէն մեզի միացած էր նաեւ Տիկ. Երանուհի Վարդանեանը: Տիկ. Վարդանեանը Արուեստի Պատմութեան եւ Թանգարանային Ուսումնասիրութեան մասնագիտուհի է եւ իր մասնագիտութեան կողքին ան իր սիրայօժար մաս-

Շար.ը էջ 19

# ԳԱՐՆԱՆ ՀԵՔԻԱԹ

Երկրի վրայ դրախտ մը սէր
Կարծես թափած է Աստուած
Վահան Թէքէեան

***ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ***

*Գարունը հէքիաթ է: Արեւի շողերը գրկած, մեղմանուշ զեփիւռի թեւերին բազմած փերիների, պարիկների եթերային պարերի հէքիաթ է գարունը: Բա՛ց արա հոգուդ ակները, տե՛ս, աստղալոյս փերիները երկինքից իջել են՝ գարուն բերելու քու լեռների աշխարհին, Արմին-հայերի սրտերը թրթռացնելու տիեզերքի արարչական սիրով:*

*Գարունը հէքիաթային սէր է, սիրոյ բողբոջում, սիրոյ ծաղկում, սրտերում վառուող լոյսի ջահերի հրավառութիւն: Գարնանը, պարմանուհիների ակներում ծաղկալոյսի խարոյկներ են վառւում, այնտեղից պոռթկացող լոյսը՝ հեշտագին սիրոյ շանթերի բոցավառում է: Գարնանը, Արարիչը դրախտային սիրոյ կաթոգին լոյսերով ցօղում է մոլորակը, կարծես ինքն էլ որպէս սէր իջել մարդկանց հոգիներին արեւագալի աղօթքի, շարականների գարնանային շունչ յորդելու:*

*Հէքիաթ, մանուկների երազային ըղձանք է, որ ահա գազանիկները կանաչ դաշտերում վազում են թիթեռներ բռնելու, իրար գրկած լճակի ջրերին պար բռնում, փերիներն են արեւի շողերը նրանց վրայ փռում՝ որպէս սիրոյ ու խաղաղութեան կանթեղ: Մանչերն են փերիների հետ գրկախառն՝ գիրք թերթում, զրուցում նրանց հետ: Կարմիր գլխարկն է արջի մէջքի կողովի վրայ, նրան ձայնում չուտել կարկանդակները: Հէքիաթներ, ի՜նչպէս են իրենց բարութեան լոյսի շողերը լցնում մանուկների սրտիկներին, չարն են սպանում, որ սիրոյ անուրջների աստղեր վառուեն նրանց հոգիներում: Բարի են, բարու լոյս են անձրեւում հէքիաթները, ինչպէս գարունն է իր հոգեպարար ջերմութիւնն է ծորում մոլորակի մարդկանց սրտերին:*

*Կեանքը գարնանային հէքիաթ է: «Վահագն Համաստեղութեան» աստղերի լոյսը քու աչքերում այցի ես եկել երկիր: Կեանքը գարնանային արեւի լոյսի թրթիռ է, տիեզերական վարդապետների շարականների աղօթք, մարդու փրկութեան Վարդապետ Նարեկացիի ըղձանք, Աստուածային արարչութեան հրավառութեան փառատօն: Կեանքը գարնանային շողերն է, միայն մի անգամուայ պարգեւ: Հէքիաթային վայելք է կեանքը, արբեցի՛ր նրանով, հրճուի՛ր, ժպտա՛ ծիածանափայլ մոլորակով, գինովցի՛ր լոյսով, վարարի՛ր բնութեան գարնան հոգեպարար շունչով:*

*Գարունը բնութեան հէքիաթն է: Գնա՛ ընկողմանիր նրա գիրկը, տիեզերական արարչութիւնն է այն: Գարունը՝ բնութեան հէքիաթային մեղմանուշ շունչի հրավառութեան հեւքն է: Ձմռան երկար քնից զարթնած ծառերի բողբոջներն են պայթում, հազար գոյների լոյսի հեղեղ վառւում այգիներում, արեւը նրանց վրայ կանաչ պատմուճան է փռում:*

*Պայթում են կեանքի յաւերժութեան նռնենիների ծաղիկները, լոյսի խարոյկ է նրանց կարմիր կանթեղներում, նորահարսերն են նրանց հասունացած նռները պայթեցնում դռներին, որ յաւերժութեան կարմիր լոյս իջնէր իրենց նոր օճախներին: Գարնանը, իմ հայրենի պարտէզներում հրդեհ էր, վառւում էին Նորաշխարհենի ծառերը, բարձրանում էին նրանց գագաթներ՝ կրակի համով Նորաշխարհ քաղում: Գարնանը տեսե՞լ ես կարմիրով շառագունած հոնի ծառերը, նրանց հրդեհուած սարերը, նրանց գարնան կրակով վառի՛ր հոգիդ: Գարուն է նարնջենիների լուսնասպիտակ ծաղիկներում, որոնք անմեղ ժպիտով շողում են հարսանեկան նարօտներով միացած նորապսակների լանջերին: Գարնան արեւն իր կրակի քուրայից պայթած գոյների ծիածան քօղ փռում ծիրանի, դեղձենի, խնձորենի ծառերին: Գարնանային հէքիաթ չէ՞ լեռների լանջերի բացատներում երկնի կապոյտով պճնուած ծաղիկների թագուհի մանուշակը, դիտե՞լ ես այն, շոյե՞լ ես հէքիաթային լոյսով վարարած նրա աչուկներից կաթած գարնանային ցօղ արցունքը: Գարնան շունչից հայոց աշխարհի լեռների լանջերի ձիւնն է հալւում, հողից պայթում են գարնան շաղոտ ժպիտով՝ կապոյտ, սպիտակ, կարմիր ձնծաղիկները: Մի պահ կանգնի՛ր ծաղիկի դիմաց, նրանց գարնանային հէքիաթային սքանչանքից պիտի արբենաս, դու էլ գարուն պիտի դառնաս, քու սիրտն էլ ալեծածան կարմիր պիտի ծաղկի: Գարունը իր բոյրն է յորդել նրանց ծաղկաբոյլերում, թերթիկների սրտիկներին, որ նրանց հոգիներին արբեցում ծփար:*

*Գարունը իր քնքուշ զեփիւռի շունչն է փչում հանդերին, որի թովչանքից թռչունների երամներն են գալիս՝ գարուն երգելու: Քու աշխարհի հէքիաթ գարնանը ծիծառներն են վերադառնում իրենց նոր բոյները հիւսելու, յիշո՞ւմ ես երկնի կապոյտը ճեղքած նրանց լոյսային թռիչքը քու ոստանի երկնքում, ծիծաղի ձայնը նրանց: Գարունը կռունկների երամների հէքիաթը չի՞ բերում արդեօք, որոնց պանդուխտները աղաչում էին խապրիկ մը բերել իրենց աշխարհից: Հապա հէքիաթ չէ՞ արդեօք խօսել կռունկների հետ, կարօտած սրտի կանչերը ճամբել:*

*Գարնանը բոցավառուող վարդերը, իրապէս գարնանային հէքիաթ են: Վարդ, դու գարնանային արեւի բոցերից բռնկած ծաղիկ չե՞ս արդեօք: Այդ ո՞րտեղից, ինչպէ՞ս է, որ կարմիր ես հագել: Ծի՞շդ է արդեօք, որ աստղերի կրակալոյս դէմքով, տիեզերական սիրոյ հուրը աչքերին, գեղեցկութեան ծաղկազարդ դիցուհին՝ Աստղիկը, հայոց աշխարհի սրբազան Արածանի գետի ափերի սպիտակ վարդաստանների վրայով ճախրելիս, վարդափշերը ծակել են ամպոտ, ձիւնոտ ոտքը, կարմիր արեան հուրը ծորել վարդերի թերթիկներին, սիրոյ բուրմունքն է հոսել նրանց սրտիկներին՝ գարնանային սիրոյ հէքիաթ-ծաղիկներ են դարձել: Սոխակները նրանց թերթերին բազմած, սիրոյ մեղեդիներ են հնչում, ունկնդրե՞լ ես նրանց գարնան փառատօնի խրախճանքի համանուագը: Ամէն գարնան, բանաստեղծներ կարմիր վարդեր են դնում սիրոյ երգիչ Սայաթ Նովայի դամբարանում հանգչող սիրող սրտին:*

*Գարնան հէքիաթ է անձրեւը, հեշտագին ցօղում դէմքը մոլորակի: Անձրեւը Աստուծոյ օրհնութիւնն է, մոլորակի կեանքի շունչը: Դո՛ւրս արի պատշգամբ, նայիր իջնող անձրեւի կաթիլներին, լոյս կայ նրանց մէջ շաղուած, նրանք տիեզերքի գարնանային երգն են բերում մոլորակ, իրար ամեհի ճակատող ամպերի պայթիւնի շանթերի կրակալոյսը գրկած՝ ժպտում են քեզ: Դո՛ւ էլ ժպտայ անձրեւին, սիրտդ թող խայտայ նրա թովչանքի սքանչանքից:*

*Գարունը հէքիաթ էր փռում Մուսաների պաշտամունքի լեռան վրայ, կանաչ-կանաչ ծաղկազարդ պատումճան էր փռում այգիներին, պարտէզներին: Նրա գարնանային ցորեանի կանաչ դաշտերի ծփանքով է արբեցել մանուկ հոգիս, վազվզել նրա մեղմիկ ալիքների վրայով, վազվզել քաղելու այնտեղ ծաղկած ճըպլանի կարմիր ծաղիկները: Արեւն էր արծաթ վարսերով շոյում մանուշակի կապոյտով բոցավառուած լեռան լանջերը: Կարծես լուսինն էր իջել՝ իր դէմքի սպիտակով ցօղելու ղափնի ծառերը, սպիտակ համբոյրով այն գգուելու: Արի՛ գնանք նրա գարնանային հէքիաթի հրավառութիւնը դիտելու: Նարնջենիները իրենց սպիտակ աչուկներն էին լոյսին բացել, ժպտում իրենց ոսկեհուր առէջների հրացոլքով: Արեւն էր իջել նորաշխարհենիների ծառերին, խարոյկ է վառւում այնտեղ, քաղի՛ր կրակը նրա, գարուն կը հոսի քու սրտում: Գարուն էր իջնում շինականների սրտերին, արեւային ժպիտ էր պոռթկում իրենց դէմքերից, գարնանային խաղաղութիւն էր իջնում մուսաների լեռան լանջերին բազմած շէներին:*

*Հապա՜, գարնանային գիշերը հեշտագին, մտի՛կ արա բանաստեղծ Վահան Թէքէեանին՝ ինչպէ՜ս*

*Շար.ը էջ 19*

# ՄԻ ՑՈՒՑԱՆՄՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ՋՈՒԹԱԿԸ

***ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆԵԱՆ***

*Ջութակը Դերենիկ Դեմիրճեանի թուլութիւնն էր: Գրողի տուն-թանգարանում՝ իր անձնական իրերի շարքում, կարելի է տեսնել նաեւ նրա ջութակը, որը ստրադիւարուսեան դպրոցի եզակի նմուշ է: Նոյն թանգարանում պահւում է նաեւ Դեմիրճեանի ֆրակը, որը նա հագնում էր գործիքը նուագելիս. Դեմիրճեանն այն կարծիքին էր, որ ջութակի հետ «յարաբերուելիս» անհրաժեշտ էր համապատասխան հագուկապ ունենալ: Իսկ ջութակի նկատմամբ սէրը Դեմիրճեանի մօտ ծնուել էր դեռեւս մանկութեան տարիներին:*

*Նրա ինքնակենսագրականում կարդում ենք. «Իմ ազատ եւ անձնական պարապմունքներին միացաւ նաեւ մի նոր ձգտում, որ մանկութիւնից ունեցել եմ. դա երաժշտութիւնն էր: Ռուսական զօրքերի շարունակական հարեւանութիւնս, թէ Ախալքալաք եւ թէ Արտահան նրանց զինուորական օրքեսթների շարունակական հնչիւնները ականջումս, հօրեղբօրս տան տնային աշուղների եւ տնեցիների ամէնօրեայ նուագներն ու երգերը, ռուսական օփերաների, համերգների մոլի այցելութիւններս եւ, վերջապէս, Վրթ. Փափազեանի ջութակը, որ ազդել էր այն աստիճան, որ ինձ բերեց մի վճռի. ջութակ սովորել եւ թողնել թարը: Ասելս ու անելս մէկ եղաւ. սկսեցի դասեր առնել եւ կարճ կապեցի. գնացի Մոսկուա եւ նուիրուեցի երաժշտութեան: Ջափազանց պարապմունքներից նեարդային հիւանդութիւն ստանալով՝ վերադարձայ Թիֆլիս»:*

*Յայտնի է, որ 1900-ականների սկզբին երաժշտութիւն ուսումնասիրելու նպատակով նա մեկնում է Մոսկուա: Այնտեղից Յովհաննէս Թումանեանին ուղղուած մի նամակում Դեմիրճեանը գրում է. «Այս մի քանի օրերս մտնելու եմ երաժշտական դպրոց, որպէսզի այս կիսամեակը չկորցնեմ: Ջութակի կողմից բանս լաւ է գնում՝ շնորհիւ ուսուցչիս»:*

*Սակայն Դեմիրճեանն իր սիրելի ջութակի հետ դեռ էլի ուղի ունէր անցնելու: Երբ նա մեկնում է Շուէյցարիա, այստեղ եւս չդիմանալով ազնուական գործիքի գայթակղութեանը, ընդունւում է կոնսերվատորիա, բայց, քանի որ կրթութիւնը մեծ ծախսեր էր պահանջում, իսկ ինքն այդ հնարաւորութիւնը չունէր, ստիպուած է լինում թողնել ուսումը: Ամենայն հաւանականութեամբ, թանգարանում ցուցադրուող ջութակը Դեմիրճեանը գնել էր հենց Ժնեւից, քանի որ տարիներ անց մի օրագրային գրառման մէջ նա նշում էր, թէ Ժնեւում ջութակները բաւականին թանկ արժէին՝ մօտ 1000 ռուբլուն համարժէք գումար:*

*Ու թէեւ Դեմիրճեանը ստիպուած էր եղել թողնել ուսումը, այնուամենայնիւ, ջութակից ու երաժշտութիւնից հրաժարուել չէր կարող: Ջութակը դառնում է նրա ընկերը, ապաւէնը, անգամ՝ կերակրողը: Յայտնի է, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին, որպէսզի կարողանար պահել իր ընտանիքի անդամներին, Դեմիրճեանը կրկին ձեռքն է վերցնում ջութակն ու երաժշտութեան մասնաւոր դասեր տալիս՝ որոշակի գումար վաստակելու համար:*

*Հնարաւոր է՝ եթէ Դեմիրճեանը չդառնար գրող, մենք ճանաչէինք ջութակահար, երաժիշտ Դեմիրճեանին: Ամէն դէպքում, նա կարողացել է հիացնել եւ յուզել նաեւ ջութակի միջոցով: Ահա թէ ինչ ենք կարդում Գ. Սունդուկեանի անուան թատրոնի դերասանուհի Գայիանէ Աւետիսեանի յուշերում Դեմիրճեանի եւ նրա նուագի մասին. «□Նա վերցրեց ջութակը եւ ասաց. «Դուք գնացէք ճաշասենեակ եւ այնտեղից աւելի լաւ կը լսէք իմ նուագը»: Ես գնացի, եւ նա սկսեց նուագել «Ալմաստ» օփերայից Աշուղի արիան: Ես այդ պահին կարծես վերացել էի աշխարհից, ուղղակի հրաշք էր, եւ ես ցանկացայ դռան ճեղքից նայել ու համոզուել՝ իրո՞ք նա էր նուագում, եթէ այո, ինչու՞ ինձ ասաց՝ գնացէք ճաշասենեակ: Եւ ես համոզուեցի, որ իսկապէս ինքն էր նուագում, բայց ինչպիսի՜ դէմքի միմիկա ունէր, հնարաւոր չէ նկարագրել: Ես անմիջապէս հեռացայ դռնից, որպէսզի այդ տպաւորութիւնը միշտ մնայ ինձ համար՝ որպէս մի գեղեցիկ յուշ»:*

*Եւ պատահական չէ, որ որոշ գրականագէտներ մինչեւ օրս էլ համոզուած պնդում են, թէ հենց ջութակի հանդէպ ունեցած մեծ սէրն ու ջերմ զգացողութիւնն են Դեմիրճեանին մղել ստեղծելու իր յայտնի գործերից մէկը՝ «Ջութակը եւ սրինգը» պատմուածքը:*

*Աղբիւր՝ ՀԵՏՔ*

## «ՀՄՄ»Ի ՖՈՒԹՊՈԼԻՍՏՆԵՐԸ ՅԱՂԹԱԿԱՆ



Ուրախութեամբ տեղեկացանք ՀՄՄ ֆութպոլի տղոց նախորդ երկու շաբաթներու յաղթական արդիւնքներու մասին՝

PASADENA ADULT LEAGUE- ի մէջ.-

Ա. խաղ- ՀՄՄ-SCI-ARC 2-1 յաղթական արդիւնքով (10 Մայիս, 2015)

Բ. խաղ - ՀՄՄ-Grandma's Boys FC 6-2 յաղթական արդիւնքով (17 Մայիս, 2015)

Իսկ անցնող շաբաթավերջին ՀՄՄ-ի տղոց ֆութպոլի խումբը կրկին յաղթական դուրս եկած է CLUB ATHLETHICO խումբին դէմ, 6-2 արդիւնքով: Սոյն խաղի կոլերը նշանակողներն են Ռաֆֆի Ջատուրեան, Շահէ Կիւտէչեան, Շանթ Սիմոնեան, Ռոնի Պարսամեան եւ Ալէքս Գոճապապեան:

Կը շնորհաւորենք բոլոր մեր մարզիկները, մաղթելով յարատեւ յաղթանակներ եւ կորով:

## ՉԱՓԱԶԱՆՑ ԳԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ ԿՐՆԱՆ ՆՈՅՆԱՆՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՆԱԼ

Արդի կեանքի պայմաններով դժուար է օր անցընել առանց մէկու մը հետ խօսելու կամ յարաբերելու: Համացանցի եւ հեռաձայններու դրութիւնը առիթ կու տայ որ անընդհատ կապի մէջ մնանք մեր ընկերներուն, աշխատակիցներուն եւ ընտանիքի անդամներուն հետ: Այս երեւոյթը նպաստաւոր է, որովհետեւ ըստ նորագոյն հետազօտութիւններուն՝ ընկերային կապերը օգտակար են առողջութեան համար:

Նոյն հետազօտութիւնները նաեւ պարզած են թէ մեկուսացումը կրնայ նոյնքան վնասակար ըլլալ որքան չափազանց գիրութիւնը կամ obesity-ն: Այս հետազօտութիւններուն նորագոյնը կատարուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գտնուող «Պրիկհէմ Եանկ» համալսարանին կողմէ: Ուսումնասիրութիւնը տեւած է մօտաւորապէս 35 տարի: Այս ընդարձակ ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան երեք միլիոն անձեր, իսկ արդիւնքներուն շնորհիւ գիտնականները յայտնաբերած են, թէ առանձին ապրելու պարագային անհատին մօտ կրնայ բարձրանալ 32 տարի կանուխ մահանալու հաւանականութիւնը, մեկուսացման պարագային՝ 29 տարի, իսկ մենակ զգալու պարագային՝ 26 տարի:

Այս ծիրին մէջ Շիքակոյի համալսարանի հետազօտական խումբին կողմէ կատարուած ուսումնասիրութիւնները պարզած են, թէ՝ մեկուսացումը կը բարձրացնէ մարմնին մէջ գորդի զոլի քանակը, որ կրնայ բարձրացնել սրտի եւ ուղեղի կաթուածի վտանգը: Այս ուսումնասիրութիւնը նաեւ պարզած է, թէ՝ մեկուսացումը կրնայ նոյնքան վնասակար ըլլալ առողջութեան որքան չափազանց աղքատութիւնը: Մեկուսացումի եւ առողջապահական հարցերու, ինչպէս նաեւ կանուխ մահանալու կապը նոյնքան զօրաւոր է թէ՛ կիներու եւ թէ՛ տղամարդոց պարագային:

## ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ ԲԱՒԱԿԱՆ ՓՈԽՈՒԱԾ Է 80 ՏԱՐԻՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԻՆ

Մարդ արարածը իր գոյութեան առաջին օրէն իսկ ջանացած է ուրախ դառնալ: Ուրախութիւնը միշտ եղած է մարդ արարածին գերագոյն նպատակը, իսկ ուրախութիւնը պահպանելը՝ անոր երազը: Որքան փոփոխութեան ենթարկուին կեանքի տուեալները, մարդոց առօրեան եւ որքան զարգանայ աշխարհը, մարդ արարածը միշտ մտահոգ պիտի ըլլայ իր ուրախութեամբ:

Մօտաւորապէս ութսուն տարիներ առաջ Միացեալ Թագաւորութեան մէջ գտնուող Պոլթըն շրջանին մէջ 226 անձերու մասնակցութեամբ կատարուած հետազօտութիւն մը պարզած է թէ 1938 թուականին ուրախութեան ամէնէն շատ նպաստող երեք գործօններն էին՝ կրօնքը կամ հաւատքը, իրազեկութիւնը եւ ապահովութիւնը:

2014 թուականին հոգեբան Սէնտի ՄաքՀիու կրկնած է այս հետազօտութիւնը եւ մասնակիցներուն հարցուցած է նոյն հարցումները, որոնց շնորհիւ յայտնաբերուած էին 1938 թուականին կատարուած հետազօտութեան արդիւնքները: Մաք Հիուի կատարած հետազօտութեան արդիւնքները կը պարզեն թէ ապահովութիւնը տակաւին կը նկատուի ուրախութեան նպաստող հիմնական գործօնը, սակայն կրօնքի եւ իրազեկութեան փոխարէն ներկայիս սրամտութիւնը եւ հանգստանալու առիթները կը նկատուին ուրախութեան նպաստող գործօններ: 1938 թուականին կրօնքը կը գրաւէր ուրախութեան նպաստող գործօններու ցանկին երրորդ դիրքը, սակայն 2014-ին ան գրաւած է տասներորդ դիրքը:

Այլ հետաքրքրական տարբերութիւն մը, որ պարզուած է այս հետազօտութեան շնորհիւ այն է, որ ութսուն տարիներ առաջ Պոլթընի բնակիչները ամենէն շատ ուրախ կը զգային երբ գտնուէին իրենց շրջանին մէջ: Սակայն, 2014 թուականին Պոլթընի բնակիչներուն 63 առ հարիւր համեմատութիւնը ուրախ կը զգայ երբ Պոլթընէն դուրս գտնուի: Հետաքրքրական է նաեւ թէ 1938 թուականին Պոլթընի բնակիչներուն 40 առ հարիւրը համոզուած էր որ բախտը կարեւոր գործօն է ուրախութեան համար, սակայն 2014 թուականին

## ՈՒՏԵԼԻՔՆԵՐ ՈՐՈՆՔ ԿԸ ՊԱՀՊԱՆԵՆ ԳԵՇԵՐՈՒԱՆ ՔՈՒՆԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Տասնամեակներէ ի վեր բազմաթիւ հետազօտութիւններ կը կատարուին հոգեբանական մարզին մէջ՝ յայտնաբերելու համար թէ ինչո՞ւ մարդիկ կը քնանան, ինչո՞ւ մարդիկ կարիքը ունին առնուազն 7 ժամ քնանալու օրական դրութեամբ, ի՞նչ կը պատահի, երբ անքուն մնանք եւ բազմաթիւ այլ հարցերու պատասխանը՝ գիշերուան քունի կարեւորութեան եւ անոր բացակայութեան հետեւանքներուն մասին:

Հակառակ կատարուած լայնածաւալ ուսումնասիրութեան, հոգեբաններ եւ գիտնականներ տակաւին չեն յաջողած պարզել քնանալու առնչուած բոլոր գաղտնիքները: Սակայն, այսօր կարելի է գիտականօրէն բացատրել թէ գիշերուան քունը անհրաժեշտ է վերականգնելու համար մարմնի եւ ուղեղի բջիջներու առողջութիւնը եւ բնական ընթացքը: Գիշերուան հանգիստ քունը նաեւ առնչուած է կարգ մը քաղցկեղներու հաւանականութեան նուազումին: Հետաքրքրական է, թէ՝ գիշերուան քունը բարենձեւ կը պահէ մարմինն ու միտքը: Ուսումնասիրութիւնները նաեւ պարզած են, թէ՝ չափահասներու պարագային օրական եօթը ժամէն պակաս գիշերուան քունը կրնայ պատճառել սրտանօթային առողջապահական խնդիրներ, շաքարախտ եւ ընկճուածութիւն:

Դժբախտաբար, արդի կեանքի պայմանները թոյլ չեն տար, որ մարդիկ բաւարար քուն ստանան օրական դրութեամբ: Յաճախ մարդիկ կը փորձեն կէսօրէ ետք քնանալ վերանորոգելու համար իրենց ուժը, սակայն հետազօտութիւնները պարզած են, թէ՝ կէսօրէ ետքի քունը այնքան օգտակար չէ, ինչքան գիշերուան բաւարար քունը: Այս ծիրին մէջ հետազօտութիւնները պարզած են թէ ուսանողներու մօտ բաւական քիչ են քնանալու ժամերը, իսկ այս երեւոյթին հետեւանքները՝ բաւական շատ:

Արդի կեանքի պահանջքներու կողքին, անհատին սովորութիւնները եւս կրնան հիմնական խոչընդոտ հանդիսանալ բաւարար ձեւով քնանալու համար: Հոգեբաններ, ինչպէս նաեւ սննդագէտներ կը շեշտեն թէ օրուան ընթացքին մարդու սպառած ուտելիքները կրնան ազդեցութիւն ունենալ գիշերուան քունի մակարդակին վրայ: Յատկապէս կարեւոր է ուշադրութիւն դարձնել ընթրիքի ժամանակ սպառած ուտելիքներուն:

Ուտելիքի առնչուած հետեւեալ խորհուրդները կրնան օգտակար դառնալ պահպանելու համար գիշերուան քունի մակարդակը եւ կանխարգիլելու քունի առնչուած անհանգստութիւնները.

-Գիշերուան ուշ ժամերու ընթացքին ճաշարանի մէջ ընթրիքի ժամանակ հեռու մնալ կարմիր միսով պատրաստուած ուտելիքներէն: Այս պարագային նախընտրելի է ուտել ձկնեղէն եւ բանջարեղէն: Թելադրելի է նաեւ քիչ քանակով սպառել զանոնք:

-Տան պարագային, թելադրելի է ընթրիքի ժամանակ ճաշացուցակին մէջ ընդգրկել ոսպ, ստեպղին եւ ազատդեղ, որոնք թէ՛ հարուստ են սնունդով եւ թէ՛ դիւրին կը մարսուին:

-Ընթրիքի ժամանակ թելադրելի է, որ առաւելագոյնը երկու գաւաթ գինի սպառել, որովհետեւ գինիին մէջ գտնուող շաքարի բարձր քանակը կրնայ նուազեցնել քունի մակարդակը:

-Ընդհանրապէս հեռու մնալ չափազանց կծու, թթու եւ քաղցր ուտելիքներէ, որոնք կ'երկարեն եւ կը դժուարացնեն մարսողութեան գործընթացը:

-Տուրմի երկրպագուներուն համար թելադրելի է, որ մակնիզիումով հարուստ այս ուտելիքը սպառել առաւօտեան: Նոյնիսկ մուգ տուրմը կրնայ խախտել արեան մէջ շաքարի քանակը եւ հետեւաբար խանգարել գիշերուան քունը:

-Կարելի է սպառել թարմացնող եւ քնաբեր ուտելիքներ, ինչպէս՝ մածունը, բրինձը, ձկնեղէնը, ճակնդեղը, եւ ստեպղինը:

-Առաւօտեան անպայման նախաճաշել եւ անոր մէջ ընդգրկել ուժանիւթով հարուստ ուտելիքներ, ինչպէս՝ հաւկիթը, պիստակեղէնը, ձաւարը, հատիկները, եւայլն: Ընդհանրապէս պէտք չէ բաւարարուիլ սուրճով կամ քաֆէինով հարուստ ըմպելիներով, որոնց հետ միասին յաճախ կը սպառենք քաղցրեղէններ:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՅՈԼՈՎՈՅԹԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*ծիածանուած այն արշալոյսն էր, որ կոթողեց համուր հայութիւնը. մեծ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի իսկ լաւատեսութեամբ՝ «Որբի եւ ողբի հայրենիքը» ողջունեց «Յոյսի եւ լոյսի» ցնծատօնը: Իսկ հիմնականը այն շղթան է, որ հետագային օղակուեցաւ երկրորդ եւ երրորդ հանրապետութիւններով՝ միահիւսելով մեր պատմութեան ամբողջական եւ օրինաչափ իրերայաջորդ փուլերը: Ուրեմն՝ Սարդարապատի հերոսամարտին հիմնաքարով կառուցուած առաջին հանրապետութիւնը եղաւ յենասիւնը երկրորդ հանրապետութեան, որ 1920-1991 թուականներուն ամրապնդեց պետականութեան կառոյցները պինդ հիմքերու վրայ եւ անոր յաջորդած երրորդ հանրապետութիւնը ինքնին տրամաբանական շարունակութիւնն է նախորդներուն: Ինչ հեգնանք, ոմանք զարմանալի պնդաճակատութեամբ առաջինը կը տարփողեն, երրորդ հանրապետութիւնը դիտաւորեալ կը կոչեն երկրորդ՝ արհամարհելով 70-ամեայ այն ոսկէ օղակը, որուն ժամանակաշրջանին Հայաստանի արդիւնաբերութիւնն ու գիտութիւնը, մշակոյթն ու ենթակառոյցները, կրթութիւնն ու հոգեմտաւոր բնագաւառները արձանագրեցին աննախադէպ յաջողութիւններ: Մեբօրեայ հանրապետութեան բարիքներուն մեծ մասը արդեօ՞ք երկրորդ հանրապետութենէն ժառանգուած արժէքներ չե՞ն: Ծայրայեղութիւնը իր չափազանցուած դրսեւորումով անհեթեթութեան չի՞ մօտենար միթէ:*

*Աշխարհի վրայ բազմաթիւ ժողովուրդներ կան, որոնք զուրկ են պետականութենէ. մինչ՝ կան փոքրաթիւ եւ համեստ թուաքանակ ունեցող ժողովուրդներ, որոնք տէր են պետականութեան:*

*Անոնք իրենց դիրքը ունին միջազգային ընտանիքին մէջ եւ հպարտութեամբ կը տողանցեն համաշխարհային ասպարէզին մէջ՝ թէկուզ եթէ խոնարհ են տարածքով եւ հեղինակութեամբ: Մենք՝ բարձրաճակատ հանդէս կու գանք ուր որ անկ է, քանզի ունինք պետականութիւն եւ անկախ հանրապետութիւն: Այդ հոգեկան յաղթանակին սկիզբը դրուեցաւ 28 Մայիս 1918-ի պանծալի թուականին, երբ հայ ժողովուրդը արեամբ եւ անհաւասար մաքառումով իր սեփական օճախը վառեց թէպէտ իր հայրենիքին մէկ փոքր հատուածին վրայ միայն:*

*Մայիս 28-ը մեր նորագոյն պատմութեան առաջին լուսաւոր էջն է, որովհետեւ մեր այսօրուան բոլոր նուաճումները, մեր գոյութիւնը եւ մեր վաղուան արշալոյսները կը պարտինք պետականութեան հոլովոյթի առաջին՝ բայց պատասխանատու քայլին:*

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 6-էն*

*մարտերու ընթացքին աչքի զարկին հրամանատարներ, Խորհրդային Միութեան հերոսներ, Բաբաջանեանը, Գասպարեանը եւ ուրիշներ:*

*Վերոյիշեալ հերոսներու կողքին կարելի չէ մոռնալ անունները Խորհրդային Միութեան մարաջախտ Յովհաննէս Բաղրամեանի, ռազմա-ծովային ուժերու ծովակալ Իսակովին, օդային ուժերու մարաջախտ Արմենակ Խանփերյեանին, ինչպէս նաեւ Ջեխոսլովաքիոյ ազատագրիչին՝ Սարգիս Մարտիրոսեանին, եւ անշուշտ կան բազմաթիւ ուրիշներ:*

*Ճափոնական ռազմամոլներու ջախջախման մասնակցեցան հրամանատարներ Բարսեղովը, զօրավար Ջայլախեանը եւ ուրիշներ:*

*Ֆաշիստական Գերմանիոյ դէմ մղուած պայքարին մէջ անմասն չմնաց նաեւ սփիւռքահայութիւնը: Ան հայրենասիրաբար միջոցներ գտաւ «Սասունցի Դաւիթ» եւ «Բաղրամեան» հրասայլային շարասիւններ կառուցելու համար:*

*Սփիւռքի հայերէն շատեր զէնքը ձեռքին կռուեցան դաշնակիցներու բանակներուն (ամերիկեան եւ ֆրանսական) մէջ:*

*Այսպէս, համաշխարհային Բ. Պատերազմին պատւով կատարելով իր պարտքը, հայ ժողովուրդը խորհրդային բանակի շարքերուն մէջ ունեցաւ վաթսուն զօրավարներ, իսկ խորհրդային միութեան հերոսի կոչման արժանացան հարիւր ռազմիկներ:*

## «ՆԻՒ ԵՈՐՔ ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ

*Շարունակուած էջ 7-էն*

*անհատներու, կազմակերպութիւններու եւ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցած երկիրներու ներկայացուցիչներու, շատ տեղին պիտի ըլլար յարգանքի տուրք մատուցանել նաեւ 2004-2006 թուականներուն Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Ճոն Էվընսին, որուն դիւանագիտական ասպարէզը ընդհատուեցաւ, երբ Պուշի վարչակազմը զայն ետ կանչեց Հայոց Ցեղասպանութիւնը հրապարակաւ ճանչնալուն համար: Ձեռնարկին կազմակերպիչները «Քալիֆորնիա Քուրիըր»-ին հաւաստիացուցին, որ «Անտեսելու նպատակ չեն ունեցած» եւ ատիկա պարզապէս «վրիպում» էր:*

*Բարեբախտաբար, այս կոպիտ սխալը յաջողեցաւ քիչ մը մեղմել, երբ «վրիպումը» յայտնուեցաւ հանդիսավարի՝ փաստաբան Մարք Կիրակոսի ուշադրութեան, որ ամբիոնէն յայտարարեց դեսպան Էվընսի ներկայութեան մասին: Հարիւրամեակի ձեռնարկին ներկայ 2000 հիւրերը յոտնկայս եւ բուռն ծափահարութիւններով ողջունեցին արդարամիտ դեսպանը: Աւելորդ է անգամ նշել, որ դեսպան Էվընս շատ աւելին արժանի է, քան սոսկ ծափահարութիւններու՝ իր ասպարէզը ի պաշտպանութիւն Հայ դատի զոհաբերելուն համար:*

SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save
Support
Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

## ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*նակցութիւնը կը բերէ ազգայինմիութենական կեանքին:*

*Իմ մասին, անհամեստաբար ըսեմ որ Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը աւարտելէս ետք Պէյրութի Ամերիկեան Համալսարանին (A.U.B.) մէջ մասնագիտացած եմ «Միջին Արեւելքի եւ Օսմանեան Կայսրութեան Պատմութեան» մէջ, իսկ Նորթրիճ Համալսարանին (CSUN) մէջ՝ Մանկավարժական Վարչագիտութեան: 2014-ին, իմ կրթական, մշակութային, երիտասարդական, ընկերային, կուսակցական, եկեղեցական եւ համայնքային այլեւայլ գործունէուններուս 50-ամեայ Յոբելեանականս տօնուեցաւ «Տաղլեան Մշակութային Կեդրոն»ին մէջ, ուր աւելի քան 650 հրաւիրեալներ ներկայ էին:*

*Խումբին ընկերակցող տեղացի առաջնորդը, Խրիմցի Թաթար Իսա Լէվէնդ Կիւրչաւտէն էր: Մեծ մայրը Յոյն եղած է: «Ես ձեզ շատ լաւ կը հասկնամ, ըսաւ, քանի որ մենք ալ Խրիմէն աքսորուած ենք եւ մեր հողերը կորսնցուցած:» Իսան շատ լաւ գիտէր մեր պատմութիւնը, եւ ինչ որ հայկական էր, մեզի կ՚ըսէր որ հայկական է: Շատ ազնիւ էր մեր հետ եւ ամէն բան շատ լաւ կը բացատրէր:*

*Ուխտագնացներու շատ ազուոր խումբ մըն էր մերինը: Կարծէք խումբի անդամները կ՚ուզէին գիրար գերազանցել իրարու օգնելու, օրը լաւ անցնելու մարմաջով:*

*Ջերմօրէն կը յանձնարարեմ, որ իւրաքանչիւր հայ անպայման Արեւմտեան Հայաստան այցելէ, եւ եթէ կարելի է, նախընտրաբար Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեանի կազմակերպած խումբերով: Շատ անհրաժշտ կը նկատեմ որ մեր «ազգային ղեկավար»ները, «ազգին ջոջերը», կղերականները, մանաւանդ խմբագիրները, քաղաքական, կուսակցական, միութենական, կրթական եւ այլ մարզերու ղեկավարներն ու գործիչները, ինչպէս նաեւ մեր հայկական երկրորդական վարժարաններու աշակերտները ներկայ Հայաստանի կողքին անպայման այցելեն Արեւմտեան Հայաստան մեր ունեցած կորուստներու ահագնութիւնը մասամբ հասկնալու: Քարտէզներու վրայ նայելով միայն մտային թեթեւ գաղափար մը կրնանք կազմել կորուստին ահաւորութեան մասին:*

*Գացինք: Տեսանք: Յուզուեցանք: Հայկականութեամբ վերամկրտուեցանք:*

## ԳԱՐՆԱՆ ՀԷՔԻԱԹ

*Շարունակուած էջ 17-էն*

*է նա շշնջում գարնան երգը.*

Օ՜ այս գիշերը գարնան՝
Ի՜նչ անուշ է, ի՜նչպէս լաւ...
Ի՜նչ հեշտանքով կը սարսռան
Սիրտերն անոր պատճառաւ...
Կարծես աստղի փշրանքներ
Կան օդին մէջը հալած,
Երկնի վրայ դրախտ մը սէր
Կարծես թափած է Աստուած...
Գարնան շունչը կը տեսնեմ
Ձեզ թռչտող ամէն տեղ՝
Հոգիներու պէս անմեղ...
Եւ կը տեսնեմ՝ լուսաճեմ,
Քեզ ալ, տղու իմ հոգիս,
Որ համբուրել կուգաս զիս...

Եւ նաեւ Թէքէեան բանաստեղծի գարնան գիշերուայ երգը՝
Օդը գաղջ է այս գիշեր՝ առագաստի մը նման,
Կարծես յանկարծ երկնքին մէջ աստուածները ոսոխ,
Եղբայրացած ըլլային... ու ծաղիկներին ոտնակոխ
Մեղմիւ հոգի առնէին . . . եւ կոյսերուն՝ աւետման երեւնային հրեշտակներ, մեծ շուշաններ ի ձեռին...
Օդն այս գիշեր այնպէ՛ս գաղջ, այնպէ՛ս քաղցր է ու խաղաղ՝
Որ աշխարհի վրայ կարծես, միայն սէրեր կան չքնաղ
Ու շուրթէ շուրթ համբոյրներ միայն, կարծես, կը թռին:

Օդը քաղցր է... Եւ ահա՛ այս քաղցրութեան մէջ աննման՝
Օղակ-օղակ, երկինքէն իջնող օձի մը յանգոյն՝
Կ՝իջնայ վրաս մտածումն Արհաւիրքին գերագոյն:

Հո՛ն միլիոններ այս պահուս, կատաղութեամբ մ՝անսպառ,
Մահ կը տեղան միմեանց վրայ
... Անթիւ մայրեր հոն կ՝ուլան...
Հո՛ն Հայ աշխարհը կ՚ըլլայ լոիկ դամբարանն Հայութեան...

Հապա՛, գարնան Մայիսի արեւին ժպիտը, լսի՛ր բանաստեղծ Ռուբէն Որբերեանի Մայիսի երգի շշնջիւնը՝
Արեւն այստեղ ժպիտ ցանեց,
Ծիծեռնակը բերաւ գարուն,
Ծիածան կայ ամպի վրայ,
Գոյնը տեղն է մեր վարդերուն:

Ջմրան հովերն անցա՛ն, գացի՛ն,
Մայիսը սիւք բերաւ մեզի,
Կապոյտ մը ջինջ ու հրնուագին,
Վճիտ վտակն ալ կը հոսի:

Կը մտածեմ աչքս արցունքով,
Թէ հեռու եմ ես այս տարի.
Թէ իմ մենիկ տապանին քով,
Մայիսին վարդը չի տարի:

Տարտամ նայուածք մը կ՝ուղղեմ հոն,
Սիրտս հետեւի այն թռչունին,
Ամպամած է այն հորիզոն,
Հատնողները Մայիս չունին...:

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

# ՅՈՒՇԱՏՕՆ
## COMMEMORATION

Նուիրուած

**Հայ Ազգի Քսան Հնչակեան Անմահներու**
Նահատակութեան 100-րդ Տարելիցին

Կազմակերպութեամբ՝
*Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի*

ԲԱՆԱԽՕՍ
Հասարակական Գործիչ՝ **Սարգիս Հացպանեան**

Խօսք կ՚առնէ Ս.Դ.Հ.Կ.ի Կեդրոնական Վարչութեան Ատենապետ՝
**Յակոբ Տիգրանեան**

Գեղարուեստական Ճոխ Յայտագիր
Մասնակցութեամբ՝
*Սիփան Երգչախումբ Ղեկավարութեամբ Հենրիկ Անասեանի*
*Յարութ Յակոբեանի, Առնօ Մկրտչեանի, Սալբի Մայիլեանի,*
*Անահիտ Ներսիսեանի, Նունէ Աւետիսեանի*

## Կիրակի Յունիս 14, 2015

Կլենտէյլի *Ալէքս Թատերասրահէն* ներս
216 N. Brand Blvd. Glendale, CA 91203 Կ.Ե. ժամը **5:30**-ին

## 100th Anniversary of the Armenian Nation's Twenty Hunchakian Martyrs.

Organized by
S. D. Hunchakian Party Western USA Executive Committee

Keynote Speaker
**Sarkis Hatspanian**

Remarks by Central Committee Chairman of the Social Democrat Hunchakian Party
**Hagop Dikranian**

Special Musical and Literary Performances
Sipan Choir – Diector Henrik Anasyan
Harut Hagopian, Arno Mkrtchyan, Anahit Nersisyan, Salbi Mailian, Nune Avetisyan

## Sunday, June 14, 2015

Alex Theatre 216 N. Brand Blvd. Glendale, CA 91203
Starting at 5:30 pm

**Մուտքը Ազատ**
*Ձեր տեղերը ապահովելու համար հեռաձայնել*
*To reserve seats please call*

**Free Admission**
**818.391.7938**